1593
5 VIII 7



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1906 № 1 ՅՈՒՆՈՒԱՐ

ԹԻՖԼԻՍ 1906

1906 ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ 1906

Բացուած է բաժանորդագրութիւն

ԼՈՒՄԱՅ

Դրական, բաղաքական, պատմական եւ հանրային

ԱՄՍԱԳՐԻ

ԼՈՒՄԱՆ ՑՈՒՆՈՒԱՐԻՅ ԿՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀԵՏԵՒԵԱԼ ԼԻԱԿԱՏԱՐ ԾՐԱԳՐՈՎ.

1. Ինքնուրոյն և ռուսերէնից ու օտար լեզուներից թարգմանուած վէպեր, պատմուածքներ և ոտանաւորներ· այլ և կենսագրութիւններ:
2. Կովկասագիտութեան վերաբերեալ ամեն տեսակ պատմական վաւերագրեր և յօդուածներ:
3. Ճանապարհորդութիւններ և ժողովրդի կենցաղի նկարագիրներ:
4. Բարոյագիտական յօդուածներ:
5. Մատենախօսութիւն և կրիտիկա գրական երկերի:
6. Ներքին տեսութիւն:
7. Քաղաքական տեսութիւն.
8. Այլ և այլք. տեղեկութիւններ գիտութիւնից և արուեստից:
9. Խմբագրութեան պատասխաններ:
10. Ցայտարարութիւններ:

«ԼՈՒՄԱՅ»-ին կաշխատակցեն մեր հետեւեալ աշխատակիցները.—Օր Նուարդ Աղանեան, ս. ս. Զապէլ Շիլինկարեան, Տիրուհի Կոստանեան, պ. պ. Ստրպեռ, Արշակ Շիլինկարեան, Արշակ Շուպանեան, Բենիկ վարդապետ, Դարենցիբարեան, Գրիգոր Վանցեան, Երուանդ Զահազիզ, Իսահակ Ցարուրիւնեան, Իւրիյ Վիսելովսկի, Կարապետ Կոստանեան, Միհաս Բերբերեան, բժ. Մ. Արամեան, Միքայէլ Թամամշեան, Մկրտիչ Բարխուդարեան, Մկրտիչ Զազարեան, Մուրացան, Մուշէ Վ., MARS, Մ. Շովրեան, Յովհաննէս Յովհաննիսեան. Ն. Ցարոյ, Նիկ. Քարամեան, Ղիրվանզադէ, Պերճ Պոլոշեան, Սար. գիս Մանասեան, Ստեփան Դաբրիեան, Վրդանէս Փափազեան, Տ. Վ., Քաչբերունի, Քենասեր, ***, Ցար. Թումանեան եւ այլն եւ այլն:

Տարեկան բաժանորդագինն է Ռուսաստանում 8 ռուբլի, կէս տարուանը՝ 5 ռուբլի, իւրաքանչիւր համարը՝ մի ռուբլի, Արտասահմանում 27 Ֆրանկ:

Բաժանորդագրութիւնն ընդունւում է Թիֆլիսում «Լումայ»ի խմբագրատանը Պոլիցէյսկի 7, և Կենտրոնական գրավաճառանոցում. իսկ գաւառներում մեր գործակալների մօտ:

Ցայտարարութիւնների տողը արժէ 10 կոպէկ:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում:

Խմբագրութեան հասցէն. Тифлисъ, Редакція ежемѣсячнаго журнала „ЛУМА“, արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien „LOUMA“.

Խմբագիր-Հրատարակիչ ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1906 № 1 ՅՈՒՆՈՒԱՐ

Արգաստիպ Ա. Քութաթելաձէի
ԹԻՖԼԻՍ 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

I Նոր տարի ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ . 5

II Աւետարանի եղբայրները. ԼԵՒՈՆ ԽԱՆԶԱԴԷ 6

III Կէս գիշերին. Յ. ԽԱՆԵԼԱՐԵԱՆ . . . 15

IV Ընդհատուած նախաճաշ. Ֆրանս. Թարգմ. Տ Վ. 16

V Հայ ազգի կեանքի եւ մանուան խնդիրը. ԳԷՈՐԳ ԱՀԱՐՕՆԵԱՆ. 24

VI Մրրիկը Մասիսի վրայ բժ. ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ 35

VII Հայոց ամանօր. Մ. Վ. Մ. 39

VIII Իմ ճանապարհորդական յիշողութիւններից. Ն. ՑԱՐՈՑ 42

IX Ցառաջ. Յ. ԽԱՆԵԼԱՐԵԱՆ 57

X Բեհայիներ կամ բաբիզմ. ԱՏՐՊԵՏ . . 58

XI Արեան երգերից. ՅԱՐ. ԹՈՒՄԱՆԵԱՆ . . 70

XII ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

1. Քամալեանց Ս. Գալօ Ափօ եւ Խաչան. Բ. տպ. 2. Մեր էժանագին գրադարանը. Մաթէօ Փալկօնէ, մատնիչը, լրտես։ ԲՐԻՋ։-Ստացուած գրքեր, ... 71

XIII ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Բեօնտգէնեան ճառագայթներ. Օր. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ 74

XIV ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ռուսիայի արդի վիճակը։ Հալածանք յեղափոխականների դէմ։ Ամբողջ Ռուսիան պատերազմական դրութեան մէջ։ Ձերբակալութիւններ եւ աքսորներ։ Տպարանների փակում։ Լրագիրների դադարեցում։ Մամուլի նոր օրէնքների վերափոխում։ Տպարանները գրաքննչի պաշտօնում։ Քաղաքական կուսակցութիւնների դէմ հալածանք։ Սահմանադրական-ռամկավարական կուսակցութեան վիճակը։ Ռէակցիայի թուլանալը։ Ցուսատու լուրեր։

Պետական Դումայի գումարման օրը։ Բարձրագոյն հրովարտակ։ Դումայի անդամների ընտրութիւնը։ Կովկասի մասնակցութիւնը Դումայում։ —Հայ-թիւրքական ընդհարումներ։ Հաշտութեան պահանջը։ Հաշտարար մասնաժողովներ։—Ներքին լուրեր։ . . . 76

XV **ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

Նշանաւոր եւրոպացիների խնդրագիրը նախագահ Ռուզվելտին։- Շրջաբերական Պարիզի հայ աշխատ. միութեան վարչական ժողովի։—Հայնէի յիշատակին։ Օր. Ն. ԱՂԱՆԵԱՆՑ 82

XVI **ՄԱՀԿՈՅԺ**

1. Բժ. Լեւոն Տիգրանեան։ 2. Մակար եպս. Բարխուտարեանց։ ՀԱՅ 86

XVII **ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐ . . 87**

XVIII **ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 89**

XIX **ՅԱՒԵԼՈՒԱԾ**

1. Փրեղերի Միսթրալ. Միրէյօ. Պրովանսական քեթուած. քնն. ուսումնասիրութեամբ թարգմ. ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ . . . 33—48

Ժ. Ժ. Ռուսսօ. Էմիլ. II մասը. գերմ. թարգմ. ԻՍ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ . . . 91—106

ՆՈՐ ՏԱՐԻ

Այսօր մէկն է յունուարի
Եւ մեծ ու փոքր են ուրախ,
«Շնորհաւոր նոր տարի»,
Լսւում է շուրջ, աջ ու ձախ։

Նոցա համար տօն է դա,
Մեծ տօն է եւ փառաւոր,
Ով ապրում է երկրի վրայ
Ազատ, ուրախ, բաղդաւոր։

Շատ են եկել, գնացել
Սորա նման տարիներ,
Հայերն էլի մնացել
Միշտ հալածուած գերիներ։

Հայի համար նոր տարի
Այն օրը կըլուսանայ,
Երբ որ լուծը օտարի
Նորանից կըվերանայ։

Երկինք, եղի՛ր ողորմած
Բազմաչարչար Հայ ազգին։
Խղճա, փրկի՛ր, տէր գթած,
Մեզ ջնջում է այլազգին։

Օգնի՛ր մեզ, Տէր, հասել ենք
Թշուառութեան կատարին.
Ա՜խ ե՞րբ մենք էլ պիտ՝ տօնենք
Ազատութեան նոր տարին։

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ԱՐԵՏԱՐԱՆԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

(Վէպիկ)

I

Մի մառախլապատ առաւօտ էր. Գեղ լերան գագաթը ամբողջովին կորել էր սև-սև թուղպերի շերտերի մէջ։ Այստեղ-այնտեղ օրուայ հոսող զեփիւռը հալածում էր երկրի վրայ դիզուող մշուշը, որը հեռուից խեղդող ծխի գորշագոյն ամպերի նման օրօրւում էր, հնազանդւում քամու հոսանքին և առւոյլ ընթանում։ Ամպամած երկիրը սև առել ու սուգ էր մտել։ Ամեն ինչ ասես հեւում էր խորունկ վշտի թախծալի խոցերով։ Չկար այդ երկրին յատուկ գեղածիծաղ արևը, չէին լսւում այդ երկրի երկրագործի «հօրօ-վելի» ներդաշնակ ձայները։ Գեղ լերան ստորոտին ընկած գիւղերը նոյնպէս օրուայ այդ պահուն հեռուից գրեթէ չէին նշմարւում։ Չէին լսւում այդ գիւղերում եռուն շարժումների աղաղակները։ Ամեն ինչ լուռ էր։ Լուռ էին և շները։ Թւում էր, թէ դիշերային հանդիստը տակաւին շարունակւում է։

Այդպիսի գիւղերից մէկն էր և մեր գիւղը։ Այստեղ կեանքը վաղուց ոտքի վրայ էր. սակայն սև սարսափի ուրուականը յամառ լռութեամբ պապանձեցրել էր բոլորի լեզուները։ Տիրող լռութիւնը խանգարում էին մերթակի լսուող հեծկլտանքի ձայները, որոնք մի ինքնուրոյն թափով դուրս էին թռչում այսուայն տան երթիկի անցքերից, ընդհատում մաղձալի լռութեան կապանքները, ապա թռչում անցնում մի առանձնակի թռիչքով հեռու,

շատ հեռու և ամեն տեղ թողնում սև թախիծի, մաղձոտ յոյզերի երերումները։

Եւ այսպէս, ամեն ինչ լուռ էր։ Որտեղ զգացմունքների, յոյզերի ահագնադղորդ փոթորիկն է բռնկւում, որտեղ ցաւոտ սրտերի ալեկոծութիւնն է մրրկածուփ դղրդիւն առաջացնում, այնտեղ լեզուն քիչ դեր ունի կատարելու, այնտեղ նա կարկամում է և վառուող զգացմունքները իրանց հառաչանքի, իրանց սուգ ու շիւանի դառնագին հեծկլտանքն են այրուող կրծքից դուրս նետում։

Օրուայ այդ պահուն մեր գիւղի խրճիթներից մէկում մի հնամաշ անկողնում հիւանդ պարկած էր տան տիրոջ դեռահասակ կինը՝ Լուսաբերը։ Նրանից փոքր ինչ հեռու, օրօրոցի մէջ հանգիստ մշշում էր նրա մի հատիկ աղջիկը՝ Սանդուխտը։

Օրօրոցից ոչ հեռու մէջքը պատին յենած պպզել էր Լուսաբերի ամուսինը՝ Դարբնենց Սահրատը, որ գլուխը կախ գցած՝ բռնել էր երկու ձեռքով և հոգետանջ մտքերի ու խռովայոյզ երերումների դիրքն ընկել։ Եւ ինչպէ՞ս չտանջուէր Սահրատը, երբ նրա սիրած, նրա փայփայած կինը այժմ անյոյս հիւանդ ընկած էր անկողնի մէջ և թերևս յաւիտեան փչրէր իր երջանկութիւնը, որի համար ինքը ոչինչ չէր խնայել։ Որքան դժուարութեամբ էր նա յաջողեցրել այդ ամուսնութիւնը, որքան ջանքեր էր գործ դրել, մինչև կարողացել էր ազդել Լուսաբերի ծնողների վրայ և նրանց կամքը, հաճութիւնը ստացել ու նրանց փեսայ դարձել։ Իսկ այժմ... Այժմ չէ՞ որ ճակատագիրը կարող էր վայրկենաբար փչրել այդ ամենը։

Ով չէ եղել սիրող ամուսին, նա չի էլ կարող զգալ այն, ինչ այժմ զգում էր Սահրատը։ Վեց տարի էր, ինչ նա իւր կեանքը կապել էր Լուսաբերի հետ, որին իւր էութեան չափ սիրել էր ու առել։

Ո՞վ չգիտէ, ինչ բան է սէրը։

Ով չի զգացել նրան, նա նրա մասին էլ պարզ գաղափար չի կարող կազմել։

Իսկ Սահրատը զգացել ու առել էր իւր Լուսաբերին, և այժմ նրա այդ նուիրական զգացմունքը առաւել ևս հզօր կերպարանք էր ստացել. չէ որ արդէն մի տարի էր, ինչ նա հայր էր դարձել։

Նրա փոքրիկ Սանդուխտը աւելի ևս կրկնապատկել էր նրա սէրը դէպի Լուսաբերը։

Եւ Լուսաբերն այժմ հիւանդ էր։

Սահրատի կողքին նստած էր մի ուրիշ մարդ, որը նոյնպէս տխուր էր և չէր թարթում իւր բոցավառ հայեացքը Լուսաբերի դալկացած երեսից։ Ներքին բոցակէզ կրակը և տրփանքով լի խանդը վառւում էին նրա նեղ ու փոքրիկ աչքերում։ Նրա տրտմութիւնը և կարեկցական էր և խանդավառ. իսկ հայեացքը նենդամիտ։

Դա Սահրատի «աւետարանի եղբայրն էր», նրա համագիւղացին՝ Զուռնաչոց Թաթուլը, որին Սահրատը հաւատում էր, ինչպէս հարազատ եղբօրը. չէ որ ամբողջ վեց տարի էր, ինչ նրանք անբաժան ընկերներ էին և աղուհաց էին կերել միասին. չէ որ ամբողջ վեց տարի էր, ինչ նրանք Զատկի խաչ ու աւետարանի վրայ «եղբայր» էին դարձել։ Էլ ինչո՞ւ չպիտի հաւատալ այդպիսի եղբօրը, երբ Թաթուլը ինքն էր դիմել նրան, թախանձել՝ «եղբայր» դառնալ աւետարանի վրայ, և այն օրից միշտ հաւատարիմ էր երևացել իրան։ Եւ այժմ էլ երկսով միասին էին պպզել հիւանդ Լուսաբերի առաջը և երկսով միասին էլ պիտի հանդիպէին դալոց վտանգին կամ երջանկութեան։

Այսպէս է գիւղերում, ցաւը ընդհանուրի է։ Այսօր փորձանքն իմ դռան է կանգնած, վաղը՝ քո։

Մինչ սրանք գտնուում էին հոգեկան այդ տագնապալի դրութեան մէջ, սրահում լսուեցին ոտքերի տրոփիւններ։ Պառաւ Վարդերն էր՝ Սահրատի մայրը, որը

իրանց դիւղի ուսուցչի հետ վերադառնում էր եկեղեցուց, ուր նա այնքան-այնքան աղի արցունքներ էր թափել մի ժամ առաջ և մոմ էր վառել, որ Տէրը խղճայ իր խանմ-խաթուն և ջահիլ-ջիւան հարսին. իսկ այժմ. վերցնելով իր հետ ուսուցչին, գալիս էր գէպի հիւանդը։ Երբ սրանք ներս մտան, Սահրատը և Թաթուլը ոտքի կանգնեցին և գլխի թեթևակի շարժումով առան ուսուցչի բարևը։

Այսպիսի ժամանակներում բարևն էլ, ծիծաղն էլ, նոյն իսկ ամենահասարակ խօսակցութիւններն էլ կրում են սև թախծի խորունկ վշտի ցաւոտ հետքերը։

Այսպէս էր և ուսուցչի բարևը, որը ոչ մի արտասովոր փոփոխութիւն առաջ չբերեց նրանց հառաչող սրտերի մէջ։

—Սահրատ, ինչու ես սևն առել, սուգ մտել. ինչ ասացի, կատարել ես արդեօք. տո, եղբայր։ Ձեռքերդ ծալելով, դու ոչինչ չես կարող անել, այլ այն, ինչ քեզ առաջարկել էին անելու, արա, թերևս Աստուած խղճայ քեզ։ Ես պատուիրել էի, որ տունուտեղդ և բոլոր պարագայքդ կարելիին չափ մաքուր պահպանես։ Բայց այսօր տեսնում եմ, որ դու ոչնչից ոչինչ չես արել։ Միթէ այդպէս կարելի է,—նկատեց նրան ուսուցիչը, նստելով հիւանդի կողքին։

—Ախր ինչ անեմ, պարոն վարժապետ, ինձ հարկաւոր էր ձեր ասածները անել այն ժամանակ, երբ դեռ այս անխիղճ ցաւը չէր մուտք գործել իմ շէմքը։ Այժմ, երբ բանը բանից անցել է, էլ ինչիս վրայ մաքրութիւն պաշտպանեմ։

—Միթէ քեզ, երեխայիդ, մօրդ չես խղճում։

—Սրանից յետոյ, պարոն վարժապետ, ինչի համար էլ ապրեմ. թող ես էլ սրա հետ մահանամ, վերջանամ, վրայ բերեց Սահրատը, ակնարկելով հիւանդ Լուսաբերին։

—Գոնէ, Վարդեր, դու տղայիդ մի լսիր, հարկաւոր

է շուտ-շուտ հիւանդի փորին գոնէ տաք մոխիր դնել, ոտքերը նոյնպէս տաք-տաք աղիւսներով փաթաթեցէք։ Եռացրած ջուրը պակաս մի արէք խմելու համար։ Իսկ եթէ սրտախառնութիւնը դարձեալ կ'կրկնուի, այնժամանակ սառցի կտորներ տուէք։

Ախր արար-աշխարհ խոլերայի համաճարակը բռնել է։ Իսկ մենք չենք ուզում ուշքի անգամ գալ։ Մենք մեր կեղտոտութիւններով կրկնապատկում ենք համաճարակի ոյժը։ Հա, մոռացայ, այս դեղից էլ 15-20 կաթիլ խմացրէք օրական երեք-չորս անգամ, եթէ փորլուծութիւն սկսուի,-այս ասելով ուսուցիչը տուեց Վարդերին մի փոքրիկ սրուակ լի դեղով։

—Շնորհակալ եմ, պարոն վարժապետ,-մրմնջաց պառաւը։

—Ի սէր Աստուծոյ, կատարեցէք այն, ինչ ձեզ ասում եմ, իսկ ես այժմ պիտի այցելեմ մեր միւս հիւանդներին.

Խոլերա է, խոլերա,—մռմռաց Թաթուլը և դուրս գնաց։

Ցանկարծ հիւանդը սկսեց ծանր-ծանր հառաչանքներ արձակել և ջղաձգական ցնցումներ գործել։ Նրա դալկացած դէմքը այլայլուեց և դունաթափ այտերը մի րոպէ վարդի գոյն ստացան և նա հոգեկան խորին դառնութեամբ, որի մէջ լսում էր այրուող սրտի տակ պարփակուած անչիջանելի կրակը, արտասանեց մի քանի կցկտուր բառեր, որոնցից նստողները ոչինչ չհասկացան։ Բոլորն էլ լռեցին, և գերեզմանական սրտամաշ լռութիւնը մի քանի րոպէ իւր ծանրատաղտուկ թևերով թագաւորեց այդ անշուք յարկի տակ։

Այդ ժամանակ միայն կարելի եղաւ լսել հիւանդի թուլացած ձայնը.

«Թաթուլ, օ, ո՞ւր ես... ինչո՞ւ այլևս չես համբուր... համբուր...ում։ Ես կատակէի անում. ես քեզ...քեզ էի

փորձում... մի՞թէ այդպէս է քո սէրը... Ա՜խ, որքան անբախտ եմ...դու էիր...դու էլ մոռանում ես ինձ...»

Հիւանդը լռեց։

—Ոչինչ, ուշադրութիւն չպիտի դարձնել. նա զառանցում է, և զառանցանքների աշխարհում ամեն բան կարելի է ու ներելի,—նկատեց ուսուցիչը, դառնալով դէպի Սահրատը, որը իւր ամբողջ էութեամբ լսելիք դառած խորին ուշադրութեամբ բառ առ բառ լրսում էր կնոջը։

Ուսուցիչը, վերջապէս, տալով Վարդերին անհրաժեշտ պատուէրներ, դուրս գնաց հիւանդի մօտից։ Ուսուցչի գնալուց անցել էր գրեթէ մի ժամ. սակայն Սահրատը տակաւին անշարժ, առանց ձայն-ծպտուն հանելու մնացել էր նստած։

Նա լռելեայն իւր վեց տարուայ յարաբերութեան իւրաքանչիւր դէպքերը Թաթուլի հետ մի առանձնակի լրջութեամբ մանրազնին կերպով քննադատում էր, թէ որքան անկեղծ են եղել նրանք իր կողմից, այդ ինքը ձեռքը կրծքին դրած խոստովանում էր. իսկ ինչ են եղել նրանք Թաթուլի կողմից. լոկ կեղծութիւն, դաւաճանութիւն, որոնք այսօր մի անակնկալ դիպուածի շնորհիւ պարզւում էին։ Եւ նա, այդ ապերախտ «եղբայրը», դիմակաւորուելով այդ անուան տակ, որից գիւղական աշխարհում սուրբ բան չկայ, արատաւորել էր նրա ընտանեկան պատիւը և այդպէս անխիղճ սառնասրտութեամբ թէ իրան և թէ իր անբիծ պատիւը խաղալիք էր դարձրել իր վայրագ, իր գազանաբարոյ կրքերին։ Եւ այդ մարդը իր աւետարանի «եղբայրն» էր։

Որպէս խելակորոյս առիւծ, որի կորիւնը անգութ անտարբերութեամբ յափշտակել էին, նա մերթակի յուսահատ մռնչում էր, որը արտայայտում էր նրա մրրկածուփ հոգու խորին ալէկոծութիւնը, որի ահեղ փոթորիկը մի դառնագին, մի ցաւոտ հառաչանքով

սաեռ մոռացնել էր տալիս նրան այն միջավայրը, ուր ինքը պպզել էր։ Նրա այդ հոգետանջ դրությունը թշուառ մայրը վերագրում էր իր հարսի հիւանդությանը, այդ պատճառով էլ յաճախ կրկնում էր.

—Աստուած ողորմած է, որդի.

Թշուառ մայրը չգիտէր, որ որդին այժմ լցուած է խորին ատելությամբ դէպի այդ հարսը, որին քիչ է մնում ուշացնոր վայրկեաններին կտոր-կտոր անէ իր դաշոյնի հարուածներով։

Սակայն մի ներքին ոյժ տակաւին իր ուժեղ զսպանակով կանգնեցնում էր նրան այդ եղեռնագործությունից։

Դա Սանդուխտի ձայնն էր, որը իւրաքանչիւր անգամ, երբ դուրս էր թռչում նրա մատաղ շրթունքներից, ուշքի էր բերում հոր խռովուած երևակայությունը։ Եւ Սահրատը լուռ էր։

Լրությունն... չէ որ նա մեր այլանդակ կեանքի երկու հակապատկեր բոպէներին էլ՝ անսահման ուրախությունն և խորունկ վշտի ժամանակը՝ պապանձեցնում է իր անողոք ճանկերում ընկած զոհերի լեզուները, և ինքը իր խուլ, իր գերեզմանական դերի մէջն է մտնում։

Այո, կեանքի խորախորհուրդ վայրկեաններին ամեն ինչ լռությամբ է իրագործուում։ Այնտեղ, ուր անհատի սիրտը խռովայոյզ ալիքներով ծփում է անարատ և փոխադարձ սիրոյ անհուն բերկրությամբ, այնտեղ, ուր վրէժխնդրությունն անյագ ծարաւի իրագործման շաւիղն է ընդգծուում, այնտեղ լեզուն կարկամում է։ Այնտեղ սիրտը գերակշիռ դեր է կատարում։

Եւ կեանքի այդ երկու հակապատկեր զգացմունքների՝ սիրոյ և ատելությունն ու վրէժխնդրությունն բոպէները լռությունն բոպէներ են։

Մոսկալի են այդ բոպէները։

Նրանք կապում-կաշկանդում են իրանց զոհերի քաղցրագոչ լեզուները. նրանք անսասան սառնասրտութեամբ իրենց զոհերին իրենց տեղերումն են դամում։

Եւ Սահրատը վրէժխնդրութեան փոթորկի անողորմ դառնութեամբ լցուած՝ մի այլայլուած գազանի էր այժմ նմանում։

—Եւ նրա սրտում վրէժխնդրութեան, անխորտակելի ծրագիրը կազմուած էր։ Այժմ միայն նա կարողացաւ տեսնել, որ իր մայրը նստել է Լուսաբերի կողքին և լռութեամբ արցունքներ է թափում։

Լռութեան արցունքնե՞ր... Սիրող մօր արցունքնե՞ր...

Դրանք մայրական անողոք վշտի արցունքներ էին, որոնք խուլ փութկոտութեամբ անընդհատ գլորւում էին նրա թորշոմած այտերի վրայ։

Վերաւոր սրտում դիզուած խոցերը ասես այժմ բացել էին իրանց պալարները, որոնց անհուն ցաւի տակ թշուառ մայրը ողբում էր իր անբախտ օրը, և թւում էր, թէ սրանցով աշխատում էր մեղմացնել տիեզերքի զայրոյթը։ Չէ՞ որ նա համոզուած էր, որ մօր արտասուքը եօթ պատարագից հզօր ոյժ ունի Աստուծու մօտ։ Էլ ինչո՞ւ չլալ։

—Մարէ, ինչո՞ւ ես լալիս,-ձայն տուեց Սահրատը. սատկում է, թող սատկի. ի՞նչ ենք կորցնելու։ Առաջնեռում, որ դա չկար, միթէ ես աւելի երջանիկ չէի։

Մայրը մնաց չշմած և շեշտակի որդու երեսին նայեց։ Թշուառ մայրը կարծում էր, թէ որդին խելագարուել է։ Ուստի նկատեց.

—Սահրատ, ինչ է պատահել քեզ։

—Ոչինչ, ես քեզ ասում եմ չպէտքէ լալ։

—Ախր ինչո՞ւ, ինչե՞ր ես խօսում։

—Մի վրդովուիր, մարէ, խելքս տեղին է. նա արժանի չէ մեր լացին ու կոծին։ Կրկնում եմ, սատկում

է, թող սատկի։ Դրանով թերևս մի յանցանք պակաս գործած լինեմ։

—Ատուած իմ, այս ինչ պատահեց։

—Էլի...

Մայրը լռեց։

Լռեց և Սահրատը։

Որքա՜ն տարբերութիւն մօր և որդու լռութիւնների մէջ։

Առաջինը մայրական անհուն սիրոյ զգացմունքի տակ դէպի իր դառնացած որդին լռեց գէթ որդու խաթրը շահելու համար։ Իսկ երկրորդը խորին ատելութեան և գազանացած վրէժխնդրութեան տակ դէպի տառապող հիւանդը։

Եւ հիւանդը հոգեւարքի գալարներ էր գործում։ Նա մեռնում էր։

Եւ այդ տեսնում էին մայր և որդի։

ԼԵՒՈՆ ԽԱՆԶԱԴԷ

(Կը շարունակուի)

———

ԿԷՍ ԳԻՇԵՐԻՆ

Կէս-գիշերին ծովի ափին
Երգ երգեցի վշտալի.
Ծովը յուզուեց եւ տրտմագին
Երգեց ինձ հետ մեղեդի։

Ես երգեցի ժայռի գրկում
Ծովը ծփաց լալաձայն.
Փէրին ելաւ լուռ ու տրտում
Լացեց տխուր մեղմաձայն։

Համբոյր տուաւ իմ շրթերին
Հովը մեղմիկ ու կամաց,
Երգս խլեց իր թեւերին
Թոցրեց երկինք տխրամած...

Աստղ ու լուսին խոր զգացուած
Երգիս վերին երգ խառնեց.
Նա էլ լացեց, երգեց տխրած,
Երգ ու շողով մխիթարեց...

Երգս առան սարեր ձորեր
Տուին սիրուն արձագանք.
Վշտոտ դէմքով վառ ծաղիկներ
Արձակեցին հառաչանք։

Երգս վէրքն էր, որ երգեցի
Իմ ընկերից ստացած.
Կեանքի թոյնն էր որից լացի,
Գանգատուեցի դառնացած։

Յ. ԽԱՆԶԱՐԵԱՆ

ԸՆԴՀԱՏՈՒԱԾ ՆԱԽԱՁԱՁ

Բլուրները զարդարուել էին կանաչ զգեստով, դաշտերը զուգուել էին ծաղիկներով, անտառներում ճռուողում էին թռչունները, արևը պայծառ փայլում և ծաղիկներն անոյշ բոյր էին սփռել շուրջը։ Ամբողջ բնութիւնը, կարծես, բողոքել էր կամենում այն աւեր ու մահի դէմ, որ պատերազմն ու մարդկային ատելութիւնը առատ կերպով սփռել էին այդ երկրում։

Երևացող բլուրներից մէկի վրայ, որի ստորոտով օձապտոյտ գալիս-անցնում էր փոշոտ ճանապարհը, կանգնած էր մի սիրուն, կոկիկ և ճանապարհորդին դէպի ինքը հրաւիրող մի տուն։ Տան առաջը փռուել, կանաչին էր տալիս զմրուխտ հագած մի մարմանդ, լիքը ծաղկած և բացուած վարդենիներով, իսկ մէջ տեղը բարձրանում էր մի բարձրուղեշ, գեղեցիկ շագանակենի և իւր փարթամ գագաթի սաղարթով պաշտպանում էր արևի կիզող ճառագայթներից հրաշալի վարդերը։

Այդ ուրախ, բանաստեղծական անկիւնը, կարծես, ստեղծուած էր ուրախութեան ու բաղդաւորութեան համար միայն, այն ինչ այդտեղ վիշտն ու թախիծն էին բոյն դրել։

Ամեն օր, երբ արևի կիզող տապը մի քիչ մեղմանալուց յետոյ, մարմանդն էր իջնում և վարդենիների մէջ տխրաղէմ զբօսնում էր 35—40 տարեկան մի կին, ամբողջապէս սևեր հագած։

Տասն ամիս էր, ինչ այրիացել էր։ Ամուսինն սպանուել էր պատերազմի դաշտում։ Սիրած մարդուն կորցնելուց յետոյ, իւր բոլոր սէրն ու յոյսերը կենդրոնացրել էր իւր միակ որդու վրայ, մի տասնևինը տարեկան պատանի, որի հոգեկան յատկութիւնները և մտաւոր կարողութիւնները վշտացած մօր սրտի միակ մխիթարութիւնն ու սփոփանքն էր։

Բայց, ինչպէս որ սովորաբար լինում է, վիշտն ու թշուառութիւնը մի անգամ գալով-գնալով չէին բաւականանում։ Պատերազմի հէնց սկզբից, որդին մի քանի անգամ էր կրկնել և

խնդրել, որ իրեն պատերազմող բանակն ուղարկեն, բայց միշտ էլ անյաջողութեան էր հանդիպել։ Վառ հայրենասիրութիւնը և երիտասարդական արիւնն այնտեղը հասցրին, որ մի գեղեցիկ օր որդին ոտքով-գլխով անյետացաւ։ Հօր մահից վեց ամիս յետոյ պատահեց այդ դէպքը։

Որդու հեռանալու հետևեալ օրը, վշտից ընկճուած և սրբոտի անձուկով մաշուող մայրը մի նամակ է ստանում հետևեալ բովանդակութեամբ. «Անգին, սիրելի մայրիկ, ներիր ինձ. իմ ոյժերիցս վեր է կողմնակի, անհոգ դիտողի դեր կատարել մերշուրջը կատարուող դէպքերի նկատմամբ։ Թող Աստուած պահէ պահպանէ քեզ։ Ես պարտաւոր եմ գնալ հայրենիքի պաշտպանութեան ընկնողների շարքը լրացնել և հօրս վրէժը լուծել»։

Խեղճ կինն այժմ կրկնակի տանջանքի մէջ էր ընկել,— ողբում էր հանգուցեալ ամուսնուն և անհանգստանում կենդանի որդու մասին։

Մայիսուան այդ սքանչելի օրը նստած էր վայրի-վարդենու ստուերի տակ, սիգապատ հոգեթումբ նստարանի վերայ։ Ձեռքին բռնել էր մի գիրք, բայց առանց բանալու, խորասուզուել էր մտածմունքների ծովի մէջ։

Արդէն կէս օր էր և արևն սկսել էր խիստ այրել. տիկինն ելաւ և քայլերն ուղղեց դէպի տունը. նորան յետևեց սպանական փոքրիկ շնիկը։ Այդ շունը իւր որդու մանկութեան ընկերն էր և որդու բացակայելուց յետոյ մի քայլ չէր հեռանում տիկնոջից։

Պարտէզ նայող դռան շէմքի վրայ երևեցաւ պառաւ աղախինը և հարցրեց տիրուհուն՝ արդեօք նախաճաշ տալու ժամանակը չէ։

—Ինչ սպասեցէք, Մագթաղինէ, եղանակը հիանալի է, երևի հօրաքոյրը Անոյշը կգայ հետս նախաճաշ անելու. այսօր նորա այցելութեան օրն է։

Եւ նստեց տան պատշգամբի առաջ, սպասելով հօրաքրոջ գալուն և ժամանակ-ժամանակ աչքն այն կողմը ձգելով, որտեղից պիտի հիւրը երևար։ Բայց շուտով նորա ուշադրութիւնը գրաւեց բոլորովին հակառակ կողմով։ Տիկինը նկատեց, որ անտառից դէպի իւր տունն եկող ճանապարհի պտոյտի վրայ երևեցաւ մի ձիաւոր, որ փոշու ամպի մէջ կորած իրենց կողմն էր արշաւում սրնթաց։ Ինչ յետոյ արևի ճառագայթների տակ կարելի էր նկատել փայլփլող ոսկեզօծ ուսադիրները։ Ամենայն հաւանականութեամբ մի սպայ էր ձիաւորը։ Խիստ յուզուած, լարուած ուշադրութեամբ դիտում էր նորա բռնած ճանապարհը,

երը յանկարծ եկողը ձիուց վայր գլորուեց։ «Վիրաւորուած է» — անցաւ տիկնոջ մտքովը. բայց մի վայրկեան անց սպան արագ վազում էր ճանապարհով, իսկ ձին, երևի ուժասպառ լինելով անհրաժեշտ արագ վազքից, անշարժ պառկած էր գետնի վրայ։ Սպան վազում էր դէպի բլուրը և մեծ ճանապարհից շեղուելով, փոքրիկ կածանով դէպի իւր տունը դիմեց։ Գլխաբաց, հեհեհ, դեռ ճանապարհից, բաւական հեռուից, վազելու ժամանակ կանչեց.

— Ի սէր Աստուծոյ, աղաչում եմ ձեզ, ազատեցէք ինձ... Պէտք է կարևոր տեղեկութիւններ հասցնեմ գլխաւոր բանակը... թշնամիները հալածում են ինձ... կամենում են կարևոր թղթերը խլել և եթէ յաջողեցնեն — մենք կորած ենք։ Յանուն հայրենիքի, աղաչում եմ, թագցրէք ինձ։

— Բայց ո՞ւրտեղ թագցնեմ ձեզ, ասաց կինը յուզուած։

Եւ միևնոյն վայրկենին էլ, կարծես ներշնչուած, մի յաջող մտքով, գլխով նշանացի հրաւիրեց հետևել իրեն։ Անցան երկար սրահով և դուրս եկան տան յետևի բակը։ Սայլատնից հանեց մի երկար պարան, որի ծայրին կար մի երկաթէ կեռ. նշանացի ցոյց տուեց իրեն ուղեկցողին՝ առնել պատին յենած սանդուղտը և դնել հինաւուրց, բարձր և թանձր սաղարթով կնձենուն։

— Սորանից լաւ թագստի տեղ առաջարկել չեմ կարող ձեզ։ Երկաթէ կեռով պարանը ձեզ պէտք կգայ իջնելու ժամանակ։ Բարձրացէք շուտով, ծառի վերին մասում մի փչակ կայ, թաքնուեցէք նորա մէջ։ Երբէք չեն կռահիլ, որ այդտեղ էք թաքնուած։

Դեռ ևս խօսքը չէր վերջացրել, որ սպան անհետացաւ արդէն փչակի մէջ։

— Կենդանութեան ոչ մի նշան չցոյց տաք, աւելացրեց տիկինը,— և հանգիստ եղէք։

Սանդուղտը կրկին սայլատուն տարաւ և տան շուրջը մի պտոյտ անելով, նորից եկաւ տան մուտքի սանդուխտի առաջ, որով արդէն պառաւ հօրաքոյրն էր բարձրանում, յենուած իւր անբաժան գաւազանի վրայ. պառաւը, համարեա, կուրացած էր։

Ողջունելուց յետոյ Շուշանը հօրաքրոջ թևն անցնելով, առաջնորդեց սեղանատուն և պատուիրեց նախաճաշ տալ։

Ոչ մի խօսք չասաց նոր պատահած դէպքի մասին և ամեն ջանք գործ էր դնում ներքին յուզումը ծածկելու համար, որպէսզի հօրաքոյրը չվախենար,

Երկու բոպէից յետոյ Մագթաղինէն սեղանի վրայ դրեց համով պատրաստած, տապակած վառեկները։

—Մագթաղինէ, ասաց մեծարելի պառաւը, հրամայեցէք, խնդրեմ, կառապանին՝ տուն երթայ և ժամը հինգի մօտերը գայ ինձ տանելու։

—Շատ բարի, տիրուհի։

Հօրաքոյրն ու Շուշանը սկսեցին նախաճաշ անել։

—Գիտես, սիրելի Շուշիկ, այլ ևս քեզ մօտ չպէտք է գամ, մինչև որ այս սարսափելի պատերազմը չվերջանայ։ Կատարեալ անմտութիւն է ինձ նման մէկի համար, որ պառաւութիւնից շարժուել չեմ կարողանում, դեռ վրան էլ կուրութիւնս աւելացրու, երթևեկել այնպիսի ճանապարհներով, որտեղ թշնամու զինուորները օր ցերեկով են կողոպտում ու թալանում։ Այսպէս անգամ այստեղ գալիս դողում եմ երկիւղից, թէ նոցա ձեռքը կընկնեմ։

Այրի տիկինը լսում էր և հակառակ իւր կամքի չէր կարողանում զսպել իւր ներքին յուզումը։

Զարմացած այդ լռութեան վրայ, պառաւը հարցրեց.

—Ի՞նչ է պատահել քեզ, Շուշիկ. ինչո՞ւ ես լուռ նստել. և ինչպէս երևում է ոչինչ էլ չես ուտում. ափսո՞ս, վառեկներն այնպէս համով են պատրաստուած... Չէ, այդպէս չի լինի, Շուշիկ, պէտք է զսպես քեզ, պէտք է մի քիչ աւելի հոգեկան ոյժ ունենաս։

—Հօրաքոյր, ասաց տիկինը, բոլորովին լացակմած, մի՞թէ կարող եմ հանգիստ նստել և բան ուտել, երբ սիրտս կտոր-կտոր է լինում թախիծից։ Ո՞ւրտեղ է, արդեօք, այս ըսպէիս որդիս, կենդանի՞ է, թէ...

—Սարսափելի բան է պատերազմը, ինքն իրեն քթի տակ խօսում էր պառաւը. և ինչո՞ւ մարդիկ չպէտք է կարողանան խաղաղ ապրել իրար հետ։ Միթէ աշխարհս այնքան նեղ է, որ ամենքին էլ լայն-արձակ տեղ չհամնէր, քրթմնջում էր նա։

Այդ բոպէին պարտիզից աղմկող ձայներ լսուեցան։ Անհանգստութիւնից յուզուող Շուշանիկն ելաւ մուտքի սանդուղտների վրայ և տեսաւ Մագթաղինէին, որ խօսում էր օտարազգի մի սպայի հետ։ որին շրջապատել էին տասներկու զինուորներ։ Նա մօտեցաւ տիկնոջը, կռահելով որ տանտիրուհին պիտի լինէր։ Գլուխ տուեց և բաւական ուղիղ լեզուով, բայց օտար արտասանութեամբ, ասաց.

—Ներեցէք, տիկին. մեզ մի քանի տեղեկութիւններ են պէ՛տք. որոնում ենք մի սպայի, որ այստեղ է թաքնուած,

որովհետև գետնի վրայ թողած հետքերից երևում է, որ նա վայր է ընկել ձիուց, յետոյ այստեղ է վազել-եկել և այլ ևս այստեղից դուրս չէ եկել։ Չէիք հաճիլ տեղեկացնել մեզ, թէ ո՞րտեղ է նա։

Այդ փոքրիկ ճառը, որ սպան արտասանեց փքուն ոճով ու ձայնով, խիստ գրգռեց տիկնոջը։ Ալ-կարմիր արիւնը զարկեց նորա դժգոյն դէմքին և նա բոլորովին շիկնեց. հպարտ հայեացք ձգեց սպայի վրայ և ասաց.

—Դուք հաւատացած էք, որ այդ սպան այստեղ է, ուրեմն, որոնեցէք։

—Որոնե՞նք։ Բաւական երկար ժամանակ կկորցնենք դորա համար։ Աւելի հեշտ ու կարճ կլինի ասէք, թէ ո՞րտեղ է թագնուած. և դուք, անշուշտ, գիտէք այդ։

—Գիտեմ, թէ չգիտեմ, այդ միևնոյն է. եթէ չգիտեմ ուրեմն ձեզ տեղն ասել չեմ կարող, իսկ եթէ գիտեմ—ասելու չեմ կարող։

—Հաւատացած եմ, որ անշուշտ գիտէք, ընդհատեց խօսակցութիւնը սպան խիստ գրգռուած ձայնով։ Հրամայում եմ իսկոյն ասէք՝ որտեղ է նա։

—Օ՜, պարոն սպայ, ձեր հանդը չափազանց գովելի է, բայց դուք մոռանում էք, որ ես ձեր հրամանատարութեան տակ գտնուածների թուին չեմ պատկանում։ Այստեղ՝ ես իմ տանս մէջն եմ և ոչ ոք իրաւունք չունի հրամայել ինձ՝ իմ տանս մէջ։ Դուք պնդում էք, թէ այն մարդը, որին որոնում էք, իմ տանս է թագնուած. արտօնում եմ ձեզ, որոնեցէք նորան։

Այս ասելով նստեց տան մուտքի սանդուղքների մօտ գըտնուած աթոռի վրայ։

Սպան հրամայեց զինուորներից չորսին՝ տունը պահպանեն չորս կողմից և տնից դուրս գնալու ամեն մի փորձ անողին իսկոյն հրացանի բռնեն. մնացածներին հրամայուեցաւ տունը տակն ու վրայ անել և խուզարկել։

Պառաւ հօրաքոյրը սասարկ վախեցաւ և դեռ ևս մնալով սեղանատանը, իրեն յուզող ու անհանգստացնող հարցերի պատասխանը ոչ ոքից ստանալ չէր կարողանում։

Զինուորներն ամբողջ տունը քրքրեցին՝ ներքնայարկից մինչև կտուրը, նոյն իսկ պատերը չէին թողնում-անցնում առանց շօշափելու։ Տունը խուզարկելուց յետոյ սկսեցին տակն ու վրայ անել ախորը, գոմանոցը, սայլատունը, մարագը, ա-

մեն տեղ և ամեն ինչ նայեցին, ոչ մի տեղ առանց աչք ու ձեռք ձգելու չթողեցին, բայց թագնուած սպան չէր երևում։ Հրամանատարի կատաղութիւնը աւելի ու աւելի էր զրգուում, մանաւանդ որ համոզուած էր, թէ փախստականն այդտեղ էր թագնուած։ Հօ գետինը պատռուել, մէջը չէր անցել։

Հայհոյում, անիծում, սպառնում էր, առանց մտքովն իսկ անցնելու թէ այն ծառի մօտով քանի անգամ էր անցել, որի խոռոչում հալածական թշնամին էր ապաւինած։

Զինուորները յետևը ձգած մօտեցաւ դժգոյն, տխրադէմ Շուշանիկին։

Մի ներքին, գաղտնի ձայն ասում էր, որ այդ թոյլ կինը կարող էր ցոյց տալ, թէ թագնուած սպան որտեղ էր և այն գիտակցութիւնը, որ իւր առաջ գտնուած կինը հրաժարւում է ցոյց տալուց, նորա մէջ կատաղի զայրոյթի բորբոքում բռնկեցրեց։

Ցամաութիւնն ու սառնասիրտ անգթութիւնը, որ յատուկ էր նորա ցեղին, ստիպում էին նորան անպատճառ ճշմարտութիւնը իմանալ, ինչ գնով էլ որ լինէր, այդ մարմնով թոյլ, բայց հոգով արի կնոջից։

Նա, այդ թոյլ արարածը համարձակւում է հակառակել և, զուցէ, իւր յամառութեամբ ամբողջ պատերազմի բաղդը խաղի դնել...

Սպան վճռեց երկիւղ ազդել, սպառնալիքներ կարդալով և զորանով, գոնէ, ստիպէր խոստովանել։

Դրսից հասնող աղմուկի ձայնի վրայ հօրաքոյր Անոյշը պատերը շօշափելով հասաւ մուտքի դռանը և երկիւղից կիսակենդան, հազիւ ոտքի վրայ գնալ կարողանալով, յենուեցաւ դռան կողին։

Տիկին, գոռաց սպան բարկութիւնից դողացող ձայնով, —կրկին անգամ պահանջում եմ, որ յայտնէք, թէ ո՞րտեղ է գտնւում թագնուած սպան։

Տիկինը պատասխանեց մի ակնարկով, որ լի էր թունաւոր արհամարհանքով։

Սպան դարձաւ զինուորներին և հրամայեց մի այնպիսի ձայնով, որ զինուորների ականջները քիչ էր մնում խլանար։

—Տարէք այս կնոջն այնտեղ, մարմանդի մէջ տեղը գտնուած շագանակի ծառի մօտ։

Զինուորները կամեցան մի քայլ անել դէպի տիկինը, բայց վերջինս ինքը, անյողդողդ քայլերով դիմեց ցոյց տուած տեղը, ամենևին մտքովն իսկ չանցնելով, թէ ինչու համար։

Ցանկարծ խուլ հեծկլտոցների ձայնը գրաւեց նորա ուշադրութիւնը և ակամայ յետ նայեց։ Դռան շէմքի վրայ հօրաքոյր Անոյշն էր թպրտում. երկիւղը և յուզումը սաստիկ ազդել էր նորա վրայ և առաջ էր բերել իւր «ընկնելու» հիւանդութեան զարհուրելի հետևանքները։ Մաքթաղինէն վազեց խեղճ պառաւին օգնելու։ Շուշանը կամեցաւ ինքն ևս հօրաքրոջն օգնութեան հասնել, բայց զինուորները փակեցին ճանապարհը և թոյլ չտուին։ Եւ երբ մօտեցաւ ծառին, սպան հանեց իւր գրպանից մի թաշկինակ և հրամայեց կապել կնոջ աչքերը։

Աներկիւղ կինը հասկացաւ, թէ ինչ վիճակ էր սպասում իրեն. մօտեցող զինուորի ձեռքից կորզեց թաշկինակը և շպրտեց սպայի ոտքերի տակ.

—Գուցէ, ձեր հայրենակիցները, ասաց նա, կարիք են զգում իրենց աչքերը կապեն, երբ մահը կանգնում է նոցա առաջ, բայց մենք կարիք չունինք դորան... Մեզանում ինչպէս տղամարդիկն, այնպէս և կանայք գիտեն մեռնել,— աւելացրեց նա հպարտութեամբ։

Սպան միայն ուսերը թոթուեց և հրամայեց զինուորներին տասը քայլի վրայ կանգնել դժբաղդ կնոջից և հրացանները պատրաստեն։

—Հինգ րոպէից յետոյ, ասաց նա չոր, անտարբեր ձայնով, եթէ չկամենաք ասել այն, ինչ որ ես եմ կամենում իմանալ, կհրամայեմ ձեզ հրացանի բռնել։

Եւ ժամացոյցը ձեռքն առնելով, սկսեց մարմանդի վրայ յետ ու առաջ գնալ-գալ։ Ի՞նչ էր մտածում դժբաղդ կինն այդ վերջին րոպէներին, րոպէներ, երբ մտածողութեան ունակութիւնը այնպէս աճում, ընդարձակւում է, որ ստիպում է իւր ամբողջ անցած-դնացած կեանքը նորից ապրել։ Սկիզբը նա մտածում էր ամուսնու մասին, յետոյ մտքերն անցան որդու վրայ, իւր թանգագին որդու վրայ, որի անվեհերութեամբ ակամայ հրճւում էր, բայց և գովել չէր կարողանում այն, որ իրեն թողեց-հեռացաւ։ Միթէ ինքը պէտք է մեռնի, առանց նորան տեսնելու։ Սակայն դեռ ոչ գիտէ։ Գուցէ հէնց այդ րոպէին նա նոյն իսկ կենդանի էլ չէ, այդ րոպէին, երբ ինքը մի բարոյական հոգեվարքի մէջ է գտնւում, որ աւելի անտանելի է, քան ֆիզիքականը։ Գայելով իւր անվեհերութեան, տիկինն զգում էր, որ արցունքը կոխում է աչքերը։ Մի գերբնական ճիգ թափեց, որպէս զի անձկալից մտքերը վանէր և չկամենալով իրեն մահ պատրաստող թշնամիների առաջ թոյլ

երևալ, որ պատրաստուում էին հրացանի բռնել մի թոյլ, անզօր ու անօգնական կնոջ։ Տենդային դողը բռնել էր նորան, զգում էր թէ ինչպէս արիւնը եռում էր իւր հրակներում։ Զինուորների աւազը կանգնեց իւր առաջ. այդ օտար մարդը չէր կարող չնկատել, թէ ինչպէս կերպարանափոխուեց նորա գեղեցիկ դէմքը. սակայն չէր նկատուում թէ կարեկցութեան ամենափոքր նշոյլ անգամ մտնէր նորա սրտի մէջ։

—Անցաւ հինգ րոպէն, խօսեց նա, եթէ չէք կամենում մեռնել, ասացէք, ո՞ւրտեղ է գտնուում այն թագնուած մարդը, որին որոնում եմ, իսկ եթէ անակնկալ կերպով կարողացել է փախչել ազատուել, որ անհնար է, մինչև մեր գալը, ապա ասացէք ո՞ր ճանապարհով է փախել։

—Ո՞ր ճանապարհով,—չշնչաց խեղճ կինը, ո՞ր ճանապարհով, կամաց կրկնում էր նա, կարծեմ չհասկանալով, թէ ի՞նչ են հարցնում իրենից։ Յետոյ յանկարծ ուղղուեցաւ ամբողջ մարմնով. աչքերը փայլատակեցին մի օտարոտի կրակով և սկսեց խօսել, կարծես զառանցելիս լինէր և ձայնը հետզհետէ բարձրացնելով։

—Ո՞ր ճանապարհով։ Օ՜, նա ընտրեց պատուաւոր, ազնիւ ճանապարհ, ընտրեց փառքի ճանապարհը, մի ճանապարհ, որ երբէք դուք գտնել չէք կարող... որովհետև դուք կվերադառնաք յուսահատութեան, անպատուութեան ճանապարհով։

... Զարկ, յանկարծ գոռաց սպան, աւելի ևս կատաղած այդ մարգարէական զառանցից։

Լսուեց ականջ խլացնող մի որոտ...

Մի քանի րոպէ յետոյ սպան զինուորների հետ առաջ էր սլանում, իւր յետևը թողնելով որբացած տունը, ուր պառաւ Մագթաղինէն լալիս էր մեռնող հօրաքրոջ վրայ, իսկ սեղանատանը կատուն ամենայն հանգստութեամբ մաքրազարդում էր վառեկների մնացորդը։

Մարմանդում, շագանակենու ստուերի տակ, ընկած էր դժբաղդ կնոջ փռուած դիակը. մօտը ոռնում էր սպանական շունը և ժամանակ-ժամանակ լիզում էր յաւիտենական քնով քնած իւր տիրուհու ձեռքերն ու դէմքը։

Այդ կնոջ հերոսական անձնազոհութիւնն իզուր չանցաւ. նորա մահուան ակամայ պատճառ սպան անվտանգ ցած իջաւ իւր թագստից և կարևոր տեղեկութիւնը իւր ժամանակին հասցրեց գլխաւոր բանակը։

Թարգմ. Տ. Վ.

ՀԱՅ ԱԶԳԻ ԿԵԱՆՔԻ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ԽՆԴԻՐԸ

(Գրիգոր Նիկողոսեանի «Տեսութիւններ եւ նամակներ Մ. Ա. զ. Ա.» գրքի առթիւ)

Գրքոյկի բովանդակութիւնն ու նպատակն այսպէս է որոշուած հեղինակի իրեն խօսքերով յառաջաբանում.

«Աշխատութեան հիմնական միտքը և գլխաւոր նիւթը մեր ազգային գոյութեան խնդիրն է... մեր ազգային մարմինը վարակուած չէ՞ արդեօք դժուարաբոյժ ախտերով, պատած չէ՞ վտանգաւոր վէրքերով, թէ լիովին առողջ է՝ դեռ ընդ երկար ապրելու ընդունակ։ Ո՞րոնք են արդեօք մեր զօրաւոր և տըկար կողմերը։ Ազգային գիտակցութիւնն ու պարտաճանաչութիւնն ո՞ր աստիճան է զարգացած հայերիս մէջ։ Ինչ վճիռներ են արձակում այլ և այլ մարդիկ մեր ազգային գոյութեան մասին. ի՞նչ կարծիքներ են յայտնում հայատեաց օտարներն և դասալիք հայերից շատերը մեր ազգի բարոյական յատկութիւնների վերաբերմամբ... Թննելով և վեր հանելով այս ամենը, մեր նպատակն է քիչ թէ շատ գիտակցութիւն արթնացնել ռուսահայերի գէթ առաջաւոր դասակարգի մէջ և մղել այդ դասակարգի մարդկանց մտքերը դէպի պարտակատարութիւն և ինքնապահպանութեան միջոցների ձեռնարկում. շատ բարեբախտ պիտի համարենք մեզ, եթէ յաջողուի հէնց մի փոքր հատնել մեր նպատակին» (էջ 13 14 - 15)։

Այս տողերից երևում է, որ պ. Նիկողոսեանը մտատանջուած է հայ ազգի կեանքի ու մահուան խնդրով։ Տեսնենք թէ ինչ հանգամանքներ առիթ տուին նրան կասկածելու մեր ապագայ գոյութեան մասին։

Պ. Նիկողոսեանը գտնում է, որ «Ռուսահայ ժողովրդի զարգացած դասակարգի մէջ ազգային գիտակցութիւնը դեռ շատ ստոր մակարդակի վրայ է կանգնած» (էջ 12)։ Սակայն ի՞նչ հիման վրայ։ Այս հարցը լիովին պարզելու համար՝ պէտք է ճանաչել պ. Նիկողոսեանի իդէալները ազգային տեսակէտից, նորա ազգային ձգտումների էութիւնը, այն նպատակները, որ

նա իրեն առաջադրել է իւր ազգային գործունէութեան համար և որով նա չափում ու դատում է հայ կրթուած դասի ընթացքը թէ ռուսահայոց և թէ տաճկահայոց մէջ։ Այդ իդէալները նա ստացել է նահապետական հայ ժողովրդից, որի խրատներն ու հայեացքները նա շարակարգում է գրքոյկի մի առանձին և խիստ ընդարձակ գլխում, Ա. գլխում։ Պ. Նիկողոսեանը բացարձակապէս յայտնում է, թէ նա իւրացրել է լիովին հայ ժող հայեացքները և իւր ամբողջ կեանքում հաւատարմութեամբ հետևել է նրանց ու հետևելու է։ Այդ հայեացքները նա ամփոփում է հետևեալ կարճ տողերով. Ա. գլխի վերջում. «Չկայ աւելի մեծ երջանկութիւն, քան թէ ապրել ընդհանրութեան հոգսերով, ցաւել նրա ցաւով, ուրախանալ նորա ուրախութեամբ. իւր ետը, բախտաւորութիւնն ու անբախտութիւնը սերտիւ շաղկապել ազգի ետի, նրա բարեբախտութեան ու տարաբախտութեան հետ։ Այդ ժամանակ միայն մարդ կարող է զգալ, թէ իւր կեանքը չէ անբովանդակ մի գոյութիւն՝ զուրկ վսեմ ու անփոխարինելի վայելքից, որը կարող է գտնել սուկ մարդասիրութեան, պարտաճանաչութեան և պարտակատարութեան մէջ, չխրուելով նիւթապաշտութեան և մարմնապաշտութեան տղմի մէջ և չխառնուելով խստուն արարածների ջոլիրների հետ, որոնց կենցաղը և կենակցելու եղանակն ու միջոցները շատ չեն տարբերուում գազանների և չորքոտանիների կենցաղից» (էջ 67)։

Այս խօսքերից երևում է, թէ որքան վեհ են այն ձգտումները, որոնցով շնչուել է պ. Նիկողոսեանը և որոնք դրոշմել են նորա բարոյական նկարագրի վրայ իրենց մաքուր կնիքը,— զի անուրանալի է, որ մարդուս բարոյական կեանքը չափուում է նորա իդէալներով։

Սակայն բաւական չէ ունենալ վսեմ ձգտումներ և անարատ, մաքուր, թարմ իդէալներ։ Պէտք է գիտենալ նաև, թէ ինչ եղանակով իրագործելու է այդ իդէալները, ինչ միջոցներով, նիւթական ու մտաւոր, հասանելի են վեհ նպատակները։

Պ. Նիկողոսեանը իւր նպատակին ծառայելու համար ընտրել է ասպարէզ գրականութիւնը, կամ աւելի ճիշտ ասած հրապարակագրութիւնը, զի գրականութիւն բառը մեր մէջ արդէն ստացել է յատուկ նշանակութիւն՝ իբրև հոմանիշ գեղեցիկ գպրութեանց, որտեղ գլխաւոր դերը խաղում են երևակայութեան ստեղծագործութիւնքը։ Պ. Նիկողոսեանի առաջին լրագրական թղթակցութիւնը, Ուտէացի ստորագրութեամբ, լոյս տեսաւ «Մշակի» № 34-ում 1878-ի մարտի 7-ին, երբ նա

Օլթու զինուորական շրջանապետի օգնական էր ռուսական բանակում, վերջին ռուս-տաճկական պատերազմի ժամանակ։ Այսպիսով գրքոյկը լոյս է ընծայուած այդ թուականից աւելի քան 25 տարի յետոյ, և յատկապէս նպատակ ունի իրեն կըցուած վաւերական նամակներով մի տեսակ հաշիւ ներկայացնել հայ հասարակութեանը իւր հեղինակի քսանուհինգամեայ հասարակական գործունէութեան։

Սակայն ընտրելով որևէ կոչում, մարդս պէտք է ունենայ կամ աշխատի ձեռք բերել այդ կոչման համապատասխան առանձնայատկութիւններ։ Ունի՞ արդեօք պ. Նիկողոսեանը կամ ստացե՞լ է նա հայ հրապարակագրին անհրաժեշտ յատկութիւնները։ Տեսնենք առաջ նորա նիւթական վիճակը, որ ամեն մի հասարակական կոչման հիմն է։

Պ. Նիկողոսեանը իւր կեանքի աշնան մէջն է արդէն, ուրեմն այրական արբուն հասակում, երբ մարդս արդէն սերմանած ու հնձած, լիառատ վայելում է կեանքի պտուղները։ Պ. Նիկողոսեան վկայում է սակայն, որ նրա անցեալը մի յուսահատ կռիւ է եղել գոյութեան համար, որ կենցաղավարութեան պէս պէս գիտութիւններ ու վայելչութիւններ նա չի տեսել այդ անցեալում, որ նա մինչև այսօր նոյն իսկ մի հասարակ տապանաքարով անգամ չկարողացաւ յարգել իւր մօր յիշատակը, այն մօր, որին նա պարտական է ոչ միայն իւր ֆիզիքական գոյութիւնը, այլ և բարոյական վեհ ձգտումները։ Իւր հրապարակագրական աշխատութեանց համար հայ թերթերի մէջ Կ. Պոլսում թէ Թիֆլիսում, նա չի ստացել ոչ մի վարձատրութիւն, զի մեր մէջ չի ընդունուած լրագրական և գրականական աշխատանքի վարձատրութեան սկզբունքը, իսկ հարուստ դասակարգից նիւթական քաջալերութիւն նա չի ունեցել երբէք այն պատճառով, որ այդ դասակարգը պարզապէս չի ըմբռնում գրական աշխատութիւնների բարձր արժէքը։ Պ. Նիկողոսեանը իւր գրքոյկի վերջին գլուխը յատկապէս նուիրել է մեծատուն հային, որի ծանօթ տիպարը նա ներկայացնում է կենդանի և խիստ զաւեշտական գծերով։ Կարելի է առանց վարանելու ասել, որ եթէ մեր հարուստները մի մի Պրոտոպոպովներ են, ապա ուրեմն իրաւունք ունի պ. Նիկողոսեանը յուսահատուելու ռուսահայ ժողովրդի զարգացած դասից, հետևապէս և ամբողջ ռուսահայ ազգից, զի ուսում տալ իրենց որդոց կարող են միմիայն հարուստ մարդիկ, իսկ եթէ հարուստներն ու իրենց ուսեալ որդիքը շատ չեն գանազանուում Պրոտոպոպովից, ապա ինչ սպասել հասարակ ժողովրդից, որ ոչ ուսում ունի,

ոչ դրամ, ոչ էլ հող։ Եթէ մեր հարուստները հեռատեսութեամբ կատարած լինէին իրենց պարտքը դէպի տարաբախտ հայ վարժապետները, որոնք զրկուեցին հացի կտորից հայ դպրոցների փակման պատճառով, կասկածելի է որ Կովկասն այսօր ասպարէզ դառնար այն սոսկալի դէպքերի, որոնք անհամեմատ աւելի թանգ նստեցին նոյն այդ հարուստների կեանքի և գոյքի վրայ, քան թէ ինչ որ նոքա անելու էին հայ ուսուցչի կամ գրագէտի տխուր վիճակը մեղմելու համար։ Մի մարդ, որ իւր ամբողջ երիտասարդութիւնը անցրել է ուսման և գրագիտութեան մէջ, չի կարող այնուհետև գնալ բանուոր դառնալ, կամ ծառայ մտնել՝ իւր ապրուստը ճարելու համար։ Անընդունակ լինելով այլ պարապմունքի՝ բացի մտաւոր ասպարէզները, նա ընտրում է բնականաբար ծայրայեղ ընթացքը և զինաւորուում է այն հասարակութեան դէմ, որի մէջ նա չի գտնում ոչ մի գործադրութիւն իւր բարոյական ու մտաւոր ոյժերի։ Արդիւնքը լինում է կոտորած ու աւեր, որոնց զոհ են գնում մի երկու մեղաւորի հետ հարիւրաւոր անմեղ մարդկային էակներ։ Բարոյական համերաշխութեան պակասը մի հասարակութեան անդամների մէջ՝ միշտ կըլուծի իւր արդար վրէժը նոյն այդ խըստասիրտ հասարակութեան գլխին։

Սակայն պ. Նիկողոսեանը իւր նիւթական կեանքի խնդիրը կարգադրեց այլ կերպ, քան պաշտօնազուրկ հայ վարժապետը կամ սովալլուկ հայ գրագէտները։ Ինչպէս յայտնի է և ինչպէս ինքն էլ հաստատում է իւր գրքոյկում, պ. Նիկողոսեանը դիմեց ռուս մամուլին (որտեղ մի տող անգամ ձրի չի գրուում և չկայ յօդուածներ մուրալու սովորութիւն) և սկսեց նրա յայտնի օրաթերթերում տեղեկութիւններ ու յօդուածներ զետեղել յատկապէս Հայոց մասին։ Պէտք է խոստովանել, որ պ. Նիկողոսեանի այդ տեղեկութիւններն ու յօդուածները, բացի այն, որ նրան ապրուստի միջոց են հայթայթում, ունեն հայութեան համար անուրանալի նշանակութիւն, լոյս հանելով և բացայայտելով մեր ազգային կեանքի պէս-պէս խնդիրները ռուս ընթերցող հասարակութեան և այդու իսկ նաև Եւրոպացոց առաջ։ Ի հաստատութիւն վերջին ասածին՝ վկայեմ այստեղ որ պ. Նիկողոսեանի մի յօդուածը. «С. Петербургскія Вѣдомости» լրագրում հայ եկեղեցական կալուածները գրաւելու մասին ռուս կառավարութեան կողմից, այնքան ուշագրաւ է եղել, որ անգլիացի ականաւոր հրապարակագիր պ. Է. Դիլլօն, Կովկասեան անցքերին նուիրուած իւր ընդարձակ յօդուածի մի քանի տեղերում «Contemporary Review» ապրիլ ամսագրի

մէջ, ուղղակի ներշնչուել է պ. Նիկողոսեանի վերոյիշեալ յօդուածով և գործադրել է նրա ազդու բացատրութիւնները *)։

Պ. Նիկողոսեանի հայ հրապարակագրական կոչման նիւթականը հիմք չունենալով, տեսնենք այժմ դրա բարոյական ու մտաւոր հիմունքները։

Մենք տեսանք արդէն, թէ որքան վեհ է պ. Նիկողոսեանի բարոյական իդէալը։ Մենք տեսանք նաև, որ այդ իդէալը պ. Նիկողոսեանը ստացել է իւր մօրից։ Քննենք ուրեմն մօր բարոյական պատկերը, և տեսնենք թէ որքան դա համապատասխան է հայ հրապարակագրի կոչման պէտքերին։

Ամբողջ 50 էջ, գրեթ-է գրքի կէսը, պ. Նիկողոսեանը նուիրել է իւր մօր խրատներին ու հայեացքներին, որ նա իւրացրել է։ Ինքը պ. Նիկողոսեանը գրքի այդ մասը համարում է ամենաշահագրգռականը, ուստի անհրաժեշտ է նրա մօր հայեացքները յատկապէս ենթարկել լուրջ քննադատութեան՝ պարզելու համար թէ պ. Նիկողոսեանի և թէ հայ կնոջ ու հայ ընտանիքի, հետևապէս և հայ ժողովրդի բարոյական—հոգեկան նկարագիրը։

Նորա մօր բարոյական աշխարհահայեցողութիւնը հիմնուած է «կեանքի փորձառութեան և Աւետարանի ճշմարտութեան» վրայ (էջ 21), ուրեմն դա մի կողմից փորձառական է, միւս կողմից՝ կրօնական։ Լոկ փորձառութեան վրայ հիմնուած աշխարհահայեցողութիւնը խախուտ նեցուկ է բարոյական կեանքի, զի փորձը մեզ միշտ այն չի ցոյց տալիս, որ բարին յաղթանակում է ու չարը պատուհասւում, ինչպէս հաւատացած է Ջերմեռանդ հայ կինը։ Ընդհակառակը, կեանքում մենք աւելի ստէպ ականատես ենք լինում, որ բարին ընկնում է արիւնաթաթախ՝ անհաւասար կռուում իւր գաղափարների համար, իսկ չարը յոխորտալով անցնում է սիգաճէմ՝ անպատիժ իւր գործած անիրաւութեանց համար։

Իւր հայրենիքի քրտնաջան մշակը, փոխանակ քաջալերի և վարձատրութեան, գտնում է հալածանք, կոյր թշնամութիւն, և շատ անգամ էլ նահատակութիւն։ Եթէ մենք լոկ փորձով առաջնորդուէինք, այն ժամանակ պէտք է կամ յեղաշրջէինք մեր բարոյական գաղափարները, և կամ յուսահատուէինք՝ ելը չտեսնելով կեանքի ու բարոյականութեան հակասութիւնից։ Այստեղ ահա կրօնը օգնութեան է հասնում, և վերացնելով մեզ

*) Հրաւիրում եմ անգլիագէտ հայերի ուշադրութիւնը պ. Դիլլոնի յիշեալ յօդուածի վրայ, որտեղ անաչառ կերպով ստորագրուած են Բագուի անցքերը փետրուար ամսին և պարզուած նրանց շարժառիթները։

դէպի Գերագոյն Էակը, ցոյց է տալիս այն կապակցութիւնը, որ հաստատուած է Նրա և արարածոց, և յատկապէս բանական արարածոց մէջ։ Նա յայտնում է մեզ մարդկային հոգու անմահութիւնն ու վախճանական նպատակը, բարւոյ ու չարի անվրէպ հատուցումը անաչառ Գերագոյն Դատաւորի ձեռքով և ներշնչում է բարոյական կեանքի վեհ ու անտխեղծ սկզբունքները։ Կրօնական հաւատով զինաւորուած մարդը անխռով տանում է բոլոր տառապանքները, որոնք շատ անգամ անբաժան են լինում այդ սկզբունքներն իրագործելուց, ակնկալելով լիառատ վարձատրութիւն դէթ իւր զաւակներին ու յետնորդներին։ Ինքը, Նիկողոսեանի մայրը իւր կեանքով մի գեղեցիկ օրինակ է բարոյական սխրագործութեանց՝ ներշնչուած կրօնական անխախտ հաւատով։ Պ. Նիկողոսեանը իրաւամբ նկատում է, որ իւր մայրը հայ ազգի մէջ բացառութիւն չէ, այլ հարիւր հազարներից լոկ մինը (էջ 126)։ Մենք կարող ենք մինչև անգամ մեր կողմից կցել, որ այդպէս է ապրել և այդպէս է ապրում ամէն ազգի մէջ հասարակ դասը, չունենալով բարոյական կենցաղավարութեան այլ ուղեցոյց, բացի կրօնական հաւատը։ Նոյն իսկ կիրթ դասի մէջ առաջաւոր գլուխները ապաւինում են կրօնի ամրութեանը՝ մարդկային մտքի ալեծուփ ծովի տարուբերումներից զերծ մնալու համար։

Սակայն բարոյական աշխարհահայեցողութեան և բարոյական կենցաղի հիմք լինելու համար՝ կրօնը պէտք է գտնի հաւատ մարդկանց մէջ, մինչդեռ շատ անգամ մենք հակառակն ենք տեսնում։ Մարդկային պատմութեան մէջ ժամանակի ընթացքում հետզհետէ թուլանում է կրօնական հաւատը և տեղի տալիս անտարբերութեան և նոյն իսկ կատարեալ անհաւատութեան։ Անհատների կեանքումն էլ լինում են րոպէներ, երբ մարդս կորցնում է մանկական հաւատը և տատանուում է իրար հակընդդէմ համոզմունքների ու կասկածների մէջ։ Ինքը, պ. Նիկողոսեանը քանի-քանի անգամ կանգնել ու պնդել է թէ «Աստուած չկայ», «ամէն ինչ բնութիւն է», «մարդը հոգի չունի, հոգին արիւնի շարժումն է», և այլն և այլն, խորը խոցոտելով այդ տեսակ խօսքերով իւր բարեպաշտ մօր երկիւղած սիրտը (էջ 62)։ Գրեթէ իւրաքանչիւր դպրոցական պատանի, որի միտքը բացւում է ուսման ազդեցութեամբ, սկսում է ծաղկել կրօնական սաստիկ տարակուսանքների արհաւիրքներում։ Նոյն իսկ անուսում գեղջուկ իգիթը, «Վէրք Հայաստանի»-ի իդէալիստ հերոսը, ժամ-պատարագը իսպառ մոռացած, հանդերում շրջում է մտայոյզ ու մոլար, անձնատուր եղած իւր հո-

գին մաշող ու միտքը տագնապող ծանր հարցերին։

Այն օրից ի վեր մտքերի այս վիճակը ևս առաւել զօրացաւ մեր մէջ՝ առաջ բերելով իրրև հետևանք բարոյականութեան իսպառ անկումը։ Մանաւանդ հայ կինը կորցրեց իւր նախկին ամօթխածութիւնն ու պատկառանքը և ապերասան անձնատուր եղաւ հասարակային թեթև զուարճութեանց։ Պ. Նիկողոսեանը ծանօթութեանց մէջ մի քանի սուր գծերով բնորոշում է ռուսահայ բարքերի այս տխուր վիճակը (էջ 29 և 46)։ Այս ցաւին անշուշտ դարման էր հարկաւոր, և պ. Նիկողոսեանը, որ ստանձնել էր հասարակաց բարիքին ծառայելու կոչումը հրապարակախօսական ասպարէզում, հարկաւ պէտք է միջոցներ գտնէր՝ բարուց ապականութիւնը եթէ ոչ վերացնելու, գէթ կասեցնելու և սանձահարելու։ Արդ, ի՞նչ միջոցներով պ. Նիկողոսեանը կամեցել է մաքառել այս չարիքի դէմ։

Ուրիշ միջոց նա մեզ չի ցոյց տալիս, բացի իւր մօր ներշնչած հաւատը։ «Հաւատ, հաւատ և հաւատ, բռնի՛ ու գնա, և ինչ որ մտքումդ դրել ես՝ անպատճառ կը կատարուի»,—ասում է իւր որդուն Ջերմեռանդ հայ կինը (էջ 66), և պ. Նիկողոսեանը յանձնարարում է նոյն հաւատը և քայքայուող հայ հասարակութեանը, և՛ մոլորուած հայ երիտասարդութեանը, ցոյց տալով երկուսին էլ իւր իդէալը՝ հաւատով լի նահապետական հայ կինը։ Սակայն մի մարդ, որ կորցրել է հաւատը, հաւատացող չի դառնալ շարունակ կրկնելով նրան՝ «հաւատ, հաւատ և հաւատ». նրա տարակուսանքները չեն փարատուիլ հաւատացող փիլիսոփաների, իմաստունների ու թաղաւորների օրինակով (էջ 63)։ Հարկաւոր է ուրիշ ճանապարհներ գտնել թէ խախտուած հաւատը վերահաստատելու, և թէ բարքերի վրայ ազդելու համար։ Այդ ճանապարհներն են գիտութիւնն ու գեղարուեստը, և յատկապէս՝ գեղեցիկ գրական արուեստը, որոնք նմանապէս, թէև նուազ չափով, նպաստում են բարքերի ազնուացմանը, և ուրեմն, կրօնից յետոյ, կարող են հիմք դառնալ բարոյական կեանքի ու հայեացքների։ Տեսնենք թէ պ. Նիկողոսեանը ինչ է տալիս մեզ այս երկու ուղղութեամբ։

Պ. Նիկողոսեանի մտաւոր աշխարհայեացքը դառնում է միմիայն գաղափարի շուրջը՝ հայ ազգի կեանքի ու մահուան խնդրի։ և ինչպէս տեսանք, գրքոյկը գրուել է իսկապէս այդ խնդիրը լուծելու նպատակով։ Իւր մտքերն այս հարցի մասին պ. Նիկողոսեանը ամփոփել է III—V գլուխներում, որոնց քննութեամբ մենք այժմ զբաղուելու ենք։

Ազգերի յարատևութեան խնդրում պ. Նիկողոսեանը մեծ

նշանակութիւն է տալիս երկրի աշխարհագրական դիրքին ու տեղագրական պայմաններին (էջ 86), որոնք անշուշտ ազդում են նոցա կեանքի վրայ, ինչպէս մարմինը՝ մարդուս հոգու վրայ, բայց վճռական դերը այս հարցի մէջ նոցա չէ պատկանում։ Մարդս գերի չէ բնութեան պայմաններին անասնոց նման։ Իւր բանական հոգով նա բարձրանում է բնութիւնից էլ վեր և ընկճելով նորան իւր ազդեցութեան տակ՝ դնում է նորա զօրեղ տարերքների վրայ իւր բանական մտքի գերիշխանութիւնը։ Այդ պատճառով միևնոյն երկրում՝ միևնոյն աշխարհագրական դիրքով ու տեղագրական պայմաններով, մենք տեսնում ենք մերթ ծաղկեալ քաղաքակրթութիւն, մերթ աւերակներ, անկում, ամայութիւն։ Միևնոյն Իտալիան, որ միջին դարերում աշխարհակալների կռուածաղիկն էր՝ բաժան-բաժան եղած իրարից անկախ բազմաթիւ մանր իշխանութիւնների, այսօր միացեալ պետութիւն է կազմում պատուաւոր տեղ ունենալով մեծ ազգերի շարքում։ Ընդհակառակը, Իսպանիան որ Փիլիպպոս II ժամանակ Եւրոպայի ամենահզօր և ամենահարուստ տէրութիւնն էր, այսօր ստորացել՝ իջել է երկրորդական փոքրիկ տէրութեանց կարգը։ Ճշմարիտ է, որ լեռներն ու անանցանելի անապատները անցեալում պահպանել են իրենց բնակիչների ուրոյնութիւնն ու անկախութիւնը (էջ 86)։ Սակայն ներկայումս, երբ տեխնիքական կատարելագործումները յաղթահարել են տարածութիւնն ու բնական արգելքները, լեռների և ովազիսների այդ դերն անցած պիտի համարել անդառնալի կերպով։ Պ. Նիկողոսեանը այդ տեսակէտից Հայաստանի աշխարհագրական դիրքը համարում է անյաջող, որովհետև նա թատերավայր է եղել աշխարհակալների շարունակ ընդհարմանց (էջ 87)։ Հայաստանը զետեղուած է այն մեծ Միջերկրական աւազանի մօտ, որի շուրջը հին դարերում կենդրոնանում էր տիեզերական պատմութեան ընթացքը և տեղի էին ունենում արևմտեան և արևելեան ազգերի ընդհարումները՝ խաղաղ թէ պատերազմական, առաջ բերելով բնական բերքերի ու արդիւնաբերական արտադրութիւնների, ինչպէս և մտաւոր ու հոգևոր արգասիքների անգուլ և աշխոյժ փոխանակութիւն՝ յառաջադիմութեան այդ գլխաւոր պայմանը։ Շնորհիւ այդպիսի բախտաւոր դիրքի՝ Հայաստանն առաջին երկրներից էր, որ ընդգրկեց քրիստոնէութիւնը և այդու իւր բախտը սերտիւ շաղկապեց արևմտեան յոյն-հռոմէական քաղաքակրթութեան հետ, որ հիմք դարձաւ տիեզերական պատմութեան նոր և նորագոյն շրջանի։ Եթէ Հայաստանը պատմու-

թեան շաւղից մեկուսացած՝ ընկած լինէր աշխարհի մի անկիւնում, ինչպէս, օրինակ, Սկանդինաւեան թերակղզին, նա, հարկաւ, զերծ կըմնար ընդհարումներից, բայց և դատապարտուած կատարեալ ամլութեան՝ թէ հոգևոր և թէ նիւթական տեսակէտից։ Ուստի բոլորովին սխալ է պ. Նիկողոսեանի այն կարծիքը, թէ հին և նոր ազգերը իրենց քաղաքական յառաջադիմութիւնը պարտական են իրենց երկրի նպաստաւոր, իմն պաշտպանուած՝ դիրքին և տեղագրական պայմաններին (էջ 88)։ Եթէ մի երկիր ծովերով է շրջապատուած, այդ հանդամանքը յիրաւի հեշտացնում է երկրի պաշտպանութիւնը, ինչպէս է օր. ներկայումս Անգլիան։ Սակայն ովկիանոսի էութիւնը ոչ թէ այն է, որ երկրներ պաշտպանի և իրարից բաժանի, այլ, ընդհակառակը, նրանց իրար հետ կապի, նրանց մէջ անընդհատ յարաբերութիւններ հաստատի։ Ծովային պետութիւնները այն պատճառով են ծաղկում ու բարգաւաճում, որ նրանք շարունակ յարաբերութիւնների մէջ են օտար ազգերի հետ՝ խաղաղ և պատերազմական։ Նոյն իսկ Անգլիայի մեկուսացած դիրքը անցեալում չպաշտպանեց նրան հռովմէական լեգիոնների և Նորմանական աշխարհակալների արշաւանքներից ու դարևոր տիրապետութիւններից։ Լեռներով ու անապատներով շրջապատուած ազգերը, ընդհակառակը, կտրուած լինելով աշխարհից, իրաւի, պահպանել են իրենց անկախութիւնը, բայց մնացել են միշտ զարգացման միևնոյն նախնական ստոր աստիճանի վրայ կանգնած, առանց յառաջադիմելու թէ մտաւոր և թէ քաղաքական ասպարէզներում։

Եթէ Հայաստան երկիրը ազդել է հայ ժողովրդի վրայ, այդ եղել է ոչ թէ այն մտքով, ինչ որ ուզում է ապացուցանել Պ. Նիկողոսեանը, այլ բոլորովին հակառակ ուղղութեամբ, մեկուսացնելով նրան և զարգացնելով նրա մէջ անկախութեան և ինքնուրոյնութեան ոգին։ Պ. Նիկողոսեանը մի փոքր յետոյ ինքն է մատնանիշ լինում այս ճշմարտութեան վրայ, հակասելով իւր նախկին ասածներին։ Նա դիտում է իրաւամբ, որ Հայաստանի լեռները և ջրային հաղորդակցութեան պակասութիւնը զարգացրել են նրա բնակիչների մէջ առանձնականութիւն և անհատականութիւն, որոնց հետևանքն են եղել անհատական ուրոյնութիւնը, նեղ հայրենասիրութիւնը և ընդհանուր շահերի սահմանափակ հասկացողութիւնը (էջ 89, 90։) Ուստի միանգամայն ճշմարիտ են պ. Նիկողոսեանի հետևեալ դիտողութիւնները հայոց հոգեկան յատկանիշների մասին՝ իբրև արդիւնք երկրի մակերևոյթի կազմութեան։ «Նախա-

զարներից ոմանք հրաշքներ են գործել անհաւատաբար կռուի մէջ, որովհետև նորանց առաջնորդութեամբ կռուող հայերից իւրաքանչիւրը կռուել է իւր անհատական անկախութիւնը, իւր ընտանեաց ազատութիւնը պահպանելու համար, և ոչ թէ ամբողջ Հայաստանի, ընդհանուր հայրենիքի սիրով վառուած։ Սորանով կարելի է բացատրել այն երևոյթը, որ Հայաստանի մի կողմում ապահով կեանք վայելող հայերին ընդհանրապէս շատ քիչ է հետաքրքրել միւս կողմում յուսահատաբար կռուող ազգակիցների վիճակը»։ Լեռնոտ երկիրը առհասարակ զարգացնում է ծննդավայրի, «վաթանի» սէրը, բայց ոչ հայրենիքի, որ գաղափարական սկզբունք է և ենթադրում է ամենաւորից դէպի ընդհանուրը վերանալու ընդունակութիւն։

Եթէ պ. Նիկողոսեանը այդքան կարևորութիւն է տալիս ազգերի յարատևութեան խնդրում բնական պայմաններին, ապա նա պէտք է զանց չանէր Հայաստանի կլիման և մանաւանդ բնական բերքերը, որոնք ահագին ազդեցութիւն են ունեցել հայ ազգի ամբողջ պատմական կեանքի վրայ։ Միայն մէկ տեղ նա այս մասին մի ճիշտ դիտողութիւն է անում, առանց, սակայն պարզելու նշանակութիւնը։ Նա ասում է, որ նախնեաց յիշատակները պահուել են յետնորդների համար վանքերով և եկեղեցիներով և տեղ-տեղ էլ քաղաքների ու բերդերի աւերակներով (էջ 93)։ Այս հանգամանքը մեծ նշանակութիւն ունի աւանդական ու պահպանողական հոգին ամրապնդելու մրտքով յետնորդների մէջ, որ բացակայում է այն ազգերի մէջ, որոնք անկարող են թողնել յետնորդներին դարէդար կանգուն յիշատակարաններ և մեծագործութեանց շքեղ յուշարձաններ՝ քարահանքերի պակասութեան պատճառով։ Նմանապէս բազմաթիւ բերդերի գոյութիւնը Հայաստանի գրեթէ ամեն մի բլրի գլխին ցոյց է տալիս թէ որքան մեր երկիրը նպաստել է տեղական ուրոյն ու անկախ իշխանութիւնների ու կենտրոնների զարգացմանը. իսկ սա ունեցել է ահագին ազդեցութիւն հայի ամբողջ պատմութեան վերայ։

Սակայն վերջիվերջոյ մարդս ինքն է, որ իւր բախտը վճռում է, և ոչ թէ երկիրն ու աշխարհագրական պայմանները։ Ուստի մի ազգի ճակատագիրը կախուած է աւելի նորա քանակից և որակութիւններից, քան թէ շրջապատող մեռեալ բնութիւնից։

Պ. Նիկողոսեանը բնաւ չի շոշափում հայ ազգի թուական յարաբերութեանց խնդիրը անցեալում և ներկայում, մինչդեռ դորա ոչ սակաւ նշանակութիւն ունին մի ազգի այս կամ այն

տեսակ բախտի համար։ Ներկայումս մեծ ազգերն են, որ դեր են խաղում տիեզերական պատմութեան շարժման մէջ, մինչ անցեալում, ընդհակառակը, պատմութիւնը դառնում էր փոքր ազգերի շուրջը, ինչպէս են՝ յոյներն ու հռովմայեցիք, պարթևներն ու պարսք։ Սակայն ներկայումս էլ փոքրիկ ազգերը կատարում են իրենց յատկացեալ պաշտօնը, տիեզերական պատմութեան շարժման մէջ, բայց այդ պաշտօնը բոլորովին այլ է, քան մեծ ազգերինը։ Նրանց մէջ զարգանում է ներքին բարեկեցութիւնը և անհատական ինքնուրոյնութիւնը, մինչդեռ մեծ ազգերի մէջ առաջին տեղը բռնում է զինուորական ոյժը և միջազգային ու հանրաժարդկային խոշոր հարցերի կարգադրութիւնը։

Այս տարբերութիւնը չպէտք է մոռանալ ազգերի պատմական դերերը քննելիս։ Պ. Նիկողոսեանը իւր գրքոյկում հայ ազգի այս կողմը բոլորովին զանցառութեան է տուել։ Այժմ տեսնենք թէ նա ինչպէս է որոշում հայի որակութիւնները։

Վիեննա ԳԷՈՐԳ ԱՀԱՐՈՆԵԱՆ

(Կը շարունակուի)

ՄՐՐԻԿԸ ՄԱՍԻՍԻ ՎՐԱՅ

(մի հատուած «Ճանապարհորդական պատկերներ» անտիպ շարադրութիւնից)

Ես գնում էի Երևանից Էջմիածին։

Ազատ Մասիսի արևմտեան հեռաւոր կողմերը աքանչելագեղ էին. այդ տեղերում բարձրանում էր մի ահագին թանձր ամպ, որ փակում էր երկնային տարածութեան մի մասը և յամր շարժւում էր դէպի երկնակամարը։ Դա ուղղահայեաց դրութեամբ և ամբողջութեամբ էր գնում և իր մէջը չունէր ոչ մի հատուածք։ Այդ ամպը նմանւում էր մի սև ժայռի։ Այդ հրէշը լայնանում, աճում էր։ Ոչ մի ծալուածք այդ ամպի մէջ չէր երևում, դրա մէջ երբեմնապէս փայլատակում էր մութ ֆոնի վրայ, հազիւ նշմարելի կայծակը, սակայն որոտի ձայնը չէր լսւում։ Արեգակն ամպի տակ մտնելով ոսկէզօծում էր ամպակոյտի արևմտեան եզերքը։ Այդ ամպն այնպիսի մի ձև ընդունեց, որ ասես թէ մի ահագին սար բարձրանում լինէր երկնքի և երկրի մէջ։

Այդ տեսարանը ներշնչում էր սարսուռ և զարհուրանք։

Օդը տաք էր և խեղդիչ, կարծես գոլորշի էր տարածւում այդ խորհրդաւոր ամպաշղջից։ Երկնքի կապոյտը հետզհետ մթնում, սևանում էր։ Այդ ամպը մի չարագուշակ կերպարանք ունէր, դրա մեծանալը և մերձենալը մի տեսակ երկիւղ էր ազդում։

Օրը ցերեկով թւում էր, թէ իջնում էր մութ գիշերը։

Ամպը փոխելով իր ձևը, կարծես կախուած լինէր երկնքից, յետոյ կորցրեց իր մութիւնը և սեագունդ ալիքներով հեռուից շարժւում էր դէպի Մասիսի գագաթը։

Սկսեցին երևալ անձրևի ու կարկուտի շերտեր արևմտեան հեռու կողմերում։

Ամպի կոյտերն յամր շարժւում էին դէպի Վիշապատուն Մասիսի գագաթը։ Բնութեան լռութիւնը յուզուած էր. զգացւում էր մրրիկի մօտենալը։ Հորիզոնի վրայ տարածուած էր

ժոխրագոյն մառախուղ։ Մի նեղ, երկարաւուն, սպիտակ ամպ-ով գիտէ որտեղից գալով, առիշեղ կտրեց այդ ամպակոյտն արևելքից դէպի արևմուտք։ Ահեղ սև ամպերն հետզհետէ իջ-նելով Մասիսի գագաթին, ասես դիւթական պար էին բռնելու նրա վրայ, տարածւում էին ամեն կողմ և պատեցին ամբողջ երկնակամարը։ Խիտ մութը տարածուեց երկնքից երկրի վրայ։

Զգացւում էր, որ մոտենում էր մի արհաւիրք։

Վիթխարի երևոյթն արդէն մերձ էր. սարսափած թռչուն-ները թագնւում էին քարերի, թփերի տակ, ձայները կտրել էին, պապանձուել էին։ Կովերն, եզները, ոչխարները, որոնք արածում էին դաշտում, գլուխները կախած, ողբալի մռնչում, գոռում էին։

Ցանկարծ հեռուից լսուեց ամպի մի ահարկու որոտում, որից առաջ չէր նկատուել ոչ մի կայծակնահարութիւն։ Հետզհե-տէ սկսեցին յայտնուել մէկը միւսի հետևից մի քանի անձայն բայց այնպիսի սոսկալի փայլակներ, որոնք պարզ լուսաւո-րում էին Մասիսի բազմաժայռ լանջքն ու դաշտերը։

Սևագոյն ամպերն իջնելով Մասիսի գագաթից նրա հիւ-սիսային լանջքը, թափեցին անձրևի մի քանի լայն շերտեր, յետոյ դրա ամպախիտ գագաթի վրայ փայլատակեց, շանթեց և լսուեց ամպի մի զարհուրելի որոտումն։

Սաստկաշունչ քամին բարձրացաւ։

Խաւարը հասաւ իր գագաթնակէտին։ Ցերեկուան լոյսի խաւարելիս, մարդուս վրայ սարսուռ է գալիս, ասես շունչը կտրւում է, սիրտը նեղւում է։

Վերջին որոտումն իբր ճաքեցրեց ամպերը վերևից մինչ-ներքև ու կարծես հենց այդ ճեղքից թափեցին Մասիսի և Արա-րատեան դաշտի վրայ սարսափելի հեղեղի գետեր։

Սկսեց մրրիկը։

Ես մտայ ճանապարհի պահապանների տունը,

Փոթորիկը, փայլակները, ճայթումն, շանթերը, ամպերի մոլի գալարումները, շչումը տարածուել էին երկնքի և երկրի վրայ, գործում էին միասին։ Քամին սուլում էր։ Անձրևը չէր գալիս, այլ թափւում էր երկնքից։ Մրրկի աղմուկն աճելով տարածւում էր։ Անձրևն ու քամին չէին կտրւում, հանդար-տւում, կարծես Արարիչը կամենում էր նորից հեղեղել Արա-րատեան դաշտը։ Երկնքի անսահման տարածութիւնը խռովուած յարձակուել էր Մասիսի ժայռերի վրայ։ Լսւում էին անթիւ յուզիչ ձայներ։

Ո՞վ էր այդպէս գոռում, գոչում։

Ամպերը կարծես ոմբակոծում էին, անձրևն ու կարկուտը հրացանաձգում էին, քամին շաչում էր։ Թւում էր, թէ երկինքը պէտք է քանդուէր Մասիսի գագաթի վրայ։ Փայլատակման միջոցին նրա ժայռերը բոցավառւում էին և նրա հրաբխային բերանը— Մասեաց վիհը կարծես աւելի լայն էր բացւում, հեղեղի գետերը կլանելու համար։ Երբեմն կայծակի շանթերը գագաթի հիւսիսային կողմերից իջնում էին որպէս սանդուղտներով, ելեքտրական ընդհարումները թափւում էին քարաժայռերի վրայ, մռայլ, սև ամպերն ալեկոծուած, կատաղի կերպով անցնում էին դէպի հիւսիս և հեռագետ հարաւային կողմերը նոսրանում էին ամպերից։

Մի րոպէ բացուեց Մասիսի երկինքը, նրա ձիւնեղէն, սպիտակափառ գագաթը և լոյս տարածուեց։

Ամպերն սկսեցին անջատուել, դադարեցին փայլատակումները, սակայն քամին շարունակւում էր, շաչում էր։ Կարելի էր կարծել, որ մրրիկը վերջանալու վրայ էր, բայց այդ միայն նրա սկիզբն էր։

Ցանկարծ հարաւից նորից յարձակուեցին Մասիսի և Արարատեան լայնածաւալ դաշտի վրայ սևագոյն ամպերի անհամար ալիքներ։ Երկինքը բացեց իր լայն բերանը և թափեց երկրիս վրայ ջուր ու բոց։ Մի վառվռուն բոց շարունակ հանգչում, նորոգւում էր ամպերի խաւարի մէջ։ Անձրևի ու կարկուտի շերտերը լուսաւորուելով, թափւում էին երկնքից։ Արագածի երկինքը նոյնպէս յուզուած էր. փայլակները, որոտումները, հեղեղի գետերը թափւում էին երկնքից նրա հինգ ժայռի գագաթին և լցնում էին նրա գագաթնավիհը։

Մի րոպէ աւելի խորին մութը տարածուեց երկրիս վրայ։ Կայծակը դադարեց, հետևեց մի խուլ հարուած, սրան յաջորդեց մի սոսկալի ճայթիւն։ Այժմ կայծակը կատաղաբար և փոփոխակի թռչում էր Մասիսի գագաթից Սիսի գագաթը, երբեմն էլ հաղորդակցում էր Արագածի փայլակների հետ։ Ցանկարծ թնդաց մի սարսափելի հարուած և տարածուեց մըթութեան մէջ մի դղրդոց, որ առաջիններից աւելի ահարկու էր։

Մասիսի գագաթի վրայ կատարւում էր մի ահեղ գործողութիւն։

Վերևում—զայրոյթն էր, ներքևում—սարսափը։ Զար ոգիները— Մասիսի այդ քաջքերն ալեկոծում էին նրա գագաթի օդը, թռչում էին կայծակները, ամպերը ճաքում էին և երկնքից թափում էին հեղեղի գետեր։

Այդ ժամը մոլեգին էր։

Թւում էր, թէ այդ վիթխարի լերան ժայռերն ուզում էին տեղից շարժուել։ Մրրիկը խելագարուել, կատաղել էր։ Կայծակները ջրվէժի նման թափում էին ժայռից ժայռ և տարածւում էին մինչ նրա ստորոտը։ Երբ Մասիսի օդքն ալեկոծուած, զայրացած գոռում էին, ասես թէ երկիրը շարժւում էր մարդիս ոտների տակ։ Անձրևի, կարկուտի, քամու, կայծակների դղրդոցն աշխարհք էր վերցրել, թւում էր թէ երկինքը քանդուելու էր, կործանելու էր երկիրը։

Ահա մի ամպ տեղի ահեղ գոռաց, որպէս թէ վերջին չունչն էր արձակում։ Ամպերի վերջին ճիգը լինում է աւելի ուժգին, բայց կարճատև։ Կայծակի ամենաասստիկ հարուածը գուշակում է փոթորիկի վերջը։

Անձրևը կտրուեց։

Ամպերը մի անգամ էլ ահեղ փայլատակեցին, վերջ տուին մրրիկին, արձակելով այս ու այն կողմ մի քանի թոյլ, անզօր, դժգոյն փայլակներ և սկսեցին ցրուել ու բաժանուել միմեանցից։ Հետզհետէ Մասիսի գագաթը սկսեց ազատուել ամպերի յարձակումից և դրա վերևում ամպաշեղջը բացեց իր մէջ մի ահագին այր, ուր պարզ երևում էր նրա կամարակապ առաստաղը։ Այդ այրում երևում էին ամպերից կազմուած տնանանձև էակներ, որոնք ձևափոխւում էին մարդկանց, անասունների և վիշապաձև ստուերների։

Ի՞նչ որ քամին բերել էր, ինքն էլ տարաւ։

Արևմուտքն սկսեց պարզուել։ Արեգակը մի խիտ ամպակոյտի լուսամուտից արձակեց Արարատեան ծաղկազարդ, և ականաւոր դաշտի վրայ իր ճառագայթների ուրախաբեր, լուսափայլ մի փունջը և զարդարեց դաշտը։ Այդ լուսապուռն հետզհետէ մեծանալով, լուսաւորեց երկիրը։ Կրկին ցերեկ էր։ Ամեն ինչ, կենդանութիւն ստացած, ժպտում էր երկրիս վրայ։

Աւագ Մասիսը հսկայակերպ, անշարժ կանգնած կար պայծառափայլ երկնքի տակ և նրա մեծապանծ գագաթը չողշողում էր արեգակի լուսաշուք ճառագայթների մէջ։

Դուրս գալով պահապանների տնից, ուղևորուեցի դէպի Էջմիածին։

Ես ինձ շնորհաւորեցի, որ Մասիսն ինձ այդպիսի մի մեծասքանչ ընդունելութիւն ցոյց տուեց։

Բժ. Լ. ՏԻԳՐԱՆԵԱՆՑ

ՀԱՅՈՑ ԱՄԱՆՈՐ

«Ո տայր ինձ զծուխ ծխանի և զառաւօտն Նաւասարդի, զվազելն եղանց և զվազելն եղջերուաց. մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք.

Ո՞ւր, ո՛վ մարդիկ, շտապում էք խուռներամ և հապճեպով,
Ո՞ւր էք վազում ձեռներդ լի մայր բնութեան տուրքերով.
Նաւասարդի մէկն է այսօր, և գնում էք տօնելու
Միրգ ու ծաղկով շքեղ տօնը Ամենաբեղ աստրծու։
Հայ աշխարհի բնութիւնն հարուստ, դաշտօրայքն են ծաղկաղարդ,
Այգիները մրգերով լի, հողն արգաւանդ և պարարտ
Եւ դուք, չքնաղ հայ օրիորդներ, ծաղիկներից այդ սիրուն
Պսակնե՞ր էք բոլորելու Ամենաբեղ ձեր տիրուն,
Թէ՞ դուք քնքոյշ ձեր մատներով ածելու էք լիուլի
Ձեր սիրասուն եղբայրների բաժակներում հին գինի.
Թէ սեղան էք պատրաստելու Ամենաբեղ Աստծուն,
Որ նա սփռէ իւր հովանին ձեր բարեբեր արտերում։
Ածէք, քոյրեր, ահա եկան ձեր եղբայրները յոգնած,
Ձիարշաւից, մրցումներից հանգստութեան կարօտած.
Կազդուրեցէք ձեր տաք շնչով դուք նրանց խոնջ բազուկներ,
Տուէք նրանց, տուէք գինի, տուէք և քաղցր համբոյրներ,
Որ Աստուածն էլ Ամենաբեղ, խնամակալն հայ երկրի,
Տեսնելով ձեր սէրն անարատ՝ հոգով ցնծայ ու բերկրի։
Երգիչները հայ աշխարհի՝ տաղանդաւոր և համեստ՝
Հին դիւցազանց մեծ գործերին անվերջ կարդում են գովեստ.
Ցիշում են նրանք իրանց երգում անուններ Հայկ ու Արամ,
Տիգրան, Վահագն ու Արտաշէս և դրանց փառքն անթառամ.
Շուք են տալիս ամանորի հայրենաւանդ հին տօնին,
Եւ գովում են ամէն ովքեր հայրենեաց հետ կապ ունին.
Գովում են նրանք հայրենասէր քաջ զինուորին անձնուէր,
Հայ տանտիկնոջ, հայ պատանուն, հայ մշակին ջանասէր,
Եւ երգելով փառք ու պատիւ Ամենաբեղ աստրծուն՝

Հայ աշխարհի բնութեան համար նրանից խնամք են հայցում.
Հայ օրիորդներ, պակեցէք դուք ճակատն հայ երգողի,
Որ յաւիտեան նա իր երգում ձեր անունը ներբողի։
Արեգակը հորիզոնում փողփողում է տօթագին
Եւ մրգերով շրջապատուած կարծես ժպտում է բագինն,
Ուր քրմերը միաբերան երգում են փառք ու պատիւ
Ամենաբեղ մեծ աստծուն ամանորի այս առթիւ.
Եւ խմում են մարդիկ գինին բաժակներով լիուլի,
Եւ ասում են, և պարում են խմբովին և մի առմի։
Քրմապետը ձայն է տալիս գինու բաժակը ձեռքին՝
«Հայ ժողովուրդ, երկրպագիր դու քո տիրոջ սրտագին.
«Սա, ասում է, քեզ պարգևեց պայծառ երկինք, յորդ անձրև,
«Սա խնայեց քեզ կարկուտից, ծագեց քեզ լոյս ու արև»։
Եւ ժողովուրդը գոչում է՝ բազուկները տարածած՝
«Օրհնեալ լինի Ամենաբեղ աստուածը մեր միշտ գթած»։
Եւ քրմերի դասակարգից մի երկրորդ մեծ պաշտօնեայ
Ձայն է տալիս ձեռին բռնած գինու բաժակը ոսկեայ.
«Հաւատարիմ հայ ժողովուրդ, կրօնասէր, ջերմեռանդ,
«Խմում եմ այս քո իսկ կենաց, որ հինաւուրց այս աւանդն
«Անխախտ պահես և դարերով ժառանգութիւն միշտ թողնես
«Զաւակներիդ, որ նրանք էլ գան կատարեն սոյն հանդէս։
«Քո աշխարհը, հայ ժողովուրդ կանգուն մնայ յաւիտեան,
«Կանգուն մնայ քո տունն ու տեղ, քո այգին ու անդաստան.
«Եւ ինչպէս քո հողի վրայ բուսած ծառերն ու ծաղկունք
«Մնաս և դու մշտադալար, չտեսնես ցաւ ու արտասունք»։
Լռեց ճառը պերճախօսի· միաբերան ձայն տուին.
«Կեցցէ յաւէտ մեր վեհ կրօն, որ մեր նախնիք մեզ թողին»
Եւ խանդավառ բերկրանքով լի՝ համբոյր տուին միմեանց՝
Քաջ համոզուած թէ կրօնն այդ մնալու էր միշտ անանց։

Անցան դարեր, կործանուեցաւ հայ բագինը հնօրեայ,
Բայց ոչ երբեք մոռացուեցաւ ճոխ պաշտամունքը նորա.
Տասնեակ դարեր երկարուձիգ կատարուեցաւ շարունակ
Հայ աշխարհում ամանորի սոյն հանդէսը փառունակ.
Դարեր երկար և անընդհատ հայ կոյսն ու հայ պատանին
Պճնուեցան պսակազարդ՝ ամանորի այս տօնին.
Մոռանում էր հայ մշակը իւր քրտինքին ու տառապանք,
Ողջունելիս նորեկ տարուն ստանում էր նա նոր կեանք.
Կազդուրւում էր հայ զինուորը պատերազմում վաստակած
Ուրախ էր հայ ընտանիքը՝ իր սրբութեամբ հռչակուած.

Ուրախ էր և հայ տէրտէրը յաջորդը հին քրմերի՝
Թէպէտ և ոչ մեծ գիտնական բայց հաւատքումն անթերի
Եւ երգիչը հայ աշխարհի՝ անցեալն էր դեռ նուագում,
Եւ ամբոխից դիւցազնական դափնիներով պսակւում։

Անցան սակայն, անցան անդարձ և այդ դարերն երջանիկ,
Եւ տեսնում եմ այժմ իմ առաջ ես մի սգաւոր հայրենիք...
Նա հեծում է, նա ողբում է հարուածներից օտարի,
Ասպարէզ է դառել տխուր հալածանքի, աւարի։
Հալածւում է հայ տէրտէրը՝ հաւատարիմ իր կոչման,
Աւերւում է հայ տաճարը իր զարդերով սրբազան.
Հալածւում է հայ պատանին երկրէ երկիր տարագիր,
Հալածւում է հայ մշակը իր որդոց հետ սգակիր,
Հալածւում են մատաղերամ և որբացած հայ մանկունք.
Զունին նրանք հայր ու մայրիկ, անվերջ թափում են արտ-
սունք.

Հալածւում է և պատիւը պարկեշտասուն հայ կոյսի.
Էլ տէրը չէ նա սիրասուն-քաջ տղամարդ իր փեսի։
Վերացել է հայ աշխարհից և սրբութիւն և ամօթ,
Պատուաճանաչ մարդիկ այնտեղ մահուան քաշում են կարօտ.
Մոռացուել է ամանորի պաշտամունքը ցնծալից...
Ա՜խ, ով կարող է աչք բանալ այլ ևս արիւն արտօսրից.
Եւ երգիչը հայ աշխարհի մռայլ թախիծը դէմքին՝
Պատմում է իր հայրենիքի ցաւն ու վիշտը ամենքին.
Աշխարհնե՛ր է թափառում նա, կտրում է ծով, ովկիան,
Որ իր ողբով ու երգերով քար սիրտն յուզէ մարդկութեան....

Օ՜ն, սիրելի հայ օրիորդներ և դուք հայոց պատանիք,
Թէ սիրում էք որ նորոգուի ձեր կիսաւեր հայրենիք,
Թէ սիրում էք որ դարերով անմահ մնայ ձեր անուն,
Ուխտեցէք արդ նրան մի օր զոհել ձեր սիրտն ու արիւն։

Մ. վ. Մ.

ԻՄ ՋԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

(1904—5)

I

Անցեալ 1904 թուականի մայիս ամսին ծննդավայրիցս դուրս գնալով դէպի Բաթում՝ դարձեալ մի անգամ ուղևորուեցայ Ֆրանսիա՝ նախնի Պոնտոսի, Կ. Պոլսի ու Միջերկրականի ծովային ինձ հաճելի ճանապարհով։

Փարիզից «Լուսայիդ» ուղղած առաջին նամակիս մէջ թէև արդէն յիշեցի որ այս անգամ Եւրոպայում գտնուելս գրի և ուսման ասպարիզի վրայ դեգերիլ շարունակելու նպատակով չէր, այլ տկարութիւնից ապաքինուելու յուսով, բայց ինչ կուզէ լինէր մի՞թէ կարող էի լռել և սովորութեանս համեմատ չը գրել և չը խօսել իմ նկատած մանաւանդ այն իրողութիւնների ու ստացած տպաւորութիւններիս մասին, որ հայկական ուշադրութեան միշտ արժանի՞ նիւթ են ժատակարարում։—Ամսագրիդ անցեալ տարուայ առաջին համարներում Փարիզից գրած սակաւաթիւ նամակներս մասամբ ապացոյց կարող են լինել ասածիս։

Հիմայ էլ ուզում եմ յիշեալ երկար ուղևորութեանս միջոցին ստացած տպաւորութիւններս ու յիշողութիւններս նորոգելով՝ շարունակել դարձեալ թէ նոյնպիսի և թէ այլ տեղեկութիւններ հաղորդել հանդիսիդ հետաքրքիր ընթերցողին։

Երեկոյին ժամը չորսն էր որ Մարսէլցի Պակէի «Հայկական ու Մառօքեան» անուանեալ ընկերութեան մեծ նոր շոգենաւ «Իմպէրէթին» սկսեց շարժուիլ Բաթումի նաւահանգստից և ընթանալ դէպի Թիւրքիա՝ անցնելով նախ արգաւանդ Անատոլիայի սիրուն ծովափերի մօտով։

Թէ ինչու Ֆրանսիական այս շոգենաւական ընկերութիւնը «հայկական» մակդիր ևս է կրում՝ պատճառն այն է որ ընկերութեան բաժնետէրերի մէջ սկզբում մասնակից են եղել (գու-

ցէ այժմ էլ են՝ Մարսէյլցի հայ վաճառականներ ևս իրանց «Armenie» (Հայաստան) և այլ անուն կրող ու մինչև մեր երկրի կողմերը երթևեկող շոգենաւներով։

Ես ցանկութիւն չունիմ նորից գծագրել այստեղ Անատոլիայի ընդարձամբ հարուստ այն նկարչական՝ հեռուից միշտ գեղատեսիլ, իսկ մօտից սոսկալի տնցքեր յիշեցնող արիւնլուայ եզրերը իրանց հայաբնակ քաղաքներով, որոնց նկարագրութեանը տասնեակ տարիներ առաջ ուղևորական նամակներ եմ նուիրել արդէն «Արձագանքի» այսօր այլ ևս դժբախտաբար չը հնչող էջերում...

Միւս օրը առաւօտեան ժամը հինգն էր որ մեր շոգենաւը հասաւ Տրապիզոն և խարիսխ ձգեց սորա այն ընդարձակ ծովածոցում, որ փոխանակ ապահով նաւահանգիստ դառնալու՝ դարևոր ժամանակներից ի վեր Անատոլիայի ծովեզրեայ միւս մեծ ու փոքր քաղաքների պէս, նոյն անշէն ու անփոփոխ ծովածոցն է մնացել տիրող բռնակալ տէրութեան ձեռքում։

Բազմաթիւ չէին մեզ տանող շոգենաւի ճանապարհորդները Բաթումից։ Սակայն մինչև Կ. Պոլիս ժամանելը հետզհետէ աւելանալով թէ յիշեալ ծովեզրեայ քաղաքներից և թէ Փոքր Ասիայի ու Հայաստանի կողմերից՝ յիսուն հոգուց էլ անցաւ ուղևոր-անցորդներիս թիւը, բացի նաւի գրեթէ նոյնքան ծառայողներից։ Էլ չեմ խօսում մինչև Դարդանէլ ամեն տեղից վերցրած և «Իմէրեթի» վրայ բեռնած մեծաքանակ ապրանքների մասին, որ բաւական խորը նստեցրել էին շոգենաւը ծովի ջրերում։

Արտահանուող ապրանքների մէջ հետաքրքիր էր տեսնել մանաւանդ ստուար քանակութեամբ պաշարեղէններ՝ ինչպէս իւղ, հաւկիթներ, կենդանի հաւեր և այլն. ամենն էլ մի առանձին խնամքով յարմարցրած արկղների ու վանդակների մէջ այնպէս դասաւորուած, որ կարելի լինէր տեղ հասցնել անփուտ ու անվնաս։

—Ո՞րքան հաւկիթ ունինք ուրեմն մեր շոգենաւում, հարցրեց Ֆրանսիացի զուարթամիտ նաւապետը իւր օգնականին մեր ներկայութեամբ, երբ սա հաշիւ էր տալիս ընդունուած ապրանքների մասին։

—Աւելի քան միմի լիօն...

—Ա՜յ թէ ձուաձեղ կը դառնայ հա...

—Դէհ, ուրեմն աշխատենք լաւ վարել նաւը, վրայ բերեց օգնականը ժպտալով՝ որ այդպիսի մի մեծ ձուաձեղ չը դառնանք իզուր։

—Ի՞նչպէս թէ իզուր, աւելացրեց նաւապետը։ Կարծում էք որ ուտողներ քիչ կը գտնուին այդ ձեր մեծ ձուաձեղի համար այս երկրում, որ վառիկների պէս մորթում, տապակում են մարդկանց...

Անկարելի է երևակայել թէ ինչ տմարդի խստութիւններ է գործ դնում Թուրք ոստիկանութիւնը դէպի ամեն մի ճանապարհորդ առհասարակ և դէպի ամեն մի հայ մարդ մասնաւորապէս, որ երկրից էլ լինէր սա։ Զինուորական պաշարման դրութիւնը տարիներ շարունակ անխնայ իշխում է ահա ամբողջ Թիւրքիայում։—Մեր ուղեկիցներից մէկը՝ բնիկ Տրապիզոնցի ու հետևաբար տաճկահպատակ հայ, որ իւր ընտանիքով Թիֆլիսից Ֆրանսիա էր ուղևորուում բժշկուելու՝ կանոնաւոր անցաթղթերն ու վկայականներ ձեռքին ունենալով, անկարող եղաւ գնալ, այցելել իւր ազգականներին իւր ծննդավայր քաղաքում և անմիջապէս —թեկուզ ոստիկանի հսկողութեամբ գալ, վերադառնալ շոգենաւ։ Նոյն վիճակն ունեցան Տրապիզոն այցելելու նկատմամբ և մեր միւս ճանապարհորդները, որոնցից հազիւ մի երկուսը միայն ցանկացան իջնել շոգենաւից և մակոյկով նաւել մինչև ծովեզրը՝ քաղաքի ներսը տեսնելու համար։

—Օլմազ, եասաք դրը, (անկարելի է, արգելուած է), կրկնում էր խռպոտ ձայնով մահիկի կարմիր դրօշակիր մակոյկից ճպռաչեայ ոստիկանը, որ ծովածոցի դեռ առաջին ջրագծի հսկողն էր և որ այնուամենայնիւ չէր մերժիլ անշուշտ մի կլոր բախշիշ ընդունելու։

– Տասը ռուբլուց էլ աւելի կընստի ձեզ Տրապիզոնի միջում զբօսնելը, ասում էր նաւապետը մի սիրունատես ու մաքուր այրի երիտասարդ ռուս ուղևորուհուն, որ մորթազոյն կեղծաչեայ կլոր դէմքին վայելուչ գլխարկը գլխին՝ ժապաւէնազարդ թուխ սեագոյն դէիրա հագած, եւաւ Բաթումից շոգենաւ նստեց մենակ՝ դէպի Ֆրանսիա և այլուր գնալու։ Ո՞ր մէկին բախշիշներ պիտի տաք։ Եւ արժէ՞ միթէ միշտ նոյն քոսոտ շներով լիքը այն կեղտոտ փողոցներով անցնիլ ու մանգալ։ Վերջապէս ի՞նչ պիտի տեսնէք այնտեղ, բացի ամեն տեսակ աղտոտութիւնն ու խեղճութիւնը։ Ահա՛ ձեզ մի լաւ դիտակ, աւելացրեց նա, վե՛ր գնացէք բարձր տախտակամածի վրայ և նայեցէք այնտեղից երբեմն Պոնտոսի մայրաքաղաք սպիտակագոյն ամֆիթէատրոնին, որ հեռուից Թիւրքիայի ծովեզրեայ գրեթէ բոլոր քաղաքների նման իւր արևելեան խառնաճաշակ նկարչական շէնքերով ու սրածայր մինարէթներով ասես բարեկարգ մի

բնակատեղի է երևում նայողի աչքին, մինչդեռ կատարեալ մի մտաապատրանք է այդ։

Թուրք ոստիկանութիւնը՝ համաձայն բոլոր Եւրոպական տէրութեանց միջև եղած Տաճկաստանի համար պարտադիր դաշնագրի, իրաւունք չունի որ և է օտար պետութեան նաւ մտցնելու առանց նորա նաւապետի հրամանի. մի հրաման, որ բացի Թրքամոլ Գերմանացի և մասամբ Աւստրիացի նաւապետներից համարեա թէ ոչ ոք չէ գործ դրել մինչև այսօր դաւաճանօրէն։ Իսկ ֆրանսիացի ու անգլիացի նաւապետների մասին խօսք անգամ չէ կարող լինել։ Ընդհակառակը՝ սրանք էին և են դարձեալ, որ Թուրք ոստիկանութեան անիրաւ հալածանքներից շատ անգամ ազատել, փրկել են իրանց ապաւինող ամեն ազգի մեծ ու փոքր, կամաւոր ու ակամայ փախստականներին։ Ամեն մի օտար պետութեան նաւ Թուրքաց ջրերում՝ նոյնն է թէ նոյն օտար պետութեան երկիր, ուր ոչ մի օտարազգի ոստիկան առանց տեղական իշխանութեան թոյլտուութեան չէ կարող մտնել։

Մեր նաւապետի հրամանով նաւ ելնել կարողացան միայն զանազան մրգավաճառ, մանրավաճառ մարդիկ, որոնցից մէկը Տրապիզոնի այլ և այլ տեսարանների նկարներով բաց-նամակների տոմսեր էր ծախում, որ և ուղևորներից ոմանք և մանաւանդ վերոյիշեալ ռուսուհին իսկոյն ձեռք բերին։

Այս ռուս տիկինը, որին ահա երկրորդ անգամ եմ յիշում այստեղ՝ իւր չափազանց սակաւախօս ու ասես գաղտնապահ վարմունքով, շատ էր սիրում առանձնանալ շոգենաւի դահլիճի մի անկիւնում և շարունակ ինչ որ գրել իւր համար՝ աշխատելով հեռու պահել, թաքցնել այն իւր հետ եղող առաջին կարգի բոլոր սակաւաթիւ ուղևորներից, որով և աւելի ևս գրգռում էր սրանց հետաքրքրութիւնը։ Երբեմն էլ մի ինչ որ կարմրակազմ գրքոյկ այն ձևով էր բռնում ձեռքին որ ոչ ոք չը տեսնէ թէ ինչ էր տպած կամ գրած մէջը։ Խիստ հակակղերական և կծու ազատախօս մեր նաւապետը, որ սակայն ամեն մի վայրկենին Աստուծոյ անունն էր տալիս՝ «Au nom de Dieu!» բացականչութեամբ, իւր խառնուփնդոր ու աւելի նիւթապաշտ փիլիսոփայութեամբ կարծելով թէ այրի տիկինը մի աղօթագիրք ունի ձեռքին և դուցէ ապաշխարելով ուզում է «կոյս» դառնալ՝ հարցնում էր իրան արդէն մտերմացած ճանապարհորդներին, թէ արդեօք ո՞վ և ի՞նչ է այդ խորհրդաւոր (mystérieuse) կինը։

—Դուք ամենից աւելի լաւ պիտի գիտենաք՝ պարզապէս և իրաւամբ պատասխանում էին նորան, դուք էք այստեղի տանտէրը...

Վերջապէս բաւականին երկար նաւելուց յետոյ՝ հետաքրքիրներն իմացան որ իրան այրի անուանող յիշեալ ուշագրաւ «միստերիոզ» տիկինը իբր թէ թղթակից է մի պարբերական հրատարակութեան և Ամերիկա է գնում Սէն-Լուի համաշխարհային ցուցահանդէսը այցելելու։ Թէ որչափ ստոյգ էր այս զրոյցը՝ ոչ ոքին հարկաւոր չէր անշուշտ ճշտելու. միայն Մարսէյլ հասնելուն պէս՝ մի այնպիսի անակնկալ և գրեթէ ժպտուն կերպով մի վայրկենի մէջ անյայտացել էր այս «խորհրդաւոր անծնունդին», որ մեր շոգենաւի աւելի քան տասնօրեայ նորան արդէն «մտերմացած» ուղեկցուհիները հիասթափուած՝ յուսահատութեամբ կարծեցին թէ ծովասոյզ է եղած նա Նեպտունի ժառանգների զովացուցիչ գիրկը ընկնելու...

Աւելորդ է ասել որ իւրաքանչիւր ծովեզրեայ քաղաքի առջև, ուր խարիսխ ձգելով կանգ էինք առնում՝ Պակէի ընկերութեան նոյնտեղի գործակալը իւրայիններով անմիջապէս նաւ էր բարձրանում հաշիւ ու համար տալու նաւապետին իրանց գործակալութեան վերաբերեալ։ Մենք էլ մեզ հետաքրքրող զանազան բաների, այլ և այլ իրողութիւնների մասին հարց ու փորձ անելով՝ ի թիւս այլոց իմացանք որ Տրապիզոնի մեր առաջնորդական ընդարձակ թեմը թափուր մնալով՝ սպասում էին որ մի նոր ընտրեալ առաջնորդ հաստատուի կայսերական իրադէով։ Եւ այս հաստատութիւնը իրօք տեղի ունեցաւ անցեալ դեկտեմբերին տաճկահայոց յայտնի եպիսկոպոսներից մէկը այն է Արսլանեան սրբազանի նշանակուելով, որ և տարոյս յունուարի սկզբին մուտ գործեց Տրապիզոն ազգապետ—թեմակալին արժանաւոր ընդունելութեամբ։

Սամսունից մինչեւ Ինէպոլի ուղեկից եղաւ մեզ մի պատուական նորատի երիտասարդ Մկրտիչ Հէքիմեան ազգանունով, որ տկարութեան պատճառով ուսման ասպարիզից վերադարձած լինելով իւր ծննդավայր քաղաքը՝ շոգենաւական ընկերութեան գործակալ իւր հօր օգնականի ժամանակաւոր պաշտօնն էր կատարում հարաւային կողմերիչ արևի տակ։ Այս գեղեցկադէմ երիտասարդ պարոնը, որի վառվռուն աչքերում ընկերասէր ու աշխոյժ մի բնաւորութիւն էր կարծես ցայտում, անմիջապէս ծանօթանալով մեզ ամենիս հետ՝ այնպիսի մի զուարթութիւն մտցրեց մեր նաւող ընկերութեան մէջ, որ անկարելի էր չը նշմարել նորա տաղանդաւոր ընդունակութիւնը դէպի այն ամենը՝ ինչ որ գեղեցիկ է, լաւ։—Շոգենաւի դաշնակը (piano), որ մ ինչև այն օրը փակ ու խուլ էր մնացած, նորա շնորհիւ սկսեց ձայն հանել և նուագել զանազան համառօտ հատուածներ,

թէև հարկաւ ոչ երաժշտական արուեստի ճշտութեամբ։ Էլ զանազան լեզուով ոտանաւորներ արտասանել ասես, էլ մենդրգ և խմբովին երգեցողութիւն նուագարանի ներդաշնակութեամբ իւր կրտսեր եղբօր և այլոց հետ ասես չը մնաց որ չը լսուէր առաւելապէս երեկոյեան ժամերին էլէքտրալոյս շոգենաւի դահլիճում։ Որ մեր հայրենակից տաճկահպատակ գաւառացիներից մանաւորապէս ծովեզրեայ բնակիչները մեր կողմի գաւառացի ազգայիններից համեմատաբար աւելի քաղաքավար, ընկերասէր և աւելի ընդունակ են արուեստի, գեղարուեստի, ուսման հայրն՝ այս բանը հայկական կեանքում վաղուց արդէն նկատուած մի երեւոյթ է, որի բազմաթիւ ապացոյցների թուին մի թիւ էլ կարող էր աւելացնել մեր շոգենաւի սակաւաժամեայ այս սիրալիր հիւրը, սակաւաժամեայ՝ վասնզի երկու օր միայն նաւելով մեզ հետ՝ ստիպուած էր նա Ինէպոլի իջնելու։ իւր հետ տանելով առանձին հաճութեամբ իրան նուիրած գրքոյկներս որպէս նշան մեր անկեղծ ծանօթութեան։ Շոգենաւի երկրորդ և երրորդ կարգի ճանապարհորդների մէջ կային նոյնպէս մի քանի տաճկահայ անձինք, որոնք ժամանակով ինքնատարագիր, եթէ չ՚ասեմ փախստական եղած այլ և այլ կողմեր, գալիս էին մեզ հետ հոգու չափ տենչալով վերադառնալ և մտնել Կ. Պոլիս։ Սակայն ուղղափառ մարգարէի այժմեան յաջորդի անգութ ոստիկանութիւնը իւր ամեն կարգի ու տեսակի լրտեսներով այնպէս էր վխտում իրանց մայրաքաղաքի թէ քարաշէն ծովափանց վրայ և թէ նորեկ շոգենաւի շուրջը, որ յիշեալ ուղևորները տախտակամածից անգամ նշանացի խօսել ևս չէին կարողանում իրանց հարազատների հետ, որպէս զի սրանց էլ, որ դիմացի ծովափանց վրայ վտարանդի այս ու այն կողմն էին շրջում, վտանգի մէջ դնեն։ Ուստի և մեր ուղեկիցները շարունակում էին մեզ հետ իրանց ճանապարհը մինչև ուր որ կարող էին հասնել և շոգենաւից իջնելով, մի ապահով ու ազատ տեղ գտնել։

Անկասկած շատ աւելի սարսափելի վտանգների մէջ էին գտնուած եղել իրանց բնավայրում մինչև Մարսէյլ մեզ հետ նաւողներից մի երկու հայ ընտանիք՝ մօտ քսան հոգուց բաղկացած, որ հայոց ազգակործան ճակատագրին ենթարկուելով՝ Խարբերդից Կալիֆօրնիա էին գաղթում, կարծես աւետեաց երկիրը գնալու, ուր սրանց միամիտ կարծիքով երևի կաթն ու մեղը են բղխում։ Բայց ինչև է, եթէ ամեն բանից զրկուած տուն տեղից հալածուած անտէր ու անլեզու գաղթողի բոլոր անտանելի դժուարութիւններն էին կրում և դեռ պիտի կրէին

սրանք և սրանց նման շատ ուրիշ հայեր, գոնէ իրանց լոկ կեանքն ազատելու մի միջոց էին գտել՝ այն է փախչել, հեռանալ հայրենիքից, որ բռնակալութեան ու բարբարոսութեան խեղդող ճանկերով չը զոհուին այնտեղ այլոց պէս հազարաւոր հայ անմեղ զոհերի արիւնով ներկած սեղանի վրայ...

Երեսուն տարուց աւելի կայ որ Սև Ծովով ու Միջերկրականով քանիցս անգամ անձամբ վերադառնում եմ, և ամեն անգամ դեռ միայն իմ տեսած ամեն մի շոգենաւում բազմաթիւ հայ գաղթողների եմ պատահում, որոնք այս խարբերդցիների պէս իրանց կենսատու, սիրելի «վաթանը» թողած՝ քայքայուելով տարագիր են լինում և իրօք եղան դէպի օտար, անյայտ կորստեան կողմերը։ Երևակայեցէք ուրեմն թէ որքան մեծ պիտի լինի իրանց հայրենիքից հեռացող այն քաջբախտ գաղթողների թիւը, որոնց մասին ասես պարբերաբար լուր ենք առել միայն և տակաւին առնում, եթէ անձամբ չենք տեսնում... Եւ ահա հեռու չէ կարծեմ այն սոսկալի ժամանակը, երբ հայերի նկատմամբ Թիւրքիայի ձեռք առած վայրենի ու բարբարոս քաղաքականութեամբ և մեր կարճատես, յամառ ու քայքայիչ գործունէութեամբ բոլորովին կդատարկուին Հայաստանը ու Փոքր Ասիան իրանց ընիկ հայ ժողովրդից։ Գնա՛ ու յետոյ քո քարոզած ու փայփայած յեղափոխական ու ընկերավարական ազատութիւնը գործ դիր անտէր ու թշուառ հայ աւերակների ու գետնին հաւասար մերոնց գերեզմանների համար... Սակայն ինչ փոյթ, երևի կասեն ինձ. համաշխարհացի քաղաքացիների համար մի՞թէ մի և նոյնը չէ ովքեր էլ լինին ապագայում մեր հայրենիք Հայաստանի բնակիչները, թէկուզ զուլուսների երկրից եկած մարդակերպ արարածներ։ Չէ՞ որ սրանք էլ իրաւունք ունին մասնակից լինելու «համաշխարհային կուլտուրականութեան»...

—Ապա ո՞վ է հիւանդ՝ գաղթողներին մօտենալով հարցրեց նաւապետը, որին իմաց տուին թէ երրորդ կարգի ճանապարհորդներից ոմանք հիւանդացել են ջերմով։

—Ահաւասիկ սրանք են, պատասխանեց տարիքով համարեա մի պառաւ կին, որ կարծես գաղթողների առաջնորդուհին էր՝ ցոյց տալով երկու ջահել տղաներին, որոնք բռնուած էին սաստիկ տենդով։ Ջահել տղաներ, որոնք իրանց հարազատների կարծիքով երևի յոյս ու ապաւէն պիտի դառնային իրանց ընտանիքների համար նոր հայրենիք «ոսկեբեր» Կալիֆորնիայում...

Թէև Պակէի ընկերութիւնը նաւող բժիշկներ չունենալով իւր շոգենաւների վրայ՝ նաւահանգիստների վարձառու բժիշկներով, ինչպէս մեր մէջ ասում են, «եօլլա է գնում», այսինքն

բաւականանում է, բայց այնուամենայնիւ նաւապետները իրանց օգնականներով հանդերձ այնքան փորձուած մարդիկ են որ հարկաւոր դէպքում, գոնէ մինչև առաջին տեղ հասնելը, հեշտութեամբ կարողանում են սկզբնական օգնութիւնը հասցնել հիւանդին իրանց մօտ միշտ պահած դեղարանով։ Այսպէս էլ արին յիշեալ ջերմոտ տղաներին։

Սրտանց ցաւակցելով և մի քանի անգամ այցելելով տախտակամածի վրանի տակ տեղաւորուած այս ողորմելի գաղթողներին թէ նաւապետի հետ և թէ մենակ՝ իրանց չարն ու բարին իմանալու, հայրենակից «բժիշկ մը» կարծեցին ինձ խեղճերը՝ ուրախութեամբ հարցնելով՝

—Հայ բժիշկ մըն էք, ազնիւ պարոն...

—Ո՛չ, սիրելիք, բժիշկ չեմ, որովհետև «ինքս ինձ դեռ չեմ բժշկել», բայց հիւանդին լաւ «բժշկողի» բարեկամ կարող եմ լինել...

—Աստուած կեանք տայ, վրայ բերեց գոհ սրտով վերոյիշեալ պառաւ առաջնորդուհին, բարեկամութեամբ ալ աղէկ բժիշկ կըրնաք ըլլալ... Մինչև Մարսէլլա մեզ հետ կըլլաք անշուշտ, շարունակեց կինը. հոնտեղէն Հավր պիտի երթանք որ նաւ նստինք Ամերիկա երթալու։ Մեզմէ հոն մարդիկ կան, կը սպասեն մեզ։ Կերթանք, «ամա» չենք գիտեր հոն ինչպէս կըլլանք, կըսեն աղէկ է... Է՞հ փառք Աստուծոյ, հառաչեց պառաւը, կեանքերնիս գոնէ կրցանք ազատել...

Լոյս առաւօտ էր որ հասանք Պոլիս։ Տաճկահպատակ հայ գաւառացիներից մի երկու հոգի, որոնք իրանց անցագրերի հետ մայրաքաղաք մտնելու յատուկ յանձնարարականներ ևս ունէին թուրք վարչութեան կողմից՝ կարողացան ցամաք իջնել և գնալ իրենց գործերի, իսկ միւս տաճկահայ ուղևորները, որոնց մասին վերև էլ յիշեցի, մնացին շոգենաւի վրայ «մեխուած»... Օտարահպատակներից, մանաւանդ կանայք, իրանց անցագրերի վրայ թուրք հիւպատոսարանի տեսագիր (visa) անգամ չունենալով՝ կարողացան նոյնպէս իջնել և բախշիշներով անցնել չարամիտ ոստիկանութեան շղթայից, Ստամբօլում մի երկու ժամ կառքով զբօսնելու պայմանով միայն։ Բայց ինչ վերաբերում էր մեր շոգենաւի մնացած հայ ճանապարհորդներին անխտիր՝ Տրապիզոնի թշուառ ոստիկանի կրկնած նոյն «օլմազ, եասաք դըր» խօսքն էինք լսում, որ կոպիտ ասիացուն յատուկ անտարբեր յամառութեամբ կրկնում և երեքկնում էր նաւամատոյցի առջև կեցած փաղիշահի կարգապահը։

—Այսպէս չի լինիր, պարոն նաւապետ, մի կարգադրու-

թիւն արէք, ի սէր Աստուծոյ, դիմում էինք նորան ասելով՝ հինգ օր է ծովի վրայ ենք, կարելի է որ մենք էլ ենք ուզում մի փոքր ժամանակ ցամաք իջնել և...

—Ի՞նչ պիտի իջնէք, անէք այս անիծուած երկրում, պատասխանում էր նա արդար բարկութեամբ իրաւամբ վրդոված այնպիսի անասելի դրութեան վրայ։ Հօ տեսնում էք ինչ բարբարոս վիճակ է տիրում այնտեղ։ Մի քանի ժամից յետոյ մեր ճանապարհը շարունակելու ենք։ Խնդրեմ մի գնաք ներքև. չէ որ հայեր էք։ Նայեցէք ամեն կողմը թէ ինչ գրգռիչ լրտեսներ են վխտում ծովափնց վրայ, մանաւանդ հայերին հսկելու։ Ձեռաց մի շինծու յանցանք կը փաթաթեն վզներիդ ու գնա յետոյ... թէ ո՞ւր և ո՞ր ոստիկանատուն կը տանեն սատանան գիտէ։ Արի ու տես հիմայ որ իմ բոլոր գործը պիտի թողնեմ և ձեր ետեը գամ որ ազատեմ իհարկէ. և այն էլ ե՞րբ և ի՞նչպէս, ով գիտէ։ Գուցէ և հիւպատոսների միջամտութիւնն էլ հարկաւորուի, որովհետև՝ չէ՞ որ չեմ կարող թոյլ տալ որ շոգենաւիս վրայ եղած որև է մէկին ձեռնամուխ լինին, բանտարկեն. իսկ մենք շուտով պիտի մեկնինք։ Շոգենաւը իւր նշանակած ժամից աւելի սպասել չէ կարող։ Նաւի վրայ մնալով՝ նոյնն է թէ ազատ Ֆրանսիայումն էք դուք։ Ամեն բան ունինք այստեղ, շարունակում էր նաւապետը իւր համոզիչ մենախօսութիւնը. և վերջապէս ինչ որ կուզէք՝ կարող էք այն էլ բերել տալ, գնել և այլն։ Ձեզ հօ արդէն ծանօթ է Կ. Պոլիսը, եղել էք, ընակուել էք մի ջում։ Արժէ՞ մի թէ՞ հիմայ մի ժամ զբօսնելու համար այն կեղտոտ ու միշտ քոսոտ շներով լիքը փողոցներում դժոխային արկածներին ենթարկել իւր անձը։ Այս քամբախտ երկրի ընդհանուր շրջանկարը շոգենաւից աւելի լաւ է երևում։ Բայց եթէ անհրաժեշտ գործ կամ ասելիք ունիք քաղաքում եղած մէկին կամ մի՞ւսին՝ խնդրեմ նամակ գրեցէք։ Ապահով եղէք որ ես տեղ կը հասցնել տամ անխափան...

Նոյն միջոցին ներքևում՝ ծովափնց վրայ անկարգ անց ու դարձ էր անում արևելեան խայտաբղետ ամբոխը, որի միջից զանազան մանրավաճառներ և մանաւանդ լրագրածախներ դէպի մեզ վեր նայելով՝ բարձր ու երկար քթասաց ձայնով աղաղակում էին Կ. Պոլսի բազմալեզու թրքամիտ օրագրների վերնագիրները։

— Ահաւասիկ և տեղական լրագիրներ, աւելացրեց նաւապետը, առէք, կարդացէք. տաճկական «ազատամիտ» գրաքննչի բովով անցած և նորա ձեռքով համեմած նորութիւններ կիմա-

նաք, որ թէև բովանդակութեամբ լիմալ ու անմիտ գրուածներ կարող են մեզ երևալ, բայց հաւատացնում եմ իրանց ընորոշ յատկութեամբ շատ հետաքրքիր են օտարականի համար... Միայն ի սէր Աստուծոյ մի գնաք ներքև։

Անկասկած իրաւունք ունէր նաւապետը մեզ զգուշացնելու. որովհետև նորա յիշած անիրաւ դէպքերի նման եթէ մեզ էլ մի բան պատահէր՝ առաջինը չէր լինիլ հարկաւ նորա համար։ Սակայն այնուամենայնիւ մեզանից զոնէ մէկին և յատկապէս ինձ, այո, անհրաժեշտ էր մի կարևոր գործի համար ցաժաք իջնել, որ և պատահմամբ կարողացայ ես յաջողցնել շոգենաւ վերելած մի տեղացի հեղինակաւոր ծանօթ անձի միջնորդութեամբ։

Գնացի ներքև... Նաւամատոյցի պահապան ոստիկանը անցագրիս թերթիկները շուր ու մուր տալուց յետոյ՝ հրամայեց իւր մօտ կեցածներից մէկին—երևի լրտեսութեան ստորին գործակալ—«լրտեսիկին», առաջնորդել ինձ անցագրովս դէպի «սալօն», որ թարգմանի տախտակաշէն մի երկարաձև կեղտոտ սրահ, ուր շարուած թէ նստոտած և թէ ոտքի վրայ կեցած էին անցագիրներ ստուգող և իրանց ստորագրութեամբ ու կնքով վաւերացնող թուրք ոստիկանութեան միշտ չարագուշակ լուերը.

—Ձե՞րն է այս անցաթուղթը, հարցնում է ինձ սրանցից առաջինը։

—Այո...

—Ո՞վ էք դուք, Ռուսաստանցի՞ք։

—Այո, տեսնում էք անցագիրս ռուսական է։

—Ուրեմն Ռուսաստանցի հայ էք...

—Այո, հէնց այդպէս։

—Ինչո՞ւ էք իջնում Պոլիս և ո՞ւրքան պիտի մնաք...

—Ուզում եմ մի կառք նստել և փոքր ինչ անցնել զբօսնել (!) ձեր «Ստամբուլում»...

—Հը՞մ, շատ լաւ. ուրեմն շուտով պիտի վերադառնաք շոգենաւ ձեր ճանապարհը շարունակելու, գոհ ձայնով համաբերա բացատրեց իրան իմ դիտաւորութիւնը այս առաջին ինկվիզիտորը՝ անցագիրս յանձնելով իւր կողքին նստած երկրորդ պաշտօնեային։ Սա էլ մի ինչ որ մատեանի մէջ արձանագրելով նշանակում էր առաջինի հարցուփորձը, կարծես բաւական չը համարեց այն և ինքն էլ սկսեց դարձեալ հարցեր առաջարկել։

—Քանի՞ տարեկան էք։

—Գրեցէք որքան կամենաք...

—Ի՞նչով էք պարապում, ինչ գործի էք։

—Ոչինչ չեմ շինում այժմ, ճանապարհորդ եմ...

—Ի՞նչպէս թէ ոչինչ, այժմեանի համար չեմ ասում, այլ առհասարակ։

—Առհասարակ ճանապարհորդում եմ...

Թշուառականը, որ յառած նայում էր վրաս՝ ասես կամենալով հոգոյս ներսը թափանցել ամէն բան իմանալու, զարմանալի է թէ ինչու իրան խիստ խորթ թուաց, երբ ասացի թէ «ոչինչ չեմ շինում», քանի որ կատարեալ պարապ ու միանգամայն յարածծող վամպիրներով լցուած է իրանց անօրէն փաղիշահի բռնաբար տիրած աշխարհը։ Վերջապէս տեսնելով որ համբերութիւնս հատնում է և ես արդէն իմ զզուանքս եմ ուզում արտայայտել և... իսկոյն մի ինչ որ նշանակեց նա անցագրիս վրայ և տուեց մի երրորդ ինկվիտորին։ Սա էլ իւր հերթին իրանց քաւարանի կնիքը դնելով վրան, ասաց ինձ՝

—Ձեր անցագիրը այստեղ կը մնայ. համեցէք, գնացէք ուր որ կամենաք՝ ման եկէք քաղաքումս. յետոյ կը գաք դարձեալ այստեղ և ձեր անցագիրը յետ ստանալով՝ կարող էք շոգենաւ մտնել... Այս ասելով աչքով արեց մինչև «Սալօն» ինձ առաջնորդող թէ «լրտեսիկին» և թէ մի ուրիշին՝ անշուշտ՝ աւելի վստահ մի լրտեսին և ես դուրս գնացի աղտոտ «սալօնի» իրանց ցոյց տուած հակառակ դռնով մի փողոց։ «Լրտեսիկը» ինձնից չէր հեռանում։ Գլուխը կախ ձգած երբեմն առաջս էր կտրում, երբեմն էլ կամաց ետևիցս գալիս։ Անցնելով Ղալաթիա թաղի իմ գիտցած փողոցներով՝ նախ ուզեցի մտնել այս առևտրական թաղի մէջ գտնող մեր Լուսաւորիչ Նշանաւոր եկեղեցին՝ հասցէներ և այլն իմանալու։ Դուրս գալով այն տեղից, դրանը տեսայ որ «լրտեսիկը» սպասելով ինձ այնտեղ խօսում է վերոյիշեալ այն «մի ուրիշի» հետ, որ նոյնպէս գայլաքարշ հետևել էր ինձ «սալօնից»։ Կանչեցի մի ծածկած կառք և նստելուս պէս՝ տեսնում եմ որ կառապանի կողքին առանց այլևայլութեան ինքն իրան բազմում է «լրտեսիկը»... Բայց արի տես որ ինձ հսկելն ու հետևելը չը վերջացաւ այս «լրտեսիկով», որ դէպ ու անդէպ, չը գիտեմ ինչու, յետ էր նայում իւր նստած տեղից։ Հետաքրքրութեամբ ես էլ մէկ յետ եմ նայում և նկատում եմ որ այն «մի ուրիշը» հիմայ արդէն ձի հեծած հետեւում է կառքիս... Տէր ողորմեա, այ քեզ «հսկումն», բայց «ոչ ի գիշերի»... Վերջապէս հասայ ուր որ

պիտի գնայի և երկու ժամի չափ համարեա մնացի այնտեղ... «Լրտեսիկը» և այն հեծեալ թշուառականը այս բոլոր ժամանակ ասես կրօնական հաւբերութեամբ սպասել են ինձ ժօտակայ մի փողոցում, մինչև որ այցելած տան դռնից դուրս գամ, և նոյն ձևով ու նոյն իմ վարձած կառքով, նոյն առօք փառօք հսկողութեամբ կարծես մի բանտարկեալ «փաշա» կամ «էֆէնդի» գամ, վերադառնամ այն գարշելի «սալօնը»։ Այստեղից անմիջապէս շոգենաւ վեր ելայ որ փոքր ինչ ազատ շունչ քաշեմ զզուելի ու մարդակուլ «Ստամբուլի» խեղդիչ մթնոլորտի մէջ մի ժամ տանջուելուց յետոյ...

Երեկոյեան ժամի վեցն էր որ մեր «Իմպերէթին» թողեց, հեռացաւ գեղատեսիլ Բոսֆորի բնութեամբ հարուստ, հրաշալի, իսկ անսահման բռնակալութեամբ սոսկալի դարձած եզրերը և սկսեց ընթանալ դէպի Մարմարայի, Արշիպելագոսի և ապա Միջերկրականի կապտագոյն յուսատու ծովերը։

Կ. Պոլսից մեր շոգենաւ նստող մի տասնեակ նոր ուղևորներից մեր հետաքրքրութիւնը շարժող մի քանի հոգի գտնուեցան, որոնցից ոմանք Ֆրանսիա էին գալիս և ոմանք էլ Անգլիա գնում։ Սրանցից մէկը մի կրթուած Լևանտացի՝ Անգլիայի հպատակ, որ շատ լաւ ճանաչում էր «կարմիր» Սուլթանի և սորա տմարդի կառավարութեան հոգեբանութիւնը՝ ի թիւս այլ միջոցների հետևեալ քաղաքական դեղատոմս էր առաջարկում բարբարոս լծի տակ հեծող ու անգթաբար զոհուող ժողովուրդների համար։ Ես համոզուած եմ, ասում էր նա, որ եթէ այդ հալածուած ազգերի զանազան ֆգործիչների ձեռքով Եւրոպայում և այլուր լոյս տեսնող պարբերական և այլ տեսակ հրատարակութիւններից զատ՝ քաղաքակիրթ աշխարհի մայրաքաղաքների ամեն մի մեծ թերթերում, այո, անպատճառ մեծ, յայտնի, ազդեցիկ թերթում, ամեն շաբաթ կամ իւրաքանչիւր ամիս, պարբերաբար և անընդհատ մի մի յօդուած երևայ Թիւրքիայի դէմ՝ չէք կարող երևակայել թէ որ աստիճանի կը նպաստէ ճնշուած ժողովուրդների արդար դատին։ Այո, Փաղիշահին և իւր հլու, գերի կառավարութեանը ոչինչ բան այնչափ չէ ազդում, որչափ արտասահմանի մեծ լրագրների պարբերաբար իրանց դէմ ուղղած գրութիւններ... Եւ այս բանը իրագործելու համար ես գոնէ այսպէս կը վարուէի, շարունակում էր բացատրել իւր միտքը Լևանտացին։—Ազատ մայրաքաղաքներից մէկի մէջ առ այժմ ունենալով խմբագրական մի փոքրիկ գրասենեակ (բիւռօ,)՝ կաշխատէի լուրջ ու հիմնական յօդուածներ պատրաստել, այո, պատրաստել, գրել և գրել տալ թէ մերոնց և թէ այլոց իմ առաջադրած պաշտ-

պանած դատին վերաբերեալ այնպէս և այն ձևով, ինչպէս որ հարկաւոր է։ Եւ այս պատրաստի յօդուածներով կը ներկայանայի այս կամ այն մեծ լրագրի խմբագրապետին՝ առաջարկելով որ տպէ այն իւր թերթում... վճարով ի հարկէ։ Եւ հաւատացէք որոյայս խմբագրապետներից ոչ ոք չէր մերժիլ այդ տեսակ մի առաջարկ, ինչպէս որ չեն մերժում նրանք մեծ յայտարարութիւններ, ընդարձակ ծանուցումներ և կամ «ռէկլամներ» տպելը։ Մի կարծէք թէ միևնոյն բանը չէ այս ժամանակակից մամուլի համար։ Դրամ պէտք է... Պէտք է միայն «վճարել», ասում եմ, և անպատճառ կը տպեն նրանք. ես այս բանը փորձով գիտեմ։ Աւելացրէք որ մեր պաշտպանած դատը մարդկային արդարացի ճշմարտութեանն է վերաբերում՝ մի գործ, որ ներկայումս արդէն բաւականին կողմնակիցներ կարողանում է գտնել քաղաքակրթուած աշխարհի մեծ մամուլի մէջ անգամ. մեծ մամուլ, որ «ոչ միայն սեպհական հացիւ կայ, այլ և ամենայն յօժարատու դրամական բանիւ»...

Թէպէտ պարոն Լևանտացու այսպիսի մի առաջարկութեան մասին այլ և այլ առարկութիւններ եղան իրան ունկնդիր ուղևորների կողմից, սակայն մեզանից ոչ ոք հիմնովին չը հակառակեց նորան համանման մի գործունէութեան օգտաւէտ ու նպատակայարմար լինելուն, որովհետև յայտնի է թէ հայերս այդ տեսակ գործակալութիւն հաստատելու և Լևանտացու ասածի համեմատ գործել տալու փորձ չենք արել երբէք։ Թէև յիշեալ մեծ լրագրներում հայերիս մասին երբեմն երբեմն երևացել և կամ այժմ էլ մասամբ երևում են պատահական գրուածներ և այլն, որ իհարկէ միևնոյնը չէ։

Թիւրքիայի մայրաքաղաքից մեր նաև մոտ նորեկ ուղևոր հիւրերից կարող ենք յիշել՝ նոյնպէս մի պատուական հայ կաթոլիկ ընտանիք՝ տիկին և պարոն Անտուան Հէքիմեան, որ «Ռէժի» անուանեալ պետական ծխախոտի մենավաճառ ընկերութեան բոլոր վերատեսուչներից միակ հայն է նոր պաշտօնով Մէտիլին կղզու վրայ։ Այս այն կղզին է, որ վերջերս մի տեսակ ռազմավարական կամ աւելի ճիշտն ասել՝ «դրամավարական» նպատակ է դառել իւր հարուստ մաքսատնով Եւրոպական «միացեալ» անուանած և «ելլանչի փահլէվանի» դեր կատարող նաւատորմիղի համար Թիւրքիայի դէմ ցոյց անելու դէպքում...—Կային դարձեալ պոլսեցի այլ հայեր ևս՝ վաճառականներ և այլն և անգլիախօս մի համակրելի հայ վարժուհի՝ Օրիորդ Նուարդ Եօլճեան ազգանունով, որ ուսման և մանկավարժութեան մէջ կատարելագործուելու նպատակով Լօնդոն էր ուղևորուում։ Աւելորդ է ասել որ այս բոլորեցունց հետ ես եր-

կար խօսակցութիւն ունեցանք՝ մեր չարն ու բարին միմեանց հաղորդելով, որի մի առ մի յիշելը այստեղ շատ հեռու կը տանէր մեզ։

Այսպէս Բաթումից սկսած համարեա տասներկու օր նաւելուց յետոյ հասանք Մարսէյլ։ Սորա մեծաշէն ու լայնարձակ նաւահանգստի վրայ մեր շոգենաւին սպասող ծառայողները Ֆրանսիայի մաքսատան ոչ թէ ճանապարհորդներիս անցագրերն և ով ինչ լինելն էին հարցնում, այլ թէ մաքսին ենթարկելու ինչ բան կարող էինք ունենալ մեր ուղեգոյքի (bagage) մէջ իրանց յայտնելու, օրինակ ծխախոտ, լուցի և այլն, որ Ֆրանսիայում պետական մենավաճառին են պատկանում։

—Ոչինչ չունինք յայտնելու, պատասխանում էին մեզանից շատերը, ուղում էք՝ բաց կանենք, տեսէք։

—Լաւ ուրեմն, անցէք, տարէք, ասում էր մաքսաւորը սպիտակ կաւճով խաչ դնելով ուղեգոյքի վրայ։

Դժբախտաբար անկարող եղայ այս անգամ մի քանի օր մնալ համաշխարհային վաճառաշահ այս մեծ նաւահանգիստ քաղաքում, որպէս զի տեղոյն հայ փոքրաթիւ գաղութի այժմեան վիճակի մասին կարևոր լուրեր առնէի ձեզ հաղորդելու. այնպէս որ հազիւ թէ առիթ ունեցայ տեսնուելու և ծանօթանալու Մարսէյլաբնակ մի երկու հայ պարոնների հետ։ Սրանցից կարող եմ յիշել պ. Սրապեանին, որ Էրզրումի իրանց առևտրական տան ներկայացուցիչ է հաստատուած այնտեղ իւր պատուական հայ ընտանիքով։ Այս պարոնի մօտ կայ հին հռոմայեցւոց մի շատ հետաքրքիր արձան, որ մասնագէտ հնաբաններին ասելով՝ ներկայացնում է հռոմէական մի կայսրուհի և շինուած պիտի լինի մօտաւորապէս 79 թուականին ք. յ.։ Արձանը, որ գեղեցիկ ճերմակ մարմարիոնից քանդակած իսկապէս մի անդրի է 80 սանտ. երկարութեամբ և 150 կիլօ ծանրութեամբ՝ գտնուած է մի քանի տարի առաջ հիւսիսային Աֆրիկայի Տրիպոլիի Leptus Magnus—Մեծ Լեպտոսի—նախնի քաղաքի աւերակների մէջ, ուր ներկայումս... արաբական մի աւան կայ Հոմս կոչումով։

Հռոմէական գրեթէ երկհազարամեայ այս հնութեան այժմեան տէրը, որ Կ. Պոլսից մինչև Մարսէյլ մեզ հետ էր ճանապարհորդում, լսած լինելով Եւրոպացի մի երկու հնախօսի նըպաստաւոր բերանացի կարծիքը իւր սեպհականութեան մասին, զուր տեղը շատ թանգ գնով վաճառի էր հանել այն. այնպէս որ Փարիզի Լուվրի հարուստ թանգարանի վերատեսչին էլ բաւականին բարձր թուաց պահանջած 10,000 ֆրանկ գումարը։ Ուրեմն մնում է որ արձանի իսկական արժէքը հնագէտ մի

յանձնախմբով որոշուի վերջնական կերպով, և եթէ նորա այժմեան հայ սեպհականատէրը չէ ցանկանում նուիրել այն իւր ազգային մի հաստատուն հիմնարկութեան, թող ուրեմն այդ հնութիւնը տարուի և դրուի մի յայտնի թանգարանի դարանում, որպէս զի հնախօսական պատմութեան նիւթ դառնայ ընդհանրութեան համար...

Մարսէյլից դէպի Փարիզ երկաթուղու մեզ տանող արագնթաց գնացքը հազիւ թէ շարժուել էր Լիոնի կայարանից, որ մեր վագոն նոր մտած և դիմացս նստած ազնուակերպ տեսքով մի օտարական պարոն թոյլտուութիւն խնդրեց ծխելու։ Նորա այս քաղաքավար՝ կրթուած մարդուն յատուկ առաջարկած խօսքը առիթ եղաւ որ մենք ծանօթանանք միմեանց հետ և մինչև Փարիզ հասնելը չահաւէտ մտքերի ու հետաքրքիր խօսակցութեան փոխանակութիւն ունենանք։ Այս պ. օտարականը Ժորժ Դամբման անունով, որ ամերիկական քաղաքացի է և Ֆրանսիա է բնակւում հանքային և այլ վաճառաշահ գործերով զբաղուելով՝ օտար չէ եղած և ժամանակակից աշխարհագրական ու տնտեսագիտական գրականութեան ասպարիզից։ Սա իւր աշխատակից պ. Նօէլ Վէռնէ ֆրանսիացու հետ միասին յօրինել և 1900 հրատարակել են Լիոնում մի ընդարձակ գիրք մօտ 800 մեծադիր էջերից բաղկացած, որ և պսակուել է ֆրանսիական Ակադէմիայի և Փարիզի Առևտրական աշխարհագրական ընկերութեան մրցանակներով։ Այս ստուար հատորի վերնագիրն է՝ «Les Puissances Etrangères dans le Levant» և այլն—օտար պետութիւնները Արևելքում—, որի մէկ օրինակը ինձ ընծայելու ցանկութիւն յայտնեց վերոյիշեալ իմ խօսակից պ. հեղինակը՝ խնդրելով ինձնից հաղորդել իրան Փարիզի իմ հասցէն։

Որպէս այս մեծ «մատեանի» մասին, որ պատիւ ունեցայ ստանալու և որին արժէ առանձին մի մատենախօսական նուիրել, մանաւանդ որ հայերիս վերաբերմամբ ևս զանազան սխալ թէ ուղիղ տեղեկութիւններ է ամփոփում իւր մէջ, նոյնպէս և Փարիզի մեր ուշադրութիւնը գրաւող այլ բաների, եղելութեանց մասին գրի առնելիքս ներկայ ճանապարհորդական յիշողութիւնիցս չը վերջացրի տակաւին...

Առաւօտեան լուսասփիւռ արևը պայծառ փայլում էր բարձր հորիզոնի վրայ, որ տասնուչորս օր ճանապարհ անցնելուց յետոյ՝ հասայ ես վերջապէս Ֆրանսիայի մայրաքաղաքը և յոգնած քայլերս ուղղեցի դէպի իմ սովոր ու սիրած Լատինական թաղը...

Ն. ՅԱՐՈՅ

ՑԱՌԱՋ

Դու վհատո՞ւմ ես, եղբայր իմ տանջուած
Անարգ ստորութեան այս նեղ օրերին.
Խոր վշտի պսակ ճակտիդ քոլորած
Անէծք ես կարդում քո ծնուած օրին...

Դու այսքան դարեր դիմացկուն սրտով
Կրեցիր լուծը նամարդ իսլամի.
Այսօր լալիս ես յուսահատ ձայնով
Զնոքերդ ծալած, մատնուած արցունքի...

Տանջանքը դէմքիդ, վրէժով վառուած
Կանգնիր դուշմանիդ դու դէմ յանդիման.
Թէ մոռնալու ես..., վեհ պատուով զինուած
Մեռիր, միմիայն հերոսի՞ նման...

Անճար ենք, եղբայր... վշտով սպանուած...
Դուշմանն անգութ է... էլ ի՞նչ ելք մնաց...
Դէ՛ ել հրապարակ դու կրակ կտրած
Զարկիր ու զարկուի՛ր վէրքդ հովանա՛յ...

Ցառա՞ջ մոլեգին... երբ այսքան դարեր
Դուշմանի սրին մենք սիրտ տուեցինք,
Այսուհետեւ էլ կուինք անարեր.
Մենք հայ ծնուել ենք, հայ էլ պիտ մեռնինք...

Յ. ԽԱՆԷԱՐԵԱՆ

ԲԵՀԱՅԻՆԵՐ ԿԱՄ ԲԱԲԻԶՄ *)

(Վերջ)

53. Բէհան բացարձակապէս հրամայած է.—«Ով որ ինքն իրեն աստուածային յայտնութիւն, մարգարէ, գուշակ, գերագոյնի հետ յարաբերակից և նրանից ներշնչուած յայտարարէ, նա զրպարտիչ է, ստախօս (միւֆթիերի քէզզաբ)։ Եթէ որև է մէկը հազար տարուց առաջ իրեն երկնքից գերագոյն իշխանութեան շնորհուիլը հրատարակէ, նա զրպարտող է»։ Այս փաստերի հիման վրայ Աքբէրիների կողմից մի բրոշիւր հրատարակեցին «Իթթիանի Դէլիլ» վերնագրով, որով հերքեցին Ազէմի յաւակնութիւնները։ Սրա վրայ բորբոքուած Ազէմը մի հրաման ցրուեց շրջաբերականներով, որ ոչ ոք հօրը գրուածներն անգամ իրաւունք չունենայ կարդալու, եթէ Ազէմը՝ ինքը իւր ստորագրութիւնով, կամ կնքով դրանց իսկութիւնը չէ վաւերացրած։ Բէհաի գրութիւնների դէմ տրուած այս հրամանը գրգռումները ծայրահեղութեան հասցրեց, կողմերը յայտնապէս թշնամացան և այս արկածները տարածուեցան Իրանի և Թուրանի հետևողների մէջ 1898թ. Մի քանի գժտութիւններից յետոյ, երբ ինքը Աքբէրը «Հազիգաթը—Թովհիտ (ճշմարտութեան միութիւնը) գրուածքով դիմեց հետևողներին, Ազէմը հրամայեց իւր երկրպագուներին խպառ յարաբերութիւնները դադարեցնել Աքբէրից և նրա հետևողներից, ինքն էլ կտրեց յարաբերութիւնը եղբօր, մօր և քոյրերի հետ։ Սրա վրայ Աքբէրը տուեց իւր որոշումը՝ յանձնելով հետևողներին Բէհաի «իսմուլլահի Զէմալի՝» լոհը (պատգամը)։ ,Ո՞վ աշխարհի աղգե՛ր, այս յայտնութեան առաւելութիւնը նախորդ՝մարգարէութիւններից և առաքելութիւններից այն է, որ այն ամէն բան, ինչոր թշնամութեան, հակառակութեան, խռովութեան և ատելութեան առիթ էլինի ներկայացնում ես գրքերից—օրէնքներից ջնջեցի։ Այն ամէնը ինչոր համերաշխութեան, համաձայնութեան և սիրոյ է վերաբերում, արձանտ-

---

*) Լուսայ 1905, № 9—10.

գրեցի և հաստատեցի։ Երանի՜ կամքս գործադրողներին։ ԵԹԷ տեսնեմ ճղներիցս (ագսան) մէկին իմ գրած օրէնքների և պատուիրանների հակառակ ընթացքը, կը հեռացնեմ, կը վռնդեմ իմ դռնից։ Նա ովոր պատուիրանի շաւիղից հեռանայ, նա արտաքուած է (մէրդուդ)»։

Այս վճռով Աքբէրը Ազիզին աստիճանից ընկած հրատարակեց։ Ազիզն էլ, որի ձեռքումն էր հայրական, հասարակական և պետական գոյքը, եկամուտները, դադարեց հարազատների օրըստօրական ապրուստը հայթայթելուց, ցանկալով սովով նրանց ընկճել։

54. Այս բռնութեան դէմ Աքբէրի հետևորդները մեղադրեցին, թէ Ազիզը որբերի, այրիների, տնանկների յատուկ ողորմութիւնները շռայլում է ըստ քմաց, շնորհներ է անում, կաշառներ է տալիս թուրք կառավարութեան պաշտօնակալներին, Բագուի մէջ կալուածներ է գնում փեսի անունով, այն ինչ Բէհաի բացարձակ պատուէրի համաձայն նա իրաւունք չունի հասարակական գանձից իւրացնելու, վչացնելու։ Մանաւանդ նա զրկել է հարազատներին, մայրերին և եղբայրներին, որոնց յարգանքը ամենի համար պարտաւորեցուցիչ է։ Աքբէրը հետեւորդների հետ մեղադրում են Ազիզին հետևեալ կէտերում։

Ա. Ազիզը իրեն վերագրելով աստուածային կտակի դաշը, (Ահդը-Միսաք) նա յաւակնում է (pretendre) մի նոր յայտնութիւն ներկայանալ։ Այն ինչ Բէհաի բարձրագոյն հրամանի համաձայն յայտնութիւն չի կարող լինել։

Բ. Ազիզը իրեն հռչակելով Ամերիկայում Իբն-Ուլլահ (Աստուածորդի) և Մէսիա, նա ձգտում է Աստուածային աստիճանի բարձրութեան, որով մեղանչելով, դառնում է բազմաստուածեան (միշրիք)։

Գ. Ազիզը իրեն վերագրելով Մեկնիչի (միւբէյին) դերը, նա սկզբնապատճառ է դառնում մեկնիչների ոտնձգութիւններին, հակառակ Բաբի և Բէհաի պատուիրաններին և կրօնի էական մասին։

Դ. Ազիզին մեղադրում են Բէհաի ընտանիքի անդամների դէմ բարձրացրած հալածանքի և ճնշումների համար, որով նա հակառակել է հօր կտակին, սերմանելով ատելութիւն, զրկանք, տանջանք և անարգանք։

Ե. Ազիզին օրինազանց են համարում, որ նա արգելել է հետևորդներին ազատ կարդալու հօրը բոլոր գրութիւնները։

Զ. Ազիզին հրատարակիչ են փչացնող, քանի որ նա զրկել է ժառանգորդներին, և ցրում է համայնքի գոյքը քմահաճոյքին համեմատ»

Ազէմը Բէհայի գրութիւնների հակառակ, անարգել է էօմերին, նրա «Գիրքը մեզ բաւարար է (Հասբինա քիթաբ Ուլլահ)» խօսքի համար։ Նախատել է Մահմէդի կնոջը՝ Այիշէին, այն պատճառով, որ նա հալածել է Ալիին՝ առիթ ունենալով վերջինիս խօսքը—«Ես Աստուծոյ կենդանի խօսքն եմ (Էննա քէլամուլլահի էննաթիք)»։ Այս երկու պարագայումն էլ Ազէմը հօր վարդապետութեան հիմունքն է խախտել, քանի որ Բէհան էլ միշտ կրկնել է, թէ—«Էօմէրը ճշմարտութեան պաշտպանն է եղել, իսկ Ալին երևակայական առասպելների աղբերակը»։ (Տես «Լոհի Թաին»—(աներևոյթի պատգամ)։

Ը. Ազէմին օրինազանց են համարում, որ նա «քանադրել» է եղբօրը՝ Աքբէրին և հրամայել է հետևորդներին, կտրել նրա հետ իրենց յարաբերութիւնները. այն ինչ Բէհան յատուկ պատուիրանով խստօրեն արգելած է «Բանադրանքը», կամ մէկի հետ յարաբերութիւն խզելը։ (Տես «լոհ Ալէմ»)։

Թ. Ազէմին յանցաւոր են համարում այն պատճառով, որ իւր անձնաւորութիւնը հռչակել է «Դաշինքների կենտրոն, կտակների կեդրոն» (մէրքէզի Միսաք, Ահդը Միսաք)։ Այդ ձգտումը համարում են հիմնովին հակառակ Բէհայի վարդապետութեան։

Ժ. Ազէմին մեղադրում են, որ նա գրել է, թէ—«Աշխարհի ազգերի ելևմուտի կէսը իւր գրիչն է, փաստերը իւր լեզուից թռած խօսքերը»։ Նա թէհրանցի ազգ Ջամալին գրել է, թէ—ով որ ազգերին իմ անուան կանչէ, նա ինձնից է։ Մինչև այժմ արեգակը Գառան աստեղատանը բրգի վրայ էր, իսկ այժմ Առիւծ աստեղատանը մտաւ»։ Որով ուզեցել է իւր անձնաւորութիւնը Բէհայից գերադասել։ Թաւրիզ Միրզա-Խալիլին գրել է.—«Ես ծառայութեանս հիւլլէն Աստուածութեան ծովերի հետ չեմ փոխի, և այլն և այլն։

Այս պատճառների համար Ազէմի հակառակորդները նրան յայտարարեցին Բէհայի վարդապետութեան հետևողների դասից «արտաքսուած» և նրա գրութիւնները, որ հետևորդները լուծ են համարում, դժոխքի պատուիրան (էլվահ նար)։

55. Ազէմը և հետևորդները մեղադրումեն Աքբերին և նրա հետևորդներին հետևեալ կետերում.

Ա. Աքբերը անպայման չհպատակուեց մեծ եղբօրը Ազէմին, որի վրայ պիտի ուղղէին իրենց աչքերը բոլորը, համաձայն կտակի և սուրբ գրքի։

Բ. Մեղադրումեն Աքբերին, որ դեռ վեց տարեկան հասակում, հօրը ներկայութեանը մի այնպիսի ընդարձակ լոհ է տուել, որ ապշեցրել է բոլորին։ Այս լոհով Աքբէրը, առանց

ապասելու հօրը համբարձման, ինքն իրեն գերաձայնի յարաբերակից է յայտարարել։

C. Գրել է Ազէմի դէմ, ապստամբելէ Աստուածային յայտնութեան դէմ, հետևորդներից մի մասը բաժանել և Աստուածային իշխանութեան դէմ ընդդիմադիր կուսակցութիւն է կազմակերպել։

Այս պատճառներով Աբբէրին Բէհաի վարդապետութիւնից արտաքսուած և ըստ կտակի Ազէմի յետոյ որոշուած աստիճանից ընկած են յայտարարել։

56. Ազէմի հետևորդները սրան հօրը Բէհաի աստուածայայտնութեան յարատևութիւնը համարում են և իրենց ենթադրութիւնը հաստատելու համար դիմումն հետևեալ փաստերին, որը վերցնում են անխտիր թէ Բէհայի գրուածներից և թէ Աստուածաշնչից։ Գլխաւոր փաստը Բէհայի կտակն է, որով պարտաւորուած են աչքերը յառել—ուղղել դէպի «Մեծ-Ճիւղը» —Ազէմը։ «Տիրոջ շառաւիղը (ղուսն) կը լինի երկրի զարդը և փառքը...»։ Եսայ. գլ. Դ. յօդ. 2։ «Ահա իմ որդին, որին ես հաստատել եմ... Ահա ես պիտի բերեմ իմ ծառայ շառաւիղին...»։ Ibit. գ. Է. 7—10, «Յէսսէի ընից մի շառաւիղ է դուրս գալու, մի ընձիւղ...» Ibit. գլ. Ժ. յօդ. 1—2։ «Ահա մի մարդ, անունը շառաւիղ, նա իւր արմատից պիտի բուսնի և շինէ Տիրոջ տաճարը...»։ Զաքարիա գլ. Զ. յ. 12—13։ «Եւ այլևս նզովք բնաւ չի լինիլ, Աստուծոյ Գառի աթոռը այնտեղ կլինի և նրա ժառանգները նրան կը պաշարեն...»։ Յայտ. Իհ. գլ. 3 յօդ։ Եւ ուրիշ շատ շատ օրինակներ։

57. Ազէմի հակառակորդները պնդում են, որ բոլոր այդ մարգարէութիւնները և յայտնութիւնները միմիայն Բէհայի համար են, նա ինքը միակ յայտնութիւն է և նրանից յետոյ ոչ ոք չի կարող լինել։ Իրենց խօսքին ապացոյց բերում են Բէհայի հետևեալ այաթները, որոնք նա աւել է և անթիւ անգամ կրկնել իւր բոլոր գրուածներում։

«Իւր ղրկած գիրքը քեզ չի՞ բաւականացնում»։

«Հին-շիանները (հերձեալ) միւշրիք (բազմաստուածեան)—Աստծուն ընկերներ յատկացնող) են, իրանց միաստուածեան են երևակայում... Երևակայութիւնների անկիւններում պպզած, իրենց պայծառատես և բացատրող էին յայտարարում... վայ նրանց, և վայ այն մարդուն, որ այդպիսի հերձուածի առաջնորդ պատճառ դառնայ... Հազար երկու հարիւր տարի հին հերձուածները իրենք իրենց համարում էին աշխարհի գերազանցութիւնը և արարածների վեհութիւնը, բայց դատաստանի

օրը (Բաբի յայտնութեան ժամանակ) պարզուեց, որ նրանք Աստծուց հեռացածներ և նրան անարգողներ են... Երդւում եմ հոգով, որ հրամանները լրացան, պատուիրանները կատարուեցան, յայտնութիւնները վերջացան, բայց նենգաւորները (հիլէքեար) պատրաստ են, ինչպէս հնումն էլ շատ կային և տարաձայնութիւններ սիրում են... Ճշմարտութիւնը արեգակի նման երկնքի բարձունքումն է, որոշ։ Աշխարհի դրամներից մի դենար չունիմ, որ կարիք լինի կտակակատարի։ Եթէ ասեն, թէ հրամանները գործադրուելու համար կտակակատարի կարիք կայ, ասողներն իրենց կողմից մեծ թշնամութիւն են անում դէպի իրենց Արարիչը, որը մշտնջենապէս ձեզ պաշարած ու կանգնած է։ Հրամանատուչութիւնը նրա անձնով շրջապատուած է և երբէք չի հեռանալ։ Հակառակորդ, ընդդիմակալ, կտակակատար, մեկնիչ և օրինակ մի ընդունէք...

58. Բէհաի մահուանից անմիջապէս յետոյ, նրա հետևորդները հաստաձայն կտակին նրան շրջապատեցին և հինգ տարի կուռող կողմերը ջանացին, որիրենց ներքին վէճը չը տարածուի հետևորդների մէջ աշխարհի շուրջը. ուստի ամէն կողմից ազատ ամէնքը դիմաւորում էին Աբբաս էֆէնդիին Ազէմին։ Վերջինս հոր կենդանութեան ժամանակից իւր ձեռքումն ունենալով իրենց ամբողջ գոյքը, կարողութիւնը, նրանց շրջապատեցին Աբքէի հետևողները և նրա հետ կապուեցան բոլոր պրոպագանդիստները և գաւառական քարոզիչները, որոնց միջոցով Ազէմը ստանում և ծախսում էր հասարակական եկամուտները։ Աբքէրին շրջապատեցին նրանք, որոնք կատարելապէս ըմբռնել էին Բէհական վարդապետութիւնը, որի իրագործելուն նախանձախնդիր և անձնուրաց սպասաւորը դարձան։ Սրանք թէև քանակով փոքր են, բայց զարգացումով և ուղղութեամբ շատ բարձր են կանգնած և տանում են ամէն գրկանք, որ վերականգնեն պարզութեամբ օրէնսդրի իսկական քարոզութիւնը։ Այս պարագայի մասին Բէհան որոշ լոհ ունի, որտեղ ասում է, թէ իւր մահից յետոյ հետևորդները իրեն պիտի ուրանան— հեռանան, նրանց թիւը պիտի իջնի երեք հոգու և ապա հետզհետէ լուսաւորուելով և ըմբռնելով իւր քարոզութեան ոգին կրկին պիտի վերադառնան ահաւոր հոսանքով։ Այն բոլոր օրինակներն ու փաստերը, որով իրար դէմ վիճում են Բէհաիների երկու հերձուածները, եթէ առաջ բերենք, հարկ կը լինի Բէհաի, Բաբի բոլոր գրուածները հաւաքել և հատորներ կազմել։ Դեռ նրանք դիմում են հին և նոր կտակարանին Ղուրանին,

որով աւելի բարդուում է խնդիրը։ Մանաւանդ որ այդ վէճերը վերջ չունին, ինչպէս չի վերջացել Սիւննիների և Շիաների տասն և երեք դարի հակաճառութիւնները և օրէցօր կողմերը հաստ-հաստ հատորներով ճոխացնում են այդ հակառակութեան գրականութիւնը, արծարծելով հակակրութիւն ու ատելութիւն, հակառակ հիմնադիրների անհուն ջանքերին և քարոզութիւններին։

59. Բէհաի մահուան հինգերորդ տարելիցի օրը, նրա քառասնամեայ ծառայողներից ամենագլխաւորը, Միրզա-Աղաջան Քեաշանցին, որին Խադէմ—Ուլլահ էին կանչում, որը գրել է Բէհաի թելադրութեամբ նրա գրութիւններից կէսից աւելին, շրջակայ Հէրֆայից, Աքքեից, Խզրեից և ուրիշ տեղերից հաւաքուած երեք-հարիւրից աւելի ուխտաւորներին՝ հիւրասիրելուց յետոյ, իրիկնադէմ ոտքի կանգնեց և իւր ներքին վիշտը հետեւալ կերպով բացատրեց կրօնակիցներին և հետևորդներին։

Այս խօսքի վրայներս է մտնում Ազէմը, բռնում է ձերունի սպասաւորի օձիքից, մօտենում է Բէհաի շիրմին և անխնայ թակել է տալիս սպասաւորների ձեռքով։ Թակի ընթացքում Միրզա-Աղաջան բարձր ձայնով-գոռալով շարունակում է։

«—Աղա, Բէհա-Ուլլահը մեզ իր հետ ծանօթացրել է իւր վարդապետութիւններով, քարոզներով սովրեցրել է և հասկացել պատուիրանները։ Սրանից յետոյ էլ համաձայն իւր վարդապետութեան պիտի քննէ մեր ընթացքը։ Ներկայիս դուք պատրաստ էք, ժողովուրդն էլ ունկնդիր, ես ցանկանում եմ Բէհաի-Ուլլահի խօսքերով ձեզ հետ դատի մտնել, մինչև որ ճշմարտութիւնը եղծուածից և բազմաստուածութիւնը միաստուածութիւնից պարզուի և յայտնուի աշխարհի։

Բայց Ազէմի սպասաւորները չէին թողնում, որ Միրզա-Աղաջանի խօսքը լսէ ժողովուրդը, անխնայ հարածում էին նրա գլխին, կողին, կրծքին։ Իսկ նա աներկիւղ անընդհատ գոռում էր,—ես Բէհաին եմ միայն հաւատում, նրա գրութեանը և գերեզմանին եմ ապաւինել։

Այս անգութ տանջանքներից փշրուած, հիւանդանում է և եօթը ութը ամիս տանջուելուց յետոյ մեռնում է Միրզա-Աղաջանը։ Ծերունին տքում էր ոսկորների ցաւից մինչև հոգին աւանդելը։ Քառասուն տարուան Բէհաի հաւատարիմ սպասաւորը և անձնական քարտուղարը այսպիսի զարհուրելի տանջանքով է մեռնում իւր տիրոջ անդրանկի ձեռքով։ Ազէմը արտաքսում է պաշտօնից և թոշակից զրկում այն բոլոր հին ծառայողներին,

որոնք անպայման չեն ընդունում իրեն, որպէս «յարատեւութիւն հայրական յայտնութեան։»

60. Ազէմը այն աստիճանի ճնշումներ գործ դրեց և այնպիսի մեքենայութիւններ լարեց, որ Աքբերի հարազատ մօրից փոքր եղբայրը Բէդիհը, որ տասը տարի շարունակ քարոզով ու գրչով խայտառակել էր իւր անձը հօրը յայտնութեան յարատեւութիւնն հռչակող Աբբաս էֆէնդիին, պարտատէրներից նեղուած, գնաց ընկաւ իւր նախկին նախատած—անարգածի գիրկը, որը՝ Ազէմը վճարեց 500. ոսկի պարտքը և այժմ սրան հաճոյանալու համար, բրօշիւր է հրատարակել հարազատ և տասը տարի ջատագոված եղբօրը, Աքբերի դէմ։ Ինչպէս երևում է դեռ ևս փողը աշխարհի ամենահզօրն է, քանիսոր նա ստրկացնում է վեհ հոգւով դաստիարակուածներին անգամ։

Ազէմը գրաւոր խոստովանութիւն ձեռք բերելու համար, հօրը հետևորդներին ճնշելիս բռնած միջոցների մէջ երբեք խորութիւն չի գնում։ Բէհահի նշանաւոր հետևողներից մէկն էլ Զէրէնդի-Միւջթէհիդ Միրզա Մէհմեդն էր, որին անուանում են մնէրիլ։ Այս մարդը Բաբիզմի պատմութիւնը գրել է չափական բանաստեղծութեամբ, յանգերով, որը կազմուած է մի քանի ստուար հատորներից։ Այնպէս լաւ գրչի տէր էր, այնպէս ոգևորուող, որ մինչև Բէհահի յայտնուիլը երևակայում էր, թէ ինքն էր Բաբի քարոզած յայտնութիւնը, բայց Բէհահի պատգամները կարդալուց յետոյ, գնաց, զղջաց և նրա կոյր երկրպագուն դարձաւ։ Այս խօսքը մեծ կշիռ ունէր ընդհանրապէս Բէհական աշխարհի համար, ուստի Ազէմը ցանկանում էր սրանից գրաւոր խոստում առնել և հրատարակել։ Ազէմը Նեբիլին այնպիսի առաջարկ առաւ, այնպիսի վիճակում թողեց, որ խեղճ ծերուկը փրկութիւնը Աքքէի խորշում գտաւ։ Երբ թուրքական ոստիկանները խուզարկում էին Նեբիլի դոյքը, գտնուեցաւ նրա կտակը, որտեղ բանաստեղծը մի քանի յանգով բացատրել էր հոգեկան տագնապը։—«Ես որքան տխմար ու ապուշ պիտի լինէի, որ բարունապետներիս պատուիրաններիս հակառակ քեզ յայտնութիւն դաւանէի, կործանէի նրանց կառուցած սիրոյ տաճարը և գլուխս ծաղրի մատնէի»։ Նեբիլը ծովի ալիքների վրայ ծփալը մարդկային ծաղրից նախապատիւ համարեց, մահը խղճի հակառակ ապրելուց գերադասեց։

61. Ազէմը չբաւականացաւ Բէհահի ժառանգներին և հաւատարիմներին հալածելով, նրանց զրկանքի և նեղութիւնների ենթարկելով։ Որպէս չի խպառ թուլացնի հօր յիշատակը և Բէհականներին ազատի հօրը գրածների ներգործութիւնից, նա

չը բաւականացաւ միայն արգելք դնելով հօրը այն գրուածների ընթերցման վրայ, որոնք ջախջախում էին իր ծրագիրները, այլ ամէն միջոցի դիմելով խափանեց Բոմբէյի այն տպարանը, որտեղ տպուել էին հօր գործերի ինը հատորը։ Խափանեց հօր գործերի տպագրութեան շարունակութիւնը, որպէսզի չտարածուի այդ գրութիւնները և հետևողները միմիայն իւր գրութիւններով բաւականանան։ Նա հօր գործերի տպագրութեան տաճարը շինելու փոխարէն, ահագին փող ծախսեց, որպէսզի Բարմել լերան գագաթին Բաբի անձնի վրայ տաճար կառուցանէ և ամէն տեղ տարածէ, թէ—«Ահա մի մարդ, անունը շառաւիղ (Ղուսն), նա իր արմատից պիտի աճի և պիտի շինէ Տիրոջ տաճարը»։ Զաքարիա Գլ. Զ յոդ. 12-13։

62. Որպէսզի կարողանայ անպայման Բէհաի հետևողներին ատիպել և համոզել, թէ ինքն էլ դերազոյն յայտնութիւն է, նա երես չը շուռտուեց մինչև անգամ կեղծիքներ անելուց, հօրը գրուածները նենգելուց։ 1. Մի լոհ շրջեցրին ժողովրդի մէջ, որով իբր Բէհան Ազէմին յայտարարում է իւր յայտնութեան յարատևութիւնը, որպէսզի առաջնորդ է ժողովրդին, բայց իսկականը՝ Միրզա-Աղաջանի, զուսնի Աքբէրի և կամ Բէհաի ձեռագրով չը կարողացան դուրս բերել, կասրի-Բահչէի արխիւում էլ չգտնուեց։ «Ա. Սուրիէի-էմր» լոհը կրճատուած ու փոփոխած շրջեցրին, որով ուզում էին Ազէմի յայտնութիւնը ապացուցանել, բայց իսկականը Աքբէրը Բէհաի ձեռագրով դուրս հանեց և լուսանկարը տարածելով խայտառակեց։ Ա. Երկու լոհ իրար կցելով ձգտեցան մի բան ապացուցանել, բայց հակառակ դասը բացատրեց թիւրիմացութիւնը։ Գ. Ղուսնի-Աքբէրին ուղղուած մի լոհ Ազէմը իրեն վերագրեց, բայց իսկականը՝ Բէհաի ձեռքով գրուածը դուրս հանելուց յետոյ, պատասխանեց՝— «Երկու եղբայրներին էլ է վերաբերում, և այլն այլն։

63. Շատերը ենթադրում էին, որ այս վարդապետութեան կոչումն էր վերանորոգել Պարսկաստանը և Իսլամ տշխարհը, բայց այդ յոյսերը խաբուսիկ դարձան... չիրականացան, Բաբիզմը հետզհետէ քայքայւում է, կորցնելով ահաւոր հետևորդներ։ Սկզբնական շրջաններում Բաբիզմի քարոզութիւնները ապաստողներ շատ ունենալով Պարսկաստանում, նա հսկայական քայլերով առաջացաւ, ահաւոր հետևորդներ ունեցաւ և աւելի ճոխացաւ 1848—52 թուականների արիւնահեղ կռիւների շրջաններում։ Այդ ժամանակները այս աղանդին հետևում էին, բացի նշանաւոր իւլէմաները, յայտնի պաշտօնակալներ, Իրանի շահի աւագանին, հարուստ վաճառականներ, մեծ կալածատէրներ,

մտքի, գաղափարի ներկայացուցիչներ, որոնք ձգտումէին հայրենիքը փրկել անկեալ վիճակից և սպառնացող վտանգից, մանաւանդ բռնակալութիւնից։ Ճշմարիտ է, կառավարչական սարսափները արիւնի մէջ ողողեցին աղանդաւորներին, յուսահատութեան մատնեցին, բայց այդ զարհուրելի զոհողութիւններով ևս աւելի ամրապնդուեց Բաբիականութիւնը և որոշ հող ձեռք բերեց երկրում։ Այս զարհուրուածները եթէ ոչ համարձակ, գոնէ սրտի խորքերում պաշտում էին այն Ալլահին, որն ուզարկել էր Սէիդ-Ալի-Մէհմէդին, իրենց մարդապաշտութիւնից, իմամապաշտութիւնից ազատելու, իրենց մտքին ու դատողութիւններին ազատ թռիչք տալով գիտութիւններով, արհեստներով առաջանալու և որ ամենագլխաւորն է, ազատուելու կղերի և բռնակալների կեղեքումներից, որոշ դրական օրէնքներով և ժողովրդից ընտրուած «ռիշալի-ադլի» ժողովներով։

Բէհաի քարոզութիւններով այնպէս աճեցաւ Բաբիների թիւը, այնպէս բարձրացաւ նրանց վարդապետութեան բարոյական, փիլիսոփայական հայեացքը, որ ամենայն իրաւամբ Բաբիները իրենց անուանեցին ԲԷՀԱՒԻՆԵՐ, որոնց զարգացման ամենաբարձր չրջանը կարելի է համարել ութսունական թուականները (1880—90 թ.) Իսկ Բէհաի մահուանից յետոյ մանաւանդ Ազէմի ձգտումները պարզուելուց յետոյ (1897 թ.) Բէհականները հետզհետէ ետ քաշուեցան, նշանաւոր անձնաւորութիւնները հեռացան, սկսեց սրանց թիւը աստիճանաբար նուազել և օրից օր պակասել։ Ազէմի թիւր անձնաւորութիւնը յայտնութիւն (զուհուր) յայտարարելը ամենքն այնպէս ընդունեցին, իբր շիական իմամների վերակենդանանալը, նրա լոհերը՝ հադիսների կրկնութիւնը, որոնք լքին հետևորդներին, հեռացրին և առանձնացրին։ Ոչ բարձր պաշտօնէութեան, ոչ էլ մտքի ու փողի ներկայացուցիչներից մի խելահաս մարդ չմնաց, որ զիջանի Ազէմին որպէս «յայտնութեան» հետևելու, ասպարէզը մնաց համբակներին։ Այս բէհականներից շատերը թէև այսօր առերես հետևում են երկրի պետական կրօնին՝ շիականութեան, բայց բոլորովին ազատամիտ են դարձած, տոգորուած հիմնական վերանորոգչական մտքերով, սպասում են ոչ թէ կրօնական որևէ բարեկարգութեան, այլ քաղաքական ըէֆորմատորի։

64. Բաբիզմը ամենից շատ տարածուեց իւր ծննդավայրում՝ Շիրազում, Ֆարսերի աշխարհում, ուր նրա թիւը մի ժամանակ հասաւ մինչև 30—40 հազարի, բայց այսօր հազիւ թէ դրա քառորդն էլ հնարաւոր լինի գտնել։ Շիրազից յետոյ նա ամենից շատ տարածուեց Գիլանում և Մազանդարանում, կաս-

պից լճի հարաւային ափերում, ուր գիւղ, աւան, քաղաք չմնաց, որ հետևորդներ չունենար։ Սրանց թիւն էլ անցնում էր 30 հազարը, բայց այսօր երեք հազար հոգի էլ դժուար թէ գտնուի։ Բաբ-էլ-բաբի և ընկերակիցների ջանքերով Խորասանում Բաբը մինչև քսան հազար հետևորդ ունեցաւ, բայց այսօր կասկածելի է, թէ 2000 հոգի էլ գտնուի։ Թէհրան և շրջակայքում նոյնպէս 20 հազար հետևողներ գտաւ, իսկ այսօր երեք հազար էլ չի մնացել։ Թաֆահանի շրջանը մինչև տասը հազար հասել էր բաբիների թիւը, ներկայիս դրա կէսն էլ չի մնացել։ Խամսա-Զէնջան մի ժամանակ 10,000 եռանդուն բաբիներ կային, ներկայիս 500 հոգի էլ չկան։ Ատրպատականում դրանց թիւը 20 հազարի բարձրացաւ, մինչև անգամ Մարաղայի, Միանդուաբի և Սուլդուզի հայերից յառողներ եղան, ներկայիս ամբողջ Ատրպատականում մի հազար մարդ էլ չի մնացել հետևող։ Համադան, Եզդ, Բիրման անփոփոխ են մնացել, դեռ այդ տեղերը չի թափանցել Ազէմի-Աքբէրի վէճերը, բայց այդ երեք նահանգում հաղիւ թէ 8—9 հազար հետևողներ լինեն։ Կան բաբիներ—բէհականներ Բաղդադում և Փիւնիկում, բայց դրանց թիւը հազար էլ չի կազմում։ Եգիպտոսի, Հնդկաստանի, Կիպրոսի հետևողների մասին որոշ թիւ չկայ, բայց հաղիւ թէ մի քանի հարիւրներ կազմի։

Ամենից շատ Բէհաիները ճոխացան Ասխաբադում, ուր Ռուս կառավարութիւնը նրանց ազատութիւն է տուել, համարձակ դաւանելու իրենց վարդապետութիւնը և միշտ պաշտպանել է շիական յարձակումներից—հալածանքից։ Ասխաբադ փախել են գլխաւորապէս Ատրպատականի Իւսկիւի և Միլան գիւղերից հալածուած բէհականները և Պարսկաստանի զանազան քաղաքներից խոյս տուողները։ Ասխաբադում դրանց թիւը հասնում է մինչև (3) երեք հազարի։ Մի այսքան էլ ամբողջ Անդրկասպեան և Կովկասեան քաղաքներում և Ռուսաստանում դուցէ հնարաւոր լինի հաշուել Բէհաի հետևորդներ։

Բէհաի մահուանից յետոյ, նրա աշակերտները ոտաբոբիկ, կիսամերկ, աղքատ մտան ոչ միայն Արևելքի ամէն մի անկիւն և հազարաւոր հետևորդներ դուրս քաշեցին մոլեռանդ իսլամի գաւակներից, այլ մինչև անգամ անցան Միջերկրականը և Ատլանդեան Ովկիանոսը, քաղաքակրթուած քրիստոնեաներից էլ հազարաւոր հետևորդներ գրաւեցին, նրանցից կորզած ողորմութիւնով ոչ միայն պաշտպանում են իրենց գոյութիւնը, Ամերիկայում տաճարներ էին կանգնում, այլ յաւելուածներով աշխատում էին արևմտեան լուսաւորութիւնը տանել իրենց ծննդա-

վայրը՝ արևելք, բաղաքակրթել մառախուղի մէջ խարխափողներին։ Կաթոլիկ և բողոքական միսիոնէրները իրենց ահաւոր գանձերով և անթիւ գիտական քարոզիչներով վերջին XIX դարի չրջանում իսլամի հետևորդներից և ոչ իսկ մի հազար մարդ կարողացել են քրիստոնէութեան գրաւել, այն ինչ բէհականները վերջին 10—12 տարուան ընթացքում միայն Միացեալ-Նահանգներում տասնեակ հազար, գուցէ աւելի հետևողներ են գրաւել, որոնք օրէցօր աճում են։ Եթէ Ազէմի և Աքբէրի վէճերը չլինէր և ճշտութեամբ հետևէին Բէհաի սիրոյ և խաղաղութեան քարոզներին, գուցէ այսօր 30—40 հետևորդներ էլ ունենային։

Հետևաբար, ըստ մեր հաւաքած տեղեկութիւնների, այսօր աշխարհի շուրջը Բէհաի քարոզութիւններին հետևողների թիւը 50—55 հազարից չի անցնում, այն ինչ քսան տարի առաջ նրանք միայն Պարսկաստանում երկու հարիւր հազարից աւելի հետևորդներ ունէին։

65. Ներկայիս բաբիները բաժանւում են երեք հերձուածի.

Ա. Նրանք, որոնք իրենց իսկական բաբի են համարում, չեն դաւանում Բէհաի վարդապետութիւնը, որոնց հակառակորդները Էզէլի են կանչում, Բէհաի փոքր եղբօր՝ Եահեա-Սուփ-Էզէլի անունով, քանի որ սրանք հետևեցին Էզէլին և սպասում են Բաբի խոստացած յայտնութեանը։ Սրանց թիւը փոքր է, չեն տարածուած և Կիպրոսում երկու տարի առաջ Էզէլի մահից յետոյ, Նրան յաջորդեց և համայնքին առաջնորդում է Շեյխ-Հադին, որ ապրում է Դովլաթաբադում, Իսֆահանի նահանգում։ Էզէլիների թիւը 2—3 հազար հոգուց չի անցնում։

Բ. Բէհաի վարդապետութեամբ բաւականացող, Ազէմին Բէհաի յայտնութեան յարատևութիւնը չընդունող դասը, որոնց հակառակորդները Աքբէրի է կանչում, նոյնպէս շատ չնչին մասն է կազմում Բաբիների համայնքի։ Թէև սրանք իրենց մըտաւոր զարգացումով, աշխարհահայեացքով շատ ուժեղ են մնացել երկու դասից, որոնց ամէն մի քայլափոխի առաջ սրանք Բէհաի գրուածներով ուղեփակ են դնում, կաշկանդում, բայց երկու-երեք հազար հետևողների թիւը չի կարող որոշ ոյժ կազմել և վարդապետութեան հետևորդները բազմացնել։ Սրանք ցրուած են ամեն տեղ, միայն հազարից աւելի հետևորդներ ունին Միացեալ նահանգներում։

Գ. Ամենից բազմաթիւ և ուժեղ տարրը կազմում են բէ-

հականների մնացորդ դասը, որոնց թիւը հասնում է յիսուն հազարի։ Շատերը այս թիւը մեծացնում են, հասցնում են միլիոնների, բայց այդ բոլորը լաւատեսութեան և միամտութեան հետևանք է։ Իրանք Ազէմի հետևորդները ամէն տեղ խօսելիս տասնեակ և հարիւրաւոր հազարներով են ցոյց տալիս իրենց հետևորդներից Իրանի զանազան կողմերը, բայց մեր եօթը տարուան քննութիւնը, թղթակցութիւնները չարդարացրին լաւատեսների և ոգևորուողների յոյսերը։ Այս միամիտ ամբոխը, որին հակառակորդները Ազէմի են անուանում, ապացուցեց թէ ճշմարիտ որ իրենք Իրանի հարազատ ծնունդ են կազմում, արիական սերունդ և առանց մարդացեալ աստուածների չեն կարող ապրել, չեն կարող կառավարուել։ Նրանց միշտ պիտի կառավարէ գերազանցագոյնից սերուած, ծնուած, ներշնչուած և յարաբերակից մի դիւցազն, մի աստուածորդի... Քանի որ Պարսկաստանին տիրում է թանձր խաւարը, քանի որ նրա և ոչ մի անկիւնում չէ բացուած որև է լոյսի տաճար, քանի որ մանուկների կրթութիւնը «ախունդների» ձեռքին է, որոնք առասպելներով են նրանց դաստիարակում, քանի որ պետութիւնը և ոչ մի կանոնաւոր ուսումնարան չէ հիմնած երկրում, «բաբերի» և «բէհանների» քարոզները չի կարող ըմբռնել ժողովուրդը և Ազէմի նման շատ աստուածամարդեր նստած ստրկացած ժողովրդի վզին, նրան կվարեն դէպի առասպելական աշխարհ, դէպի մարդապաշտութիւն...

ԱՏՐՊԵՏ

ԱՐԵԱՆ ԵՐԳԵՐԻՑ

Ինչ շահեցիր, երբ խուժեցիր
Հայի խաղաղ օթեւան,
Կրակ տուիր, մոխիր դարձրիր,
Բերիր մեծ սուգ ու շիւան։

Ինչ շահեցիր, երբ մոր առջեւ
Դու մորթեցիր հայ մանկան,
Վարդի նման թառամեցրիր
Հիւրի-փերի կոյս-աղջկան։

Ինչ շահեցիր, երբ հայ երկիրն
Արիր կարմիր արեան ծով,
Արար աշխարհ դղրդացրիր
Հայի լացով ու կոծով։

Թէ քաղցած ես, ե՛կ—հայը քեզ
Առատօրէն հաց կը տայ.
Թէ հառաչ է հայի հացը—
Վաստակդ քեզ հաց կը տայ։

Էլ ինչու ես իզուր տեղը
Դու հրճուանքով դիւային
Ալան թալան կողոպտելով,
Ջնջում անմեղ հէգ հային։

Գիտեմ, պիտի պատասխանես
«Որովհետեւ նա հայ է»։
Օ՜ անաստուած, հայ լինելը
Միթէ յանցանք ու վայ է...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

1) Քամալեանց Ա. ԴԱԼՕ ԱՓՕ ԵՒ ԽԱՉԱՆ. բ· տպ, Թիֆլիս 1906 էջ 40.

Մեր ժողովրդական գրականութիւնը վերջերս կարծես սառուցման կէտին է հասել. քիչ թէ շատ յայտնի ժողովրդական գրողներից ոմանք ի Տէր հանգեան (Արարատեան, Ագապեան), ոմանք դադարեցին գրելուց (Աղայեան և այլն) և ասպարէզը մնաց մեծ մասամբ անտաղանդ բանաստեղծներին և հայերէն չիմացող թարգմանիչներին, որոնք սունկի պէս բուսնում և շուտով անյայտանում են։ Այս երևոյթը շատ ցաւալի է մեր նորաբողբոջ գրականութեան համար. բուն ժողովրդի կեանքի ուսումնասիրութիւնը և նրա մտաւոր աշխարհի հոգեբանութեան ըմբռնումը պէտքէ կազմէ մեր աշխարհիկ գրականութեան էական սաղմը։ Այս կենդանի աղբիւրից պէտքէ հոսեն վճիտ ջրերը, որ թարմացնեն և կենսատու ոյժ տան աւելի քանքարաւոր հայ գրողների ինքնուրոյն արտադրութիւններին, հոգի և զգացմունք ներշնչեն դեռափթիթ հայ տաղանդներին։

Քամալեանց Ս., որ մեր շնորհալի ժողովրդական գրողներից մէկն է, կարծես նոյնպէս դադարել է նոր բան արտադրելուց-ցանկալի է, որ այս դադարը ժամանակաւոր լինի-և այժմ զբաղուած է իւր նախկին գրուածների երկրորդ հրատարակութեամբ։ Դալօ Ափօ և Խաչանը, որ նոյնպէս լոյս են տեսել երկրորդ տպագրութեամբ, իրենց «բովանդակութեամբ» ճշտիւ համապատասխանում են հայ ժողովրդի այժմեան տրամադրութեանը և կրում են մինչեւ մահ-գերեզման մարդ պէտք է հրացան սիրի նշանաբանը։

«Դալօ Ափօ» ի նիւթը վերցրած է «Բէհրութովի կռուի» ժամանակից ռուս-տաճկական սահմանագլխի գիւղերի հայ գիւղացիների կեանքից. քաջասիրտ «Ափօն» կամ «Դալի Դեալստը» միշտ խրատում է «դաշոյն կապեցէք, հրացան բանացնել սովորեցէք», «թուրքին պէտքէ ծեծես, որ բարեկամանայ», «մեծունանց խօսք է, թէ սոխի դէմ սխտոր պէտքէ ծեծել։ Այս օրից հաւաքուեցէք երիտասարդներդ միատեղ և վրայ տուէք թուրք օրանեին։ Իմ խորհուրդն այս է, թուրքերի աչքը պէտքէ ծեծով, թակով վախեցնել»։ Երբ վախճանւում է 93 տարեկան հերոսը «լողայնողները շորահան անելիս նկատել էին հագուստի վրայ կոշտ բաներ. կարծել էին թէ արծաթ փողեր են արխալուղի մէջից կարած։ Դրա համար արխալուղը ծա-

ծուկ փախցրել էին։ Բայց շորի կարերը քանդելով արծաթ փողի տեղ գտել էին հրացանի լցրած փամփուշտներ, որ Ափոն պահում էր անակնկալ վտանգների ժամանակ գործ ածելու համար։» Մեր առաջ բերած հատուածներից արդէն ընթերցողը կտեսնէ թէ ինչ ռազմական ոգւով է ներշնչուած Քամալեանի «Գալօ Ափօն» և որքան ժամանակակից ընթերցանութեան նիւթ է հայ ժողովրդի համար։ «Խաչանը» նիժեցի հայ ուտիցի արիասիրտ որսորդի տիպնէ ներկայացնում, որի «քաջութեան շնորհիւ շրջակայ աւազակաբարոյ թուրքերը չեն համարձակւում մօտենալ հայ գիւղացիներին։»

Երկու պատկերներն էլ գրուած են հայաշունչ լեզուով և հետաքրքրութեամբ են կարդացւում։

2) *Մեր էժանագին գրադարանը. Մաթէօ Ֆալկոնէ, Մատնիչը, լրտեսը։ Ս. Պետերբուրգ 1905. էջ 62.*

Գրքոյկիս մէջ ամփոփուած երեք փոքրիկ զրոյցներն էլ միևնոյն տենդենցիան ունին. պատժել մատնիչին ու լրտեսին։ Մատնութիւնն ու լրտեսութիւնը անբարոյական գաղափարներ են, միշտ էլ դատապարտելի են եղել փոքր ի շատէ ինքնաճանաչ հասարակութեան մէջ և աւելի ևս գարշելի պէտք է համարուին մեր հասարակական կեանքի այժմեան պայմաններում։ Գովելի է ուրեմն գրքոյկի հրատարակիչ տիկին Զաբելի հոգացողութիւնն այսպիսի ընտրութեան վերաբերմամբ։ Այժմ կերպով պէտք է աշխատել կռիւ մղել անբարոյականացնող գաղափարների դէմ, որպէս չի ժողովրդի գիտակցութիւնն արթուն մնայ և այդպիսով ըստ արժանւոյն պատժուի, եթէ արմատախիլ անելը մեր ուժերից բարձր է։ Սակայն եթէ կամենանք այդպիսի զգացմունքներ առաջացնել չափազանցացրած և անանձնական օրինակներով, կարող ենք հակառակ նպատակի հասնել և բթացնել ընթերցողի զգացմունքները. այս տեսակէտից ահա գրքոյկիս մէջ պարունակուած երկու զրոյցները «Մաթէօ Ֆալկոնէն» ու «լրտեսը» անյաջող հնք համարում։

Ֆրանսիացի գրող Պրոսպէր Մէրիմէի «Մաթէօ Ֆալկոնէ» զրոյցի հերոս 50 տարեկան Մաթէօն հրացանով է սպանում է իւր միակ արու զաւակ տաս տարեկան Ֆորտունատոյին, որովհետև վերջինս գրաւուելով սպայի առաջարկած արծաթեայ ժամացոյցից՝ մատնում է վիրաւորուած փախստական Մանպիերոյին նրա ձեռքը։ Դիտմամբ ընդգծեցինք տաս տարեկան բառերը, որովհետև այդ հասակի երեխան չի կարող լիովին ըմբռնել մատնութեան անբարոյականութիւնը և պատասխանատու համա-

բուել իւր արարքի համար. արդէն այն հանգամանքը որ նա խաբուում է մի արծաթեայ ժամացոյցով, ապացոյց է, որ նա երեխայ է ուրեմն և չի կարող կշռադատել իւր արարմունքի ծանր հետևանքները։

«Լրտեսն» էլ մի փոքրիկ շնիկ է, որ իւր բնածին սուր հոտոտելիքի շնորհիւ վարժուել է գտնել թագցրած օղու շիշերն ու ամանները. մի գործարանի բանուորներին խստիւ արգելուած է գործարանում օղի գործածելը, բայց այդ շնիկը գտնում է նրանց թագցրած օղին և ահա բանուորները զայրացած այդ «լրտեսի» վարմունքից՝ սպանում են ոչ թէ վարժեցնողին, այլ խեղճ փոքրիկ անասունին։ Միթէ այս ձևով կարելի է ընթերցողի մէջ գարշանք յարուցանել լրտեսութեան անբարոյականացնող գաղափարի նկատմամբ։

Երեք ղրոյցներն էլ միևնոյն յաջողութեամբ չեն թարգմանուած. առաջինն աւելի հարթ և կոկ լեզուով է գրուած. միւսների մասին նոյնը չենք կարող ասել։ Վերջիններում պատահում ենք նոյն իսկ ոչ հայերէն կամ սխալ դարձուածքների. օրինակ «նա դատապարտուած էր այսուհետև ապրելու համար մարդկանց մէջ»(?) էջ 44. «գիւղացին առատութեամբ(?) (գուցէ պէտք է լինի արագութեամբ) վազեց..» էջ 47 «...նախքան որ ինքը իւր ընտանիքի հետ միասին կոտորուի սառնամանիքից» (էջ 46) «..պատասխանեց մի բամբ ձայն, որը պատկանում էր, ինչպէս ես դա (?) ճանաչեցի» (էջ 54). «ափսոսում են, զուլթ հայցում մի ինչ որ շանը, իսկ մարդկանց ափսոսալ, խղճալ—այդ չկայ նրանց մէջ» (58)։

ԲՐԻԶ

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Ա. Կրիմսկի. Մահմեդական աշխարհն ու նրա ապագան. Թարգմանեց Բարգէն Վարդապետ. Վաղարշապատ. 1906 գ. 60 կոպ.

Քամալեանց Ս.—Գալօ Ափօ և Խաչան. Բ. տպագրութիւն. Թիֆլիս 1906 գ. 12 կոպ.

Մ. Զմշկեան. Տարեցոյց 1906 թ. Թիֆլիս 1906 գ. 30 կ.

« Պատի օրացոյց 1906 թ. Թիֆլիս

Կանոնագիր Հայ աշխատաւորաց միութեան Բարիզի, Բարիզ 1905

Մեր էժանագին գրադարանը. № 9. Մաթէօ Ֆալկոնէ. Մատնիչը. Լրտես. Ս. Պ. Բուրգ 1905. գ 7 կ.

Արսէն Վ. Ղլտճեան, Նախագիծ Հայաստանեայց եկեղեցու սահմանադրութեան. Ալէքսանդրապոլ 1906 գ. 7. կ.

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

—

Ռէօնտգէնեան Ճառագայթներ

10 տարի անցաւ այն օրից, ինչ որ Վիւրցբուրգի համալսարանի պրոֆէսսոր Ֆիզիքոս Կոնրադ Վիլհէլմ Ռէօնտգէնը 1896 թ. յունուարի 23 ին առաջին հանդամ հասարակութեան ծանօթացրեց իւր գտած անյայտ ճառագայթների հետ։ Եւ երբ ներկայ եղողները լուսանկարչական թիթեղի վերայ տեսան ճշտիւ նկարուած՝ այժմ հանգ. Կէլլիկէր պրոֆէսսորի ձեռքի ոսկրները-ամենքի համար պարզուեց, թէ այդ գիւտը ինչ մեծ նշանակութիւն պիտի ունենար բժշկականութեան դիագնոստիկի համար։ Ժողովը որոշեց նորագիւտ ճառագայթները անուանել գտնողի անունով՝ ռէօնտգէնեան։

Դորանով հիմք դրուեցաւ մի նոր գիտութեան։ Այդ ճառագայթներով այժմ կարողանում են տեսնել ոչ միայն ձեռքի ոսկորներն ու յօդերը, մարմնի մէջ մնացող գնդակն ու ասեղը, այլ և զարմանալի կերպով արտացոլում են լանջավանդակը, կողերով և անրակներով. նոյն իսկ պարզ կերպով նշմարւում են սրտի մկանների կծկումներն ու ընդլայնուիլը։

Ռեօնտգէնեան ճառագայթների օգնութեամբ մենք կարող ենք տեսնել այժմ թէ կոտրած ոսկրները գիպսի փաթեթի մէջ կանոնաւոր են դասաւորուած թէ ոչ և որոշել ոչ միայն կոտրած տեղերը, այլ և ամենատեսակ ձգողութիւններ, դուրս ընկածները և ուռոյցները։ Ատամի մի քանի տեսակ հիւանդութիւններ կարելի է որոշել միայն այդ ճառագայթներով։ Շատ անգամ այդ ճառագայթներն են պարզում՝ որ ոսկրներն ու յօդերն անվնաս են, այլ հիւանդութեան պատճառը մարմնի փափուկ մասերումն է գտնւում, օր. զարկերակների պնդութիւնը. կրծքի վերաբերմամբ ռեօնտգէնեան ճառագայթները երբեմն որոշում են սրտի մեծութիւնը, երբեմն յայտնում է պարզել փոփոխութիւնները։ Եւ դեռ հետզհետէ նորանոր գործադրութիւն է ստանում նա։

Բայց ռեօնտգէնեան ճառագայթները միայն հիւանդութիւնը ճանաչելու չեն ծառայում, այլ նաև որպէս բժշկութեան միջոց։

Կարելի է չատերը չգիտեն իսկ, որ մի առանձին գիտութիւն կայ—ըէօնտգէնեան վիրաբուժութիւն։ Ըէօնտգէնեան ճառագայթները ցոյց տուին և մի յատկութիւն, որ քայքայում են հիւանդ հիւսուածները, առաւել քան առողջները, որի պատճառով կարելի է բժշկել հիւանդ տեղերը, առանց առողջներին ձեռք տալու։ Այսպէս նաև նոցա շնորհիւ յաջողութեամբ բժշկում են զանազան մորթու վրայի հիւանդութիւններ և լէվկէմի կոչուած վտանգաւոր հիւանդութիւնը։ Ըէօնտգէնեան ճառագայթները մեծ դեր են խաղում և խլիրդ (рак) ու նման հիւանդութիւններ բժշկելիս։ Ճառագայթների քայքայիչ ոյժը ներգործում է ուռոյցի վերայ։ Այդ տեսակ ուռոյցներ առաջ կտրում են դանակով և ապա մնացորդները ճառագայթներով քայքայում, ապագայ կրկնութիւններից ազատելու համար։ Բժշկւում են նաև այլ և այլ ուռոյցներ կամ փոքրացնում այնքան, որ հեշտ է լինում վիրահատելը։

Ըէօնտգէնեան ճառագայթները դեռ մեծ ապագայ ունին բժշկականութեան մէջ և մօտագայ ապագան պէտք է փայլուն հետևանքներ տայ այդ նկատմամբ։

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Ռուսիայի արդի վիճակը։ Հալածանք յեղափոխականների դէմ։ Ամբողջ Ռուսիան պատերազմական դրութեան մէջ։ Ձերբակալութիւններ եւ աքսորներ։ Տպարանների փակում։ Լրագիրների դադարեցում։ Մամուլի նոր օրէնքների վերափոխում։ Տպարանները զրաքննչի պաշտօնում։ Քաղաքական կուսակցութիւնների դէմ հալածանք։ Սահմանադրական ռամկավարական կուսակցութեան վիճակը։ Ըէակցիայի թուլանալը։ Ցուսատու լուրեր։ Պետական դումայի գումարման օրը։ Բարձրագոյն հրովարտակ։ Դումայի անդամների ընտրութիւնը։ Կովկասի մասնակցութիւնը դումայում։ —Հայ-թիւրքական ընդհարումներ։ Հաշտութեան պահանջը։ Հաշտարար մասնաժողովներ։—Ներքին լուրեր։

Վերջին ամիսներում ուժգին կերպով արտայայտուած յեղափոխական շարժումը, որ բիւրօկրատիայի նորա դէմ մղած պայքարի շնորհիւ ծանր հետևանքներ ունեցաւ Ռուսաստանի թէ բուն ժողովրդի, թէ հպատակ ազգութիւնների և թէ նոյն իսկ ռուս կառավարութեան համար, նոր տարուայ մուտքին զգալի կերպով թուլացաւ։

Կոմս Վիտտէն, որ սկզբում թուում էր կողմնակից ժողովրդական իրաւունքների և ազատութեան պաշտպան, որի ձեռքով ժողովրդեան շնորհուեցաւ հոկտեմբերի 17-ի հրովարտակը անձի, գոյքի, խօսքի ու մամուլի ազատութեան վերաբերեալ, նոյն կոմս Վիտտէն ձեռք ձեռքի տուած ներքին գործոց նախարար Դուրնովոի հետ, մէկէն ձեռքն առաւ աւելը և սկսեց Ռուսաստանը մաքրել յեղափոխականներից։

Ծայրահեղ կուսակցութիւնների չափազանց եռանդը ծնաւ մի այնպիսի կատաղի յետաշրջութիւն — ըէակցիա, որպիսին աներևակայելի մի երազ կարող էր համարուել դեռ մի երկու ամիս առաջ։

Թուենք զէթ համառօտակի, թէ ինչ կատարուեց յունուար ամսի ընթացքում։

Ամբողջ Ռուսիան յայտարարուեց պատերազմական դրու-

թեան մէջ և պաշարման վիճակում, ամեն տեղ նշանակուեցին գեներալ-նահանգապետներ, որոնց հրամայուեց ամեն կերպ ճնշել յեղափոխութիւնը. ձերբակալուեցան ու աքսորուեցան յեղափոխութեան պարագլուխ համարուածները և ով ասես, լրագրող և ինտելլիգենտ, գրագէտ և ուսանող և այլն. անհատական և խմբական աքսորուածների թիւը, մայրաքաղաքների լրագիրների ասելով, 75 հազարից անցաւ։

Փակուեցին բազմաթիւ տպարաններ, դադարեցրին 72 լրագիր, որոնց խմբագիրները կամ դատի ժամանուեցան և կամ աքսոր գնացին և այս ամենի վերայ՝ հեռագիրը լուր բերեց այս օրերս, որ նախարարական խորհրդում վերաքննութեան են ենթարկուած ժամուլի այն օրէնքները, որոնք տրուեցան դեռ նոր, մի երկու ամիս առաջ. տրուած մասնաւոր ազատութիւնը համարուեցաւ ի չարը գործ դրուած և ենթադրւում է նոր օրէնք սահմանել, որով լրագիրների ամբողջ պատասխանատուութիւնը հրատարակիչներից անցնում է տպարանատէրերի վերայ, որ նշանակում է թէ ամեն մի թերթ սեպհական տպարան պէտք է պահի, որովհետև ոչ տպարանը յանձն կառնի գրաքննչի դեր կատարել և վերջապէս ինչ միտք կայ զուտ առևտրական մի ձեռնարկութեան հետ կապել մի այդպիսի մեծ պատասխանատուութիւն։ Մենք կարծում ենք այս առաջին քայլն է նորից գրաքննութիւն սահմանելու պարբերական ժամուլի համար։

Քաղաքական կուսակցութիւնները, որոնք հոկտեմբերի 17-ի հրովարտակի հիման վերայ օրէցօր բազմանում էին և ամեն մէկն աշխատում էր աւելի ու աւելի պարզել իւր դրօշակը, բազմացնել իւր անդամների թիւը և ընդլայնել իւր գործունէութիւնը, վերջին հալածանքներից դոքա ևս կարծես հալուեցան, մէկը միւսի ետևից սկսան անյայտանալ հրապարակից և այժմ հանդիսում երևում են միայն մի քանի շատ չափաւոր կուսակցութիւններ. մինչև իսկ այն խիստ չափաւոր համարուած կուսակցութիւնը, սահմանադրական-ռամկավարականը (конституціонно-демократическая партія), որին պատկանելը պատիւ չէին համարում շատ շատերը, որի անդամներին «խուլիգան» մականունով էին մկրտում հասարակութեան մէջ և որին ջերմ կուսակից է և մեր երկրի կառավարութեան պաշտօնական օրգան «Կավկազ» լրագիրը, սկսել է վերջերս նկատուել որպէս անբարեյոյս կամ յեղափոխական կուսակցութիւն և մայրաքաղաքի թերթերից ու հեռագիրներից իմանում ենք երբեմն այդ կուսակցութեան այս բիւրօր

կան մասնաճիւղերի փակուելը տեղական ոստիկանութեան ձեռքով և երբեմն այն, այնպէս որ դեռ ևս հաստատ չի կարելի ասել, թէ կառավարութիւնը ինչ աչքով է նայում այդ կուսակցութեան վերայ, որի միակ հիմքն է Թագաւոր Կայսեր հոկտեմբերի 17-ին յայտնած և մի քանի հրովարտակներով կրկնուած անդրդուելի կամքը։

Այսպէս էր յունուար ամիսը։

Բայց, ինչպէս երևում է, ռէակցիայի գործունէութեան այս եղանակը սպասուած արդիւնքը չտուեց. երկիրը չխաղաղուեց, ամեն կողմից լսւում են նոյն սպանութիւնները, նոյն թալանները, հողային նոյն շարժումը գիւղական համայնքների կողմից և ազատարար շարժման օժանդակում է միւս կողմից մամուլը, չնայելով կատարուած անասելի ճնշումներին։

Վերջերս Պ. Բուրգում նկատում է ռէակցիայի թուլանալը. գէթ այդպէս են խօսում այն լուրերը, որոնք գալիս են վերևից, ասում են լուր կայ, որ շուտով ամեն տեղից զինուորական դրութիւնը պիտի վերացուի, գեներալ-նահանգապետների լիազօրութիւնները պիտի կարճուին, լսել ենք նոյն իսկ, որ ընդհանուր ներում պիտի լինի բոլոր քաղաքական յանցաւորներին և վերջապէս, որ ամենից գլխաւորն է, յայտարարուած է վաղուց սպասուած Պետական Դումայի Սահմանադրական ժողովի գումարման օրը-ապրիլի 27-ին։ Ահա թէ ինչ է ձայնում այդ մասին Բարձրագոյն հրովարտակը.—

«Ի նկատի առնելով, որ նահանգների մեծ մասում շուտով վերջանալու են ընտրական ցուցակներ կազմելու նախապատրաստական աշխատանքները և այդ հիման վերայ ներկայումս արդէն պարզուած է, թէ երբ կարելի կլինի Պետական Դումայի անդամների ընտրութիւնները կատարել, հրամայում ենք Պետական Դումայի գումարումը նշանակել 1906 թուի ապրիլի 27-ին։ «Նիկոլայ»։ 12 փետրուար 1906 Ցարսկոէ Սէլօ։

Իսկ նոյն օրը, մի այլ հրովարտակով փոխուած է այն օրէնքը, որով Պետական-Դումայի անդամները պիտի ընտրուէին ամեն տեղ միևնոյն օրը և թոյլ է տրուած զանազան օրերում կատարել ընտրութիւնը հնար եղած չափով։

Դումայի անդամների ընտրութիւնը կատարւում է գրեթէ ամենուրեք Եւրոպական Ռուսաստանում, որտեղից ենթադրւում է ունենալ 350 անդամ. թէպէտ վերջերս ստացուած մի հեռագրից երևում է, որ ծայրայեղ կուսակցութիւնները հրաժարւում են մասնակցել ընտրութիւններին և մտադիր են բոյկոտ հրատարակել։

Կովկասի ժամանակագրութիւնը Դուժայում որոշուած է փետրուարի 2 ին հրատարակուած հրովարտակով, որից քաղում ենք հետևեալ համառօտ տեղեկութիւնները.—

Բագուի նահանգը. Բագու քաղաքը 1 հոգի, միւս գաւառներն ու քաղաքները 2 հ. Բաթումի ու Սուխումի շրջանները՝ 1. Դաղստանի շրջանը՝ 1։ Զաքաթալայի շրջանը՝ 2։ Գանձակի նահանգը՝ 3։ Կարսի շրջանը 1. Կուբանի շրջանը և Սև ծովեան նահանգը՝ 6։ Քութայիսին 3։

Թիֆլիսի նահանգ. Թիֆլիսը 1. միւս քաղ. և գաւառները՝ 3։ Երևանի ն. 3։=27 պատգ. ընտրութիւններն սկսելու ժամանակը որոշելը թողնուած է Փոխարքայի բարեհայեցողութեան։

Թէ ինչ է լինելու իսկապէս Պետական Դուման և թէ կարող է նա խաղաղութիւն ու կարգ հաստատել ամիսներից ի վեր արեան մէջ հեղեղուող ժողովրդի մէջ, այդ մասին դեռ վաղաժամ է խօսելը, այդ կցոյց տայ մօտիկ ապագան։ Կապրենք ու կտեսնենք։

Մեր ներքին կեանքը մի առանձին փոփոխութիւն չէ ներկայացնում վերջին ամիսները. 1905 թուականը, որ Հայ ժողովրդի դժբաղդ պատմութեան ամենից սև էջը պիտի կազմէ իւր՝ հայ ազգին բերած անլուր խժդժութիւններով ու թրքական վայրագ բարբարոսութիւններով, 1906-ին ժառանգութիւն թողեց թուրքական անհատական ոպանութիւնները և դորա փոխարէն՝ հայի անվեհերութիւնն ու քաջասրտութիւնը։

Հայ գիւղացին, հայ երիտասարդը, հայ կինը, թողին իրենց մաճն ու դութանը, ասեղն ու իլիկը և անխտիր զէնք վերցրին և աշխարհ զարմացրին։ Եւ.... թուրքը զգաց վերջապէս հաշտութեան կարևորութիւնը։ Այժմ արդէն հաշտութեան դար է. ամեն կողմից հաշտութեան կոչեր.—Պ. Բուրդի հայ և թուրք ուսանողութիւնը 20 հոգուց հաշտարար պատգամաւորութիւն ուղարկեց ընդհարման վայրերը, Կովկասեան Փոխարքայի նախաձեռնութեամբ հայ-թուրքական մի համակովկասեան մասնաժողով ընտրուեցաւ, որ արդէն սկսել է իւր գործունէութիւնը ևն ևն։

Բայց մեզ համար ամենից գլխաւորը և յուսատուն այն հանգամանքն է, որ կառավարութիւնը ինքն էլ արդէն տրամադիր է երևում այս՝ անողորմ կերպով տեղի ունեցող հայկական կոտորածին վախճան տալու. Փոխարքան այդ մտքով հրահանգներ է ուղարկել գեներալ-նահանգապետներին։ Եւ այժմ արդէն,

երբ կառավարութիւնը կամք ունի վերջ տալու, մենք հաժոզուած ենք, որ այժմ, այո, կդադարի այդ կոտորածը։

Սպասենք և յուսանք։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

▬ Հայոց պրոգիմնազիա. Կովկասի փոխարքան թոյլ է տուել առևտրական կուրսերի հիմնադիր Ն. Աբրամեանցին բանալ Թիֆլիսում մասնաւոր Հայոց պրոգիմնազիա պետական դպրոցների ծրագրով, բայց բոլոր առարկաների հայոց լեզուով դասաւանդութեամբ, բացի ռուսաց լեզուից, ռուս. պատմութիւնից ու աշխարհագրութիւնից, իսկ առանց որևէ իրաւունքների։

▬ Երևան քաղաքի հայ և թուրք ազգաբնակութեան լիազօր ընտրեալները 1906 թուի փետրուարի 13-ին կապել են իրենց մէջ դաշնագրութիւն նոր յարձակումների առաջն առնելու նպատակով։

▬ Պետերբուրգի հայոց եկեղեցիների խորհուրդը վճռել է Կովկասի հայոց աղէտներից վնասուածների օգտին յատկացնել 100,000 ռուբլի, որպիսի որոշումը արդէն հաստատել է թեմի Առաջնորդ Տ. Ներսէս արքեպիսկոպոսը։

▬ Անցեալ համարում մենք յայտնել էինք, որ Հ. Բենիկ վարդապետը նշանակուած էր Թիֆլիսի կոնսիստորիայի գործերի վերայ քննիչ. սինոդի այդ կարգադրութիւնը անմիջապէս փոխուեցաւ Վեհի հրամանով և Հ. Բենիկը ուղևորուեց իւր պաշտօնատեղին՝ Բիշնև։

▬ «Новое Обозрѣніе» լրագիրը գեներալ նահանգապետի կարգադրութեամբ դադարեցրած էր յունուարի 24-ից մինչև փետրուարի 15-ը, որից յետոյ թերթը սկսաւ կանոնաւոր լոյս տեսնել։

▬ «Դիտակ» շաբաթաթերթի վերջին համարներում, որ հրատարակւում է Թիֆլիսում պ. Հայկ Տէր-Աստուածատրեանցի խմբագրութեամբ «Մատենագէտ» ամսագրի փոխարէն, հրատարակուած են մի շարք մերկացումներ մեր հինաւուրց Դպրոցի՝ Ներսիսեան ուսումնարանի մասին, որոնց վերայ հրաւիրում ենք Դպրոցի ս. Նախագահի և Հոգաբարձութեան ուշադրութիւնը։

▬ Թիֆլիսի քաղաքային դուման իրաւասու պ. Ա. Բաբեանի առաջարկութեամբ որոշեց քաղաքային ուսումնարանները վերափոխել նախկին փոխարքայի 1881 յունուարի 13-ին

հաստատուած ծրագրի։ Դասաւանդութիւնը լինելու է մայրենի լեզուով, այն է ռուսաց զուգընթացների հետ բացուելու են ուրիշ զուգընթացներ, ուր առարկաների դասաւանդութիւնը լինելու է հայոց, վրաց և մասամբ թուրք լեզուներով։

Լրագիրները հաղորդեցին, որ քաղաքային ապահովագրող ընկերութիւնը որոշել է Ներսիսեան հին դպրոցի այրուած շինութեան համար վճարել 47,000 ռուբլի։ Կարող ենք հաստատապէս ասել, որ ընդհակառակը, ընկերութիւնը մերժել է որև է վարձատրութիւն տալ դպրոցին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ՆՇԱՆԱՒՈՐ ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ՆԱԽ. ՌՈՒԶՎԵԼԹԻՆ

«Տէր—համարձակութիւն կառնենք դիմելու ձեզի, ի նպաստ վեհ դատի մը հայցելու այն բարձրագոյն բարոյական և քաղաքական աղդեցութիւնը, որ դուք ունիք իբրև պետը Մ. Նահանգներու մեծ հանրապետութեան, եւ անձնական հեղինակութիւնը որը դուք ձեռք բերած էք շնորհիւ ձեր յարատև ջանքերուն ազգերու միջև խաղաղութիւնը պահպանելու կամ վերահաստատելու համար։

Ձեզնք տարակուսիր, որ դուք ալ մեզի պէս խորապէս զգացուած էք եղերական վիճակովը հայ ժողովուրդին, որուն ծագումը նոյն է ինչ որ մերը, և որ խաղցած է կարևոր դեր մը քաղաքակրթութեան զարգացման համար հին ժամանակներէ ի վեր։ Այդ ժողովուրդը հիմա հասցուած է յուսահատութեան և բնաջնջումի սպառնալիքի տակ է շնորհիւ տգիտութեան և բռնութեան որ անոնց վրայ կը ծանրացնեն անպատիժ կերպով՝ անոնք շրջապատող բարբարոս միւսլիւման ցեղերը, որոնք աւելի քան տասը տարի է որ հետամուտ եղած են անոնց բնաջնջումին։ Այդ դժբախտ գաւառները բնակող կամ այնտեղէն անցնող եւրոպացիներու և ամերիկացիներու վկայութիւնը, և անոնց քով պաշտօնավարող դիւանագիտական գործակալներու պաշտօնական տեղեկագրերը միաբան են այդ նիւթին վրայ, և վկայութիւն կուտան ամենէն ճշգրիտ և սրտաճմլիկ մանրամասնութիւններու։ Այս պահուս հայ ժողովուրդին համար չիկայ ապահովութիւն գոյքի, կեանքի, մարդու, կնոջ ու երեխայի պատուի, քանի որ միշտ սպառնալիքի տակն են կողոպուտի, առևանգումի և ջարդի՝ Ասիան աւերող կազմակերպուած աւազակներու երեսէն։

Եւրոպայի համար ամօթ մըն է, կրնայինք աւելցնել, Ամերիկայի համար ալ, թոյլ տալ որ շարունակուի ոճիրի և անիշխանութեան այսպիսի վիճակ մը, որ, թող նորէն յիշենք, մեր սեփական քաղաքացիներուն ալ կը դպչի։ Մէկէ աւելի եւրոպացի և ամերիկացի կողոպտուած, խոշտանգուած կամ սպանուած է հափտին, քիւրտ, կամ թաթար խումբերու ձեռքով։ Այդ աւազակախումբերու գազանային վայրագութեան թողուած այդ գաւառներուն մէջ, քրօնիկ վտանգ կը սպառնայ նաև արեւտուրի, ճարտարարուեստի և մարդկային կեանքի շահերուն, որ ազգութեան ալ պատկանին բնակիչները։

«Ասոնք են, տէր, պատճառները ձեզի գիմելնուս, թախանձելով որ դուք ձեզի պատշաճ երևցած միջոցներով ու չափով, և իբրեւ հեղինակաւոր արտայայտիչը քաղաքակիրթ ազգերու կարծիքին, ձեռք առնէք խնդիրը այն կառավարութիւններուն քով, որոնց երկիրներուն մէջ վայրենութեան այս տեսարանները տեղի կունենան։ Մենք կը համարձակինք յուսալ, որ ձեր համակրանքին արտայայտութիւնը յօժարութեամբ պիտի ընդունուի Ռուսիոյ Զարին կողմէ, որ այնքան բուռն կերպով հռչակեց իր մարդկայնական մտադրութիւնները և բաղձանք արտայայտեց որ անոնք նուիրագործուին միջազգային հաւանութիւնով։ Մենք կոչ կընենք ձեզի միջոցներ ձեռք առնել Եւրոպական պետութիւններու ներդաշնակութիւն մը առաջ բերելու, ձեռք բերելու նպատակով Օսմանեան կայսրութեան հպատակներուն համար հանրային խաղաղութեան և կարգի այն վիճակը, որուն չգոյութիւնը այդ կայսրութեան գլխուն բերած է այնքան աղէտներ, սպառնալով անոր կատարեալ ջնջումի վտանգը։ Մենք խաղաղութեան մարդիկ ենք և համոզուած ենք որ ի զուր կոչ չենք ըներ ձեզ, նախատուած մարդկութեան անունով։ Այդպիսի միջոցներով մեր ընդհանուր մարդկութիւնը նոր պարտք մը ևս պիտի ունենայ ձեզի՝ եղախտագիտութեան և հիացումի»։

Ստորագրած են

Անգղիայէն 121, Ֆրանսայէն 86, Պելճիգայէն 76, Իտալիայէն 43, Տանիմարքայէն 23, Զուիցերիայէն 9, Նորվէկիայէն 4, Գերմանիայէն 2, Շուէտէն 3, Աստրիայէն 2, Հոլանտայէն 1 անձնաւորութիւններ։

«Ռազմիկ»

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Հայ ոչ-յեղափոխական ընկերութեանց վարչական ժողովներուն

Բոլոր ոչ-յեղափոխական ընկերութեանց մէջ յարաբերութիւն հաստատելու և ապագային նոյն իսկ պատգամաւորական ժողով գումարելու դիւրութիւն ընծայելու համար, Բարիզի հայ Աշխատ. Միութեան վարչական ժողովս կը խնդրէ բոլոր ոչ-յեղափոխական ազգային ընկերութեանց վարչական ժողովներէն որ, եթէ կարելի է, մինչև երկու ամիս, բարեհաճին իրեն ղրկել իրենց պաշտօնական հասցէն և մէկ օրինակ կանոնագիր։

Վարչական ժողովս հրատարակութեան պիտի տայ իրեն հասած ընկերութեանց անուններն ու հասցէներն ի գիտութիւն բոլոր միւս ընկերութեանց և պիտի ղրկէ ամենուն մէկ օրինակ իրեն կանոնագրէն։

Միութեանս հասցէն է. Mr Ie President de l'Union des Travailleurs Armeniens de Paris

96 B-d Picpus
Paris

Բարիզի հայ Աշխատ. Միութեան
վարչական ժողով

26 Յունուար 1906 թ.

ՀԱՅՆԷԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

50 տարի առաջ Փարիզում, հեռու իր հայրենիքից, վախճանուեց Եւրոպայի նոր գրականութեան հռչակաւոր ներկայացուցիչներից մէկը, Հենրիխ Հայնէն։ Մահը ազատեց նրան տառապանքի տանջանքներից։ Նրա բնաւորութիւնը երկար ժամանակ կռուում էր օրհասական տկարութեան հետ և օգտուելով ամեն վայրկեանից՝ սթափւում էր, որպէսզի նորից փայլի իր փայլով։ Զայրոյթը, սրամտութիւնը, բանաստեղծական ոգին, այս բոլորը բռնկում էին, երբ ցաւերը գէթ մի փոքր թեթևանում էին և մահուան մինչև վերջին օրերը նա չդաւաճանեց ոչ իր բանաստեղծական կոչին և ոչ էլ իր հայրենիքին։

«Թուղթ և մատիտ» ասաց նա մահուան նախընթաց օրը 1856 թուի փետրուարի 16-ին (ն. տ.). այս դէպքից 3 օր առաջ աշխատեց 6 ժամ շարունակ, բայց նրան էլ չյաջողեց իրագործել իր փափագը. գրիչը վայր ընկաւ ձեռքից, դրութիւնը սկսեց արագ կերպով վատանալ և միւս առաւօտ հոգին ուտնդեց։

Եւրոպայի զանազան քաղաքներում այսօր յիշում են տաղանդաւոր բանաստեղծին, յիշում է և գերմանացի ժողովրդի գիտակցող մասը։ Նրանք հասկանում են, որ Հայնէի անունը պատկանում է այն անունից շարքին, որոնցով պարծենում է գերմանացի ժողովուրդը։ Գերմանական գրականութեան այժմեան յառաջադէմ ներկայացուցիչները, ինչպէս օրինակ Հաուպտմանը և այլն, իրանց Հայնէյի հետևողներ են անուանում։

Եթէ Անգլիայում դեռ ևս չեն կարողանում գնահատել Բայրոնին, եթէ Բելգիայի մեռած քաղաքը յամառ կերպով հրաժարւում է իր տաղանդաւոր երգիչ Ռոդենբախից, իսկ անցեալ դարերում Ֆլորենցիան տեսական աքսորանքի դատապարտեց իր լաւագոյն քաղաքացի Դանտէին, Գերմանիայումն էլ դեռ չէ դադարել այն վէճը, թէ Հայնէն իսկապէս արժանի՞ է այդ հռչակին և ժողովրդականութեան, թէ վնասակար և անբարոյական հեղինակ է։

Այդ վէճերի շնորհիւ մինչև այժմ Հայնէին արձան չէ դրուած, մինչդեռ շատ երկրորդական գործիչներ արժանացան այդ փառքին։

Այժմ, 50-ամեակի առթիւ, Հայնէյին Գերմանիայում արձան կառուցանելու հարցը նորից է բարձրացրած։ Ցանկանք որ իրագործուած տեսնենք այդ բարի միտքը. այդ մտադրութեան իրագործելը շատ կասկածելի է թւում այն դէպքից յետոյ, երբ իր հարազատ քաղաքն անգամ մերժեց Նիր հրապարակներից մէկի վրայ յարմար տեղ յատկացնել նորա արձանի համար։

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ

ՄԱՀԳՈՅԺ

1. ԲԺ. ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆՑ

«Նոր-Դար»-ում տպուած հեռագրից իմանում ենք, որ փետր. 16-ին Երևանում վախճանուել է մեր աշխատակից բժ. Լևոն Տիգրանեանը, որ յայտնի էր որպէս հասարակական գործիչ և գրականագէտ։

Հանգուցեալը երկար տարիներ վարել է Երևանի քաղաքային իրաւասուի և Հայոց Թեմական Դպրոցի հոգաբարձուի պաշտօնները. 1891-ին ընտրուեց քաղաքագլուխ, բայց մի տարի վարելուց յետոյ աքսորուեց Ռուսաստանի խորքերը։

Գրականութեան մէջ նա յայտնի է որպէս խմբագրող «Առողջապահական թերթ» ամսագրի և իբրև աշխատակից հայ թերթերի. նա մի ժամանակ աշխատակցում էր «Մուրճին,» ուր տպեց Դէօթէի «Ֆաուստի» և «Էգմոնտի» թարգմանութիւնները, իսկ վերջին 5—6 տարի նա աշխատակցում էր «Լումայ»ին, ուր նորա գրուածներից աչքի են ընկնում Տօրկուատո Տասսոի թարգմանութիւնը և Դօրպատի հայ ուսանողների մասին իւր յիշողութիւնները, իսկ այս համարում մենք տպուում ենք նորա մի ընդարձակ «ուղևորութիւնից» մի հատուած «Մրրիկը Մասիսի վրայ», իսկ հետևեալում կտանք մի այլ հատուած «Ծիծեռնակաբերդը» վերնագրով, իսկ ամբողջ աշխատութիւնը մենք վերադարձրինք իրան հեղինակին իւր ցանկութեամբ քանի մի փոփոխութիւններ մտցնելու համար։

Հանգ. Տիգրանեանցը տպած ունի առանձին գրքերով նաև մի քանի աշխատութիւններ, որոնցից գլխաւորն է Հուգո Պոլի «Բժշկարանի» թարգմանութիւնը իւր բազմաթիւ փոփոխութիւններով ու յաւելուածներով։

Մենք կաշխատենք մի այլ անգամ երկար խօսել այդ եռանդուն և յիշատակի արժանի գործչի մասին։

2. ՄԱԿԱՐ ԵՊԻՍ. ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ

Փետրուարի 6-ին, Էջմիածնում վախճանուեց Մակար եպս. Բարխուտարեանցը։ Հանգուցեալը Արցախի Խնածախ գիւղացի էր, նա իւր ուսումն առել էր Շուշում և երիտասարդ հասակում գնացել էր Երուսաղէմ, ուր աշակերտելով հանգ. Մելքիսեդեկ արքեպիս. Մուրատեանցին՝ ձեռնադրուեցաւ վարդապետ, որից յետոյ վերադառնալով հայրենիք երկար ժամանակ քարոզչի պաշտօնով շրջում էր հայրենի գիւղերում։ Նա միաժամանակ պարապում էր և գրականութեամբ. գրած ունի մի շարք կրօնական և պատմական երկեր, վերջիններս որպէս արդիւնք իւր բազմամեայ ուղևորութեան Սիւնիքում, Արցախում և առհասարակ Աղուանից աշխարհում։ Սոցանից գլխաւորներն են «Աղուանից երկիր և դրացիք», «պատմութիւն Աղուանից» երկու հատոր, որի երկրորդ հատորը դեռ մամուլի տակ, է, «Գաղտնիք Ղարաբաղի» և այլն։ Ունի և մի քանի գրուածներ Ղարաբաղի բարբառով, օր. «Արաղը տարին կտարի» և այլն։

Մակար եպիսկոպոսը վարեց և եկեղեցական բազմաթիւ պաշտօններ, ինչպէս սինոդի անդամութեան՝, առաջնորդութեան և այլն։

ՀԱՅ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Շուշի. Ա. Գեանջեցեան.—Ձեր «Նոր կեանքի շէմքին» դրամանստացանք։ Ձեզ նամակ կգրենք այդ մասին։

Կարս. Բ. Թորոյեան.—Կարլ Կաուցկու «Ֆրիդրիխ Էնգէլսի յիշատակին» երկի թարգմանութիւնը ստացանք։

Փարիզ. Հայ Աշխատ. միութեան վարչութեան.—Ձեր կոչը տպում ենք, իսկ ձրի «Լուսայս» անկարող ենք ուղարկել և վերջապէս որ մէկին ուղարկենք ձրի. ամեն մի վճարող բաժանորդին մի օրինակի էլ ձրի պատուէր ենք ստանում. այդ մասին կարող է միայն հասարակութիւնը մտածել և ոչ մի խմբագրութիւն, որ ամենայն տնտեսութեամբ հազիւ կարողանում է ծայրը ծայրին հասցնել։

Թիֆլիս. Աբիս. Յովհ.—Ստացանք Արտուր Լէյստի «Նինօ Վարիպանիձէ» պատմուածքի թարգմանութիւնը։

Ն. Նախ.—Տ. Շողուեանց.— Ստացանք ձեր բանաստեղծութիւնը։

Ալէքսանդրապոլ. Գ. Մոճոռեանց.—Անցեալ տարի խմբագրութեանս ներկայացրած Ձեր աշխատութիւնը «Մամիկոնեան առիւծը» սկսեցինք շարել և տպել այս №-ի համար, երբ մեզ լուր տուին, որ նոյնը տպուելու է «Տարազի» այս շաբաթուայ համարում, որին նոյնպէս ուղարկած էք եղել, առանց մեզանից յետ ստանալու բնագիրը և կամ յայտնելու, որ մենք այլ ևս չտպագրենք։ Ձեր այդ վարմունքը բաւականաչափ դրամական վնաս պատճառելուց զատ խմբագրութեանս՝ դեռ ուշացրեց այս համարի հրատարակութիւնը, որովհետև ստիպուած եղանք կատարելապէս փոփոխել համարը և երկու մասուլ նորից շարել ու տպել։

«Լուսայի» խմբագրութիւնը պարտք է համարում իւր սրտագին շնորհակալութիւնը յայտնել այն ամենին, որոնք հաճել էին շնորհաւորել «Լուսայի» տասնամեակը։

Շուշի. Նիկ. վ. Տէր-Աւետիքեան. Վերջին բոպէին ստացանք Ձեր յօդուածը։ Կկարդանք և կպատասխանենք։

Թիֆլիս. Ա. Վար.-ին.—«Մշակի» այն համարը, որի մէջ թերթիս խմբագրի «գրագէտների միութեան» նախագահ լինելու մասին նկատողութիւն է եղել տպուած, խմբագրութիւնը բարւոք չէ համարել մեզ ուղարկել։ Մենք այլ ևս ոչ մի պատասխանի չենք արժանացնի նոցա, մինչև որ մեր պահանջած՝ հասարակական դրամների և գոյքերի հաշիւները չեն տայ այդ պարոնները։ Ոչ մի «մանեօվր» չի ազատի նոցա այդ պատասխանատուութիւնից։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Ռ. ԱՂԱՆԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

открыта подписка на 1906 годъ.

на газету

„Тифлисскій Листокъ“

XXXI ГОДЪ ИЗДАНІЯ

Въ 1906 году газета «ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ» будетъ выходить, какъ и раньше, ежедневно кромѣ дней послѣпраздничныхъ и понедѣльниковъ, по прежней полной программѣ газеты политико-общественной и литературной, но безъ предварительной цензуры

ПОДЪ НОВОЙ РЕДАКЦИЕЙ

и при усиленномъ и обновленномъ составѣ постоянныхъ сотрудниковъ

Выступая на защиту общенародныхъ идеаловъ гражданской свободы, новая редакція будетъ проводить на страницахъ «Тифлисскаго Листка» идею наиболѣе широкаго осуществленія въ политико-государственной жизни всей Россіи демократическаго, представительнаго образа правленія. Но своей ближайщей задачей новая редакція ставитъ служеніе интересамъ Закавказья и всѣхъ его народностей. Признавая за каждой изъ нихъ неотъемлемое право на всестороннее культурнонаціональное самоопредѣленіе, «Г. Л.» будетъ настаивать и организаціи общекавказскаго самоуправленія съ представительнымъ всенароднымъ сеймомъ въ составѣ выборныхъ делегатовъ отъ разноплеменнаго населенія края, неразрывно связаннаго съ Россіей общегосударственными установленіями и законами.

подписная цѣна

Съ доставкой въ Тифлисѣ:

на 12 мѣс.—5 р., на 11 м.—4 р. 75 к. на 10 м.—4 р. 50 к., на 9 м.—4 р. 25 к, на 8 м.—4 р., на 7 м.—3 р. 50 к., на 6 м.—3 р., на 5 м.—2 р. 50 к., на 4 м.—2 р. 25 к, на 3 м.—1 р 75 к., на 2 м.— 1 р. 50 к., на 1 м—75 к.

Съ перес. въ другіе города:

на 12 мѣс,—7 р., на 11 м.—6 р. 50 к,, на 10 м.—6 р. на 9 м.—5 р. 50 к., на 8 м.—5 р., на 7 м.—4 р. 50 к. на 6 м —4 р., на 5 м.—3 р. 50 к., на 4 м.—3 р., на 3 м.—2 р. 50 к., на 2 м.—2 р., на 1 м.—1 р.

Съ пересылкой за границу:
на 12 мѣс.—12 руб, на 11 м.—11 руб., на 10 м.—10 руб на 9 м.—9 руб., на 8 мѣс.—8 руб., на 7 м.—7 руб., на 6 м.—6 руб., на 5 м.—5 руб., на 4 м.—4 руб., на 3м.—3 р. 50 к., на 2 м.— 2 р. 50 к., на 1 м.—1 р. 50 к.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ на любой срокъ, но только съ 1-го числа каждаго мѣсяца, исключительно въ конторѣ изданія, Головинскій проспектъ № 3.

ПЛАТА ЗА ОБЪЯВЛЕНІЯ: для Закавказья за мѣсто, занимаемое строкой петита передъ текстомъ—10 коп. и послѣ текста —5 коп. Извѣщенія о зрѣлищахъ печатаются на первой страницѣ по 20 коп. за строку и на 4—по 10 коп. За объявленія въ справочномъ отдѣлѣ взимается по 8 коп. за строчку. Объявленія внѣ предѣловъ Закавказья принимаются исключительно въ центральной конторѣ торговаго дома Л. и Э. Метцль и К-° въ Москвѣ, Мясницкая, д. Ситова и въ отдѣленіяхъ его—въ С-Петербургѣ, на Большой-Морской, № 11; въ Варшавѣ, Краковское предмѣстье, № 53 по 24 к.—передъ текстомъ и 12 коп. послѣ текста.

ԲԱՑՈՒԱԾ Է ՆԵՐԿԱՅ 1906 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՂԲԻՒՐ *աղբիւրի նպատակն է զարթացնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը։ Աղբիւրը իր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է գթութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր։*

ՏԱՐԱԶ *Տարազը Աղբիւրի հասունացած սաների խնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի զգացումների թարգմանը։*

Տարազը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացողը, առաքինութեամբ օժտուած գիտութեան անշէջ լուսով զարգացած, հայրենասիրութեամբ բորբոքուած հայ անդամներ սնուցանել,

XXIV *մանկական պատկերազարդ ամսագրի* XXIV *եւ*

XVII *պատկերազարդ շաբաթաթերթի* XVII

Աղբիւր եւ Տարազ միւնոյն հասցէով բաժանորդներին ծրի տրուելու են՝ Առողջապահիկ, Գեղափնջիկ, Դաստիարակ եւ Ալիւտրասիօն, որոնց համար առանձին բաժանորդագրութիւն առայժմ իրաւունք չենք համարում մեզ բանալ, քանի որ մեր երկիրը քաոսի մէջ է։ Աղբիւր-Տարազ միւնոյն հասցէով բաժանորդ գրուողը կըստանայ հետևեալ №-ի հետ 1906 Թ. մեծադիր, հատուածական, պատի օրացոյց, բաղկացած 370 թերթից։

Աղբիւրի տարեկան բաժանորդագինը 3ր. (Արտասահման 5 ր.) Աղբիւր-Տարազ 10 ր. (Արտասահման 18 ր.) Տարազ 6 ր. Հասցէն՝ Тифлисъ, Редакція АГБЮРЪ *կամ* ТАРАЗЪ, Tiflis (Caucase) Redaction AGBUR *կամ* TARAS

Խմբագիր-հրատարակիչ Տիգրան Նազարեան.

Լոյս տեսաւ
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ
(Նկար Եղիշէ Թադէոսեանի)
իւղատիպ մեծադիր պատկերը (96×66 սանտ.)
տպուած Լայպցիգի Էմիլ Պինկաու նշանաւոր
գործարանում 14 գոյնով։
Գինն է առանց ճանապարհի ծախքի 3 ռ.

Միևնոյն պատկերը, տպուած միևնոյն դիրքով **ԿՏԱՒԻ** վերայ, վաճառւում է իւրաքանչիւր օրինակը 15 ռուբլիով։ Ցանկացողները կարող են դիմել մեզ, ուղարկելով պատկերի արժէքը։ ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ՍՂԱՆԵԱՆՑ

,,ՆՈՐ-ԴԱՐԻ"

բաժանորդագրութիւն

Թերթի վարչութիւնը որոշել է «Նոր-Դար»-ի սոյն տարուայ վերջին (հոկտ., նոյեմբ. և դեկտեմբ.) ամիսների համարները ՁՐԻ ուղարկել նրանց, որոնք ցանկանում են «Նոր-Դար»-ին բաժանորդ գրուել առաջիկայ 1906 թուականին հետևեալ պայմաններով.

1) Այժմէն 1906 թ. համար բաժանորդ գրուողը վճարում է 10 ռուբլի բաժանորդագինը և այս տարուայ համարների էքսպեդիցիայի համար 50 կոպէկ և ստանում է բաժանորդ գրուելուց յետոյ այս վերջին երեք ամսուայ ընթացքում լոյս տեսնող համարները ՁՐԻ։

2) Նրանք որոնք չեն կարող միանուագ վճարել տարեկան բաժանորդագինը, կարողեն բաժանորդ գրուելիս ուղարկել 5 ռուբլի և 50 կոպ., իսկ դեկտ. վերջումը մնացորդ 5 ռուբլին և կըստանան այս վերջին երեք ամսու ընթացքում լոյս տեսնող համարները ՁՐԻ և առաջիկայ 1906 թուականի համարները մինչև տարուայ վերջը։

Հասցէն՝ Тифлисъ, редакція ,,Норъ-Даръ".

Լոյս տեսաւ և վաճառւում է
ՊՐՕՖ. Ա. ԿՐԻՄՍԿՈՒ
ՍՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՐՀԵՍՏԻ ՈՒ ՆՐԱ ԱՊԱԳԻՆԸ
Թարգմ. Բաբգէն վարդապետի
գինն է 60 կոպ.։ Դիմել՝ Թիֆլիսի գրավաճառներին և թարգմանողին՝ Էջմիածին։

Մօտ ապագայում Թիֆլիսում կսկսեմ հրատարակել

ՀԱՅՐԵՆԻՔ

ՀԱՆՐԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹԸ

Եւ **ՀԱՅՐԵՆԻՔ** շաբաթաթերթը

հետեւեալ ծրագրով

1. Պետական կարգադրութիւններ։ Հռոգիրներ։
2. Առաջնորդող յօդուածներ հանրային հարցերին վերաբերեալ։
3. Ներքին տեսութիւն։
4. Արտաքին տեսութիւն։
5. Ֆէլիէտօն։
6. Դպրոց և մանկավարժութիւն։
7. Մամուլի տեսութիւն։
8. Մատենագիտութիւն և գրախօսութիւն։
9. Գեղեցիկ գրականութիւն և ճանապարհորդութիւններ։
10. Գիտութիւն և արուեստ.
11. Թատրոն և երաժշտութիւն։
12. Օրագրութիւն։
13. Թղթակցութիւններ։
14. Արդիւնաբերութեան տեսութիւն։
15. Տեղեկագիր։
16. Խմբագրութեան պատասխաններ։
17. Յայտարարութիւններ։
18. Պատկերներ և ծաղրանկարներ։
19. Զանազան յաւելուածներ առանձին գրքոյկներով։

ԲԱԺՆԷԳԻՆ

օրաթերթի		շաբաթաթերթի
Տարեկան 6 ռուբլի	. .	3 ռուբլի
6 ամսուան 3—50 կ.	. .	1—50 կոպ.
3 « —1—80—	. .	—75 »
1 « —75—.	. .	—25 »
առանձին համարը 3 կոպէկ.	. .	7 »
Արտասահման՝ տարին 20 ֆրանք.	. .	տարին 10 ֆրանք

Խմբագիր՝ Գիւտ ա. ք. Աղանեանց

Հրատարակիչ՝ Օր. Նուարդ Աղանեանց

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Полицейская, 7.

Թէ օրաթերթի և թէ շաբաթաթերթի հրատարակութեան վերաբերմամբ կտանք առանձին ծանուցում։